





ԴԱՅԼԵՐ

ԸՆԹԵՐՑԱԿԱՐԱՀ

# ՓԱԻՍՏՈՒ ԲԻՒԶԱՆԴ

Կ Ա Մ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍԿԶԲՔՆՇԱՊՐՈՒԹԻՒՆ

ԳՐԵԱՑ

ՀԵՆՐԻԿՈՍ ԳԵԼՁԵՐ

ՈՒՍՈՒՑՉՈՎՈՅԵ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՅԵՆԱՑ

Հ 17396



ՎԵՆԵՏԻԿ — Ա. ՂԱԶԱՐ

1896





## ՆԱԽԱԲԱՆ

ՄԵՐ ՆԱԽԱՂԻՆ մատենազիրք կամ պատմազիրք այնպիսի թանձր քօղով մի ժամկուած են .  
որ քննագառութիւնն որչափ այլ ջանաց վերցը .  
նել զայն , նորա միշտ թափուն կը մնան զեռ  
ըստ բազում տեսութեանց : Կորա անսպառ բավք  
մ' եղեր են հետազօտութեանց , որոց մէջ բանա-  
սէրք գտեր են և կը գտնեն միշտ նորանոր ու-  
սումնասիրութեան և լուսաբանութեան կարօտ  
էտեր , զրականական և պատմական խնդրոց  
նիւթեր : Սոցա թուէն է նաև մերս Փաւառա-  
նի զանգացի պատմազիր . որոյ զբութիւնն ի  
սկզբան՝ շատերուն 1 կարծիքով . շունէր պատ-  
մական այն մեծ արժեքը . ինչ որ ունէր լլ . իսո-  
րենացւոյ պատմութիւնն , մինչև ոմանք կ'ըսէին  
թէ . պէտք էր նորա պատմածները բացէ ի բաց  
և մերժել . ինչ որ յայտնապէս կ'ընդդիմանացը  
Խորենացւոյ պատմութեան 2 ո : Սոյն կարծեաց  
հետեւող կ'երեւի նաև Բազմավեցի մէջ զըս-

1 . Հ . Ա . Պատմ . Պ-Կ-Ռ . Հ-Ե-Յ . Հ-Վ-Ռ . Ա-Հ-Ե-Ռ . Բ-  
Ք-Ք . Է-Ք 745-748 . — Հ . Պ . Խնձիւ . ամեւ Պ-Վ-Ռ . Հ-Վ-Գ-Վ-Ռ .  
Հ . Գ-Վ-Ռ . Պ . Է-Ք 250-252 . — Քննասէր , և այլք :  
2 . Հ . Պ . Խնձիւ . Խոյն վերոցիշեալ տեղը :

նուած Փաւատոս Բիւզանդացի վերնագրով յօ-  
դուածի մի անանուն հեղինակն (1861 տարի,  
Էջ 53-9): Արինչդեռ քննադատութիւնն , տարուէ  
տարի յառաջելով իւր հետազօտութեանց մէջ , բո-  
լորովին կերպարանափոխը ըրաւ խնդիրը . վասնզի ,  
մինչդեռ դժբախտաբար Պատմահայրնիո շատ և  
շատ կորսընցուց իւր յարգը՝ յաշո մերազնեայ  
և օտարազգի բանասիրաց , նորա առաջնութեան  
գահը ժառանգեց Փաւատոս , որ – ի բաց առեալ  
ինչ ինչ չափազանցութիւններ ի թիւս և ի նկա-  
րագիրս անձանց և պատերազմաց , յորս մեծ  
դեր խաղացեր է իւր հայրենասիրական խան-  
դըն 1 , – աւելի արժանահաւատ կը համարուի  
իւր գրած նիւթերուն մէջ : Այս կարծիքս ունի

1. ‘Ներկայապէս’ դիտուց այն կարծիքը աւելի հաւա-  
նական թուի , թէ Բիւզանդ հայ էր ազգաւ և յու-  
նարէն գրած իւր պատմութիւնը : — Թերեւս հետաքըր-  
քրական լինի դիտել տալ ընթերցողաց , թէ Արքա-  
նութեանու Հարց մէջ անցեալ դարու վերջերէն սկսած  
(1790)՝ միշտ երկու գէմընդդէմ կարծիքներ եղած են  
Բիւզանդայ մասին : Որոնք որ ազգաւ յոյն կ'ըսեն սոյն  
պատմագրիս համար՝ նոցա պարագլուխ եղած է Հ . Ա . Վ .  
Չամչեան , որ թերեւս չափէն այլ աւելի կը յարձակի  
իւր Պատմութեան մէջ նորա անձին և գրութեան գէմ-  
իսկ որոնք որ հայ կ'ընդունին զինքը , նոցա պարագլուխ  
եղած է Հ . Վ . Խնձինեան : Այս երկու կարծիքներն ու-  
նեցեր են միշտ իրենց պաշտպանները յահորդ տարի-  
ներուն մէջ այլ , մերիդ մին և մերիդ միւսն դերադաս  
լինելով , և հասեր են մինչեւ մեր օրերը . բայց թուի  
թէ հետզհետէ աւելի կը զօրանայ առ մեզ երկրորդ կար-  
ծիքն , այս է , թէ Բիւզանդ յիրաւի հայ եղած լինի , և  
անկարելի է ժիտել , թէ սոյն կարծիքը հաստատողներուն  
փաստերն աւելի ժանրակչիո և համոզիչ են :

նուև հետեւեալ յօդուածին հմուտ հեղինակն Գելզեր<sup>1</sup>. թէ «Փաւաստափ» պատմութիւնն միակ աղբիւրն է Հայուստանի եկեղեցական և քաղաքական պատմութեան Դ. դարուն մէջ ո:

Փ. Բիւզանդաց վրաց շատերը զրեր են թէ ի մերոց և թէ յատար բանասիրաց, զորս մատնանիշ կ'ընէ Ե. Ա. և Փաւաստափի Բիւզանդ Հմուտ պրքուելին Ներածութեան Վ և VI էջե-

1. Այս առթիւ թերեւ համառօտ տեղեկութիւն մի վախճելի լինի ընթերցողաց այն հայագէտ նշանաւոր բանասիրին վրայ: — Հենրիկոս Գելզեր ծներ է ի Տերլին, յամին 1847 Յուլիս 4ին: Դեռ հազիւ երեք տարեկան՝ հայրը տարաւ զինքը Զուիցերիոյ Բաւարիէա քաղաքը, ուր յետ զպրոցական ըրջանը աւարտելու (յամս 1854—1865), եսյն տեղուց համալսարանը յահանաց 1865—1867 տարիներուն մէջ. յետոյ երթալով ի Գելզերին գէն, Հոն Կուրտիս (այժմ ի Շերլին). Առաջիկ Հերման († 1894) և Ուաշինգտ ուսուցչապետաց զաւախուսութեանց ունկնդիր եղաւ: Ի Գելզերին վարդապետական աստիճան ընդունելու համար բանամքցութիւն մըրաւ (de Branchidis commentatio): Յամս 1869—1873 Բասիլէայի կրթարանին մէջ ուսուցիչ եղաւ: յամին 1872—73 եսյն քաղաքի համալսարանին մէջ սուկական — ուսուցիչ (privatdozent) էր. մի և եսյն տարին կանչուեցաւ ի Հայուղերերդ՝ իրեւ արտաքրոյ կարդի ուսուցիչ էին պատմութեան, ուր էինդ տարի ամենայն յանողութեամբ վարեց իւր պաշտօնը: Յետոյ, յամին 1878, հառապուեցաւ Յենա քաղաքի համալսարանին մէջ՝ իրը սովորական ուսուցիչ զաւական լեզուագիտութեան և էին պատմութեան, ուր մինչև ցոյժմ կը շարունակէ նոյնը՝ ի մեծ գոհութիւն և յօդուտ իրեւն աշակերտաց, որոց մէջ գանուեր են և կը գտնուին և ո ներկայագէս հայազգի ուսանողը, զորս միշտ զովութեամբ կը յիշէր եսյն Ուսուցիչն իւր խօսակցութեանց միջոց:

բաւն մէջ : Բայց այդ ժամանակէն վերջը բանա-  
սէրք տակաւին քննութեան և ուսումնասիրու-  
թեան նիւթ ըրեր են զայն, կամ տուանձին յօ-  
դուածներով և կամ ուրիշ ազգային հեղինա-  
կաց ուսումնասիրութեանց մէջ 1. որոնք շատ

Գելզեր բազմաթիւ հրատարակութիւններ ունի զեր-  
մաներէն ըեղուա՛ այլեայլ պատմական, քննազառական  
և մատենազրական նիւթոց վրայ . չի հայուելով նորս  
զանազան հառերը և ուրիշ գիտեաց զրութեանց վրայ  
ըրած ուսումնասիրութիւնները : Յամին 1871-72 ու-  
սումնական ուղեարութիւն մ' ըրաւ ի Փոքր Ասիա և ի  
Յունաստան՝ կորստոսի, և Ստորք (Հայզերերդ) և  
Հիրշֆելդ (Անհիգարերդ) ուսուցչաց ընկերութեամբ :  
Այս ուղեարութեանն արդիւնք եղան աեղազրական տե-  
ղեկութիւնը Եփեսոսի, Պերգամոյի, Ջմիւնիոյ և Սար-  
դիկէի վրայ, ևն :

Խնչպէս շատ եւրոպացի հայուգէոք, այսպէս ոյլ Գել-  
զեր՝ անցեալ տարի (1895ի հոկտեմբերին) Վեհեամիկ  
գալով՝ այցելեց ի զան մեր և օրերով մեզի հետ անցուց,  
որուն զուարթ, ընտանի և համեստ թեաւորութիւնն այն-  
չափ գրաւեց զմեզ՝ որչափ իւր զարմանացի հմտութիւնն  
Մասնաւորապէս զբազեցաւ նոյն օրերուն մէջ նիւզան-  
գայ պատմութեան զրչազրաց բազգաւորութեամբ . Կմա-  
նապէս Նիկիիոյ ժողովոյն Հարց անունները, և Քրիս-  
տոսի եօթանառան և երկու աշարկերուց անուանց ցու-  
ցալը որինալեց Յայտմաւորներէն և Միքայէլ ատորւց  
ձեռագրէն : Այս բազմաթիւ գրուածներէն մի քանին  
յիշենք, որոնք մեր ազգային պատմութեան կամ զրա-  
կանութեան հետ կապ ունին . Ա. «Գէորգայ կիորացոյ  
նկարագիր հոգմէական աշխարհին» (Georgii Cyprii  
descriptio orbis Romani. Leipzig, 1890). Բ. «Դի-  
ցաբանութիւն Հայոց» (Die armenische Mythologie),  
և Գ. Ներկոյ գրքոյն (Die Anfänge der armenischen  
Kirche).

1. Հ. Բ. Սարգսյան՝ Արքաներու և իւր բար-  
ժարդարն իւրական գրքին մէջ . Հ. Յ. Տաշիրյան՝ Ա.

կը տարբերին նախորդներէն՝ իրենց յայտնած  
և քաւական համազիշ փաստերով ցուցած նորա-  
նոր կարծիքներով։ Այս մէջ թերեւ ամենէն  
աւելի նշանաւորն է Գեղղերի գրքոյկն, որ ժա-  
նօթ է արդէն զրեթէ ազգային շատ բանափ-  
րաց, այլ ոչ բռլոր փափաքոզաց անշուշտ։ բազ-  
մաց անմասչելի լինելով լիզուն։ Թերթերէն ո-  
մանք յոկ համառատ ակնարկ մ' ըրբն նոյն զրո-  
թեան, այլք՝ հազիւ թէ յիշատակութիւն մ'ը-  
րին։ բայց եզան որիներ այլ՝ որոնք այլեւայլ  
զիտորութիւններ զրեցին ի նպաստ կամ հա-  
կառակ, և կամ քազուածորէն հրատարակե-  
ցին։ համառատերով նոյնը 1։ Բայց որովհետեւ  
անկարելի էր այնու մանրամասն տեղեկանալ  
հեղինակին բոլոր կարծիքներուն և փաստերուն,  
տեղորդ չի համարեցանք թարգմանել զայն  
ամբողջութին, հետեւելով հաւատարմաքար բռ-  
լոր իմաստներուն։ Այս զրութեանս կարես-  
րութիւնն անոր մէջ է, որ մեր եկեղեցական  
և մասնեազրական միջին կէտերը կը ջանաց-  
լուսարանել, իրեն զիտուոր հիմն տուած բիւ-  
զանգայ գիրքը, թէ և իւր բոլոր կարծիքներն  
և տեսութիւններն ընդունելի լինին ամենուն


1. Lamb Pumping-brake, and the like; - p-24. 1893. 92 A.  
95. Lamb Pumping-brake. Id. f.

Համար: Նորա մէջ քանուած կարևոր դիտեցի  
կէտերը հետեւալքն են. ա. թէ Փաւառոս հայ  
էր ազգաւ և Ասհառունեաց ցեղէն. թ. Նա  
եկեղեցական քառակարգի կը վերաբերէր՝ հա-  
կառակ Պ. Էմինի կարծեաց. զ. Պէտք չէ շփո-  
թել Փաւառոս պատմիչը համանուն եպիսկոպո-  
սին հետ (յայտմ համամիտ է և Պ. Էմին). դ.  
Դ դարուն վերջերը զրած է նա խոր պատմո-  
թիւնը. ե. Հետեւաբար նախ քան զզիւտ հայ  
տախոց, որով և օտար լեզուավ. զ. Այդ օտար  
լեզուն հարկ էր որ յունարէն լինէր, ոչ եթէ  
զրականն՝ այլ ռամիկ և գործածական լեզուն.  
ե. Հեզինակն՝ բաց ի թագաւորական դիւան-  
ներէ՝ օգտուեր է մեծաւ մասամբ ժողովրդա-  
կան երգերէ և զրոյցներէ, և ուրիշ ասօնց նը-  
ման հետաքրքրական խնդիրներ. որոց մէջ շատ  
տարօրինակ է այն կարծիքը, իրր թէ Ս. Լու-  
սաւորիշ Անակայ որդին չէր՝ այլ հին հեթանոս  
քրմերու ընտանիքէ սերած: Բայց ամենէն ա-  
մելի կարևոր կէտը, որ և զուցէ բովանդակ  
զրութեան նորատակը կը կազմէ, այն է՝ թէ  
Ս. Լուսաւորիշ Վաղարշապատի մէջ չէ հիմնած  
նախսին ազգային մայր եկեղեցին, այլ Տարօ-  
նոյ Աշտիշատ քաղաքին մէջ. զայս կ' ապացու-  
ցանէ Բիւզանդայ վկայութեամբ, որ կ' ըսէ-  
ս Զայնու ժամանակաւ երթեալ հասանէր եպիս-  
կոպոսապետն Վրթանէս ի մեժն յառաջին ի  
մայրն եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տա-

թօնու 1, և ն ո . և փոքր ինչ յետոյ կը յիշէ քազագին անունը՝ Աշոիշատ : Իրողութիւն մ' է այս - ոչ ամենուն ախորժելի - պատմական փառաերավ հաստատուած , որ իրմէ նախորդ զիտնոց տեսութենէն վրիզեր էր , և որով կը տապալին շատ մի երեակայեալ շենքեր . շափաղանց պահանջներ , կարծեցեալ իրաւասութիւններ . . . :

**Հ . Յ . Վ . Թ Թ Ո Ր Պ Ո Ւ Ե Ա Բ**

4 . Փ . Բ Ա Կ . Գ Ա Ջ . Գ . Գ Լ . Գ . Է լ 7 .



## ՓԱՀԱՏՈՒ ԲԻՒԶԱՆԴ

ԿԱՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍԿԶԲՆԱԽՈՐՈԽԹԻԾ



**Ք**ԱՀԱՏՈՅԱԿԱՆ ՊԱՍՈՅ Նշանաբանն, ո ոչ  
ձրշալիք էթի սքաւելու — Հիմ սովորոյրը հաս-  
տառութիւնը կայցեն » , բուռն կերպով կ'ընդ-  
դիմանայ սպատմական զարգացման մ' ընդու-  
նելութեան : Այսու տեսութեամբ, կրօնական  
հասարակութեան մի հիմնադիրն, կը հաս-  
տառէ անփոփոխ կերպով, նոյին իսկ հիմնա-  
զրութեամբ, բոլոր անպատճին լինելիք կա-  
նոնազրութիւնները և ուղղութիւնները՝ ամե-  
նայն ժամանակաց համար : Հետեարար յա-  
ջորդներուն ուրիշ բան չի մնար ընել՝ բայց  
միայն երթալ հաւատարմաբար միւնոյն հե-  
տոց վրայէն, և չի հեռանալ բնաւ ի փո-  
քունս անգամ հիմնազրին հաստատած կա-  
նոնազրութիւններէն : Աստուածաշնչի սպատ-

մազրութեան մէջ տիրապետող այս ըմբռնում՝  
մովսիսական նուիրապետութիւնը դրաւ իրրու-  
հիմնական հաստատութիւն մի երրայական  
հնութեան, ինչպէս որ կազմուեցաւ գերու-  
թենէն վերջը, և ըստ այսմ՝ ժողովրդեան  
պատմութեան սկիզբը դրաւ՝ ի՞նչ որ նորա վախ-  
ճանը կը կազմէ<sup>1</sup>: Այս կերպով Ժամանակա-  
զրութեան<sup>2</sup> հեղինակէն ճշմարտանման յարգա-  
րեցան այն բոլոր պատմական հին և լաւագոյն  
զրոյցները, որոնք կը հակառակին այս քա-  
հանայական ենթադրութեանց. և այսպէս  
պատմական պատկեր մի ձեւացաւ, որ ստու-  
գիւ համապատասխանեց յետագայ սերնդոց  
զաղափարաց շրջանակին՝ այլ ո՛չ իրական դէպ-  
քերու: Ճիշդ այդ սկզբանց համեմատ կը  
զոնենք նաև հայկական եկեղեցւոյ պատմու-  
թեան սկզբնաւորութիւնը, որ յետոյ կեր-

1. Կը կանխենք ըսել՝ թէ այն ամէն քացատրութիւնը, ուր Աստուածաշընչի կամ սրբազն հեղինակաց մասին կը խօսուի. իբր լոկ մարդկային պատմիչ նկատելով զիրենք, անընդունելիք են մեզ. զի նորա՝ Հոգւով Արբով լուսա-  
ւորեալք՝ աստուածային ներշնչութեամբ դրեցին այն  
գրերը, և ոչ ոք ըստ քիմն չի նարեց կամ չի փո-  
փոխեց աւանդութիւնները, ինչպէս փոքր ինչ յետոյ  
կակնարկէ հեղինակն:

Եր. թ.

2. «Ժամանակադրութիւն» ըսելով կը հասկնայ այս  
աեղ հեղինակս ԱՆ-Չ-Չ-Չ-Չ գիրը, ինչպէս կը կոչէ  
զայն Ա. Հերոնիմոս:

Եր. թ.

սպարանափոխ եղաւ և ճշգեցաւ ապագայ պատ-  
 միչներէն։ Բայ այսմ Գրիգոր Լուսաւորիչ՝  
 իրը երկրորդ ոմն Մովսէս կը ներկայանայ  
 մեզ, որ ոչ միայն քրիստոնէական հաւատքը  
 բերաւ իւր ազգին, այլ կ' բռուի՛ թէ բովան-  
 դակ նուիրապետական կարգը և եկեղեցական  
 կանոնագրութիւնները ինքն հաստատած լինի.  
 և հայկական ազգային եկեղեցին այն կար-  
 ծիքն ունի՛ թէ սոյն եկեղեցական կարգերն,  
 զորս հաստատեր է իւր հիմնագիրն, անփո-  
 փոխ մնացեր են մինչեւ մեր օրերը։ Բայց  
 կրնայ ցուցուիլ, թէ այդ կարծիքը շատ ամ-  
 փոփ մտօք ստոյգ է։ Վասն զի նախկին հայ-  
 կական եկեղեցին խոր անդնդով մի անջա-  
 տուած է վերջին ժամանակաց եկեղեցիէն։  
 Հայ զրականութեան մէջ Ոսկեդար կոչուածն,  
 մեծամեծ թարգմանիչներու ժամանակն, Ե-  
 ղարու առաջին կիսուն՝ զօրաւոր փոփոխութիւն  
 մի յառաջ բերաւ։ Յունական ազգեցութիւնն  
 յայտնուեցաւ բռուն թափով մի, և հայկա-  
 կան ազգային եկեղեցւոյ գերազանց կերպով  
 յատուկ բնաւորութիւնն փոխակերպեցաւ՝ զրա-  
 ցի յօյն և ասորի եկեղեցական հասարակու-  
 թեանց նախատիպ օրինակին համաձայն։ Ա-  
 ղուց արգէն, Դ զարու կիսուն, երիտասար-  
 դական աշխուժիւ վառուած Ներսէսը փորձեր

էր ընել սոյն կերպարանափոխոթիւնը . սա-  
կայն չի յաջողեցաւ . որովհետեւ շատ քիչ կա-  
րեւորութիւն տուաւ նա իւր հայրենակցաց ազ-  
գային անկախութեան սաստիկ զարդացոծ ըզ-  
զացմանց , զոր ունէին նորա նոյն իոկ եկե-  
ղեցական իրաց նկատմամբ : Խրեն որպին ,  
մեծն Առհակ , աւելի ապահով կերպով հա-  
սու իւր նպատակին , ազգային ձկառումներու  
մասին ունեցած խոհական հեռատեսութեամբ  
և զգուշաւոր բնիթացրով : Բայց այդ տիրա-  
պետով ուզգութիւնն սաստիկ յեղաշրջութիւն  
մի յառաջ բերաւ հին պատմութեան՝ ըստ տե-  
սութեանց նոյն ժամանակիներուն , և ըստ այնմ  
յաճախ տարրեր կերպով մեկնեց և խանգա-  
րեց իրական զեպքերը . և այսպէս ուրեմն  
հին ժամանակաց եկեղեցւոյ զեպքերուն բոլո-  
րովին նոր կերպարանը մը տուաւ : Բայց ինչ-  
պէս որ երրայտկան աւանդութիւնն այնպէս  
չի կերպարանափոխեցաւ յԵրկրորդ Օրինաց և  
Քահանայտկան զրոց՝ հեղինակէն՝ որ հին սույզ  
պատմական աւանդութենէն բնաւ մնացորդ-  
ներ չի գտնուին , այնպէս եղաւ նաև Հայաս-

1 . Այս պիրքու պէտք չէ չփոթել Հնգամատենին  
Կեռական զրոց հետ ներկայ բանաւերը այդպէս կը  
կոչեն զայն , զի քահանայից յառուկ պարտքերը և զո-  
հերու աշարողութիւնները կը բռնանգակէ :

տանի մէջ : Այս անմիաբանութիւնն՝ որ կայ  
ընդ մէջ բազմաթիւ մնացորդաց աւանդու-  
թեան և ընդ մէջ զործածական և յօրինուած  
պատմութեան, կ'ապահովէ նոցա ճշղութիւնը :


Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութեան  
ստոյգ պատմութիւնը ճանչնալու համար՝ հարկ  
է անաշառ բաժանում կամ ընտրութիւն մ'ը-  
նել աղքիւրներուն :

Ազաթանգեղոսի և Փաւստոսի տեղեկու-  
թիւնք գերազանց են այս մասամբ մեզի հա-  
մար : Ա. Գուշշմիդ իւր բրած տսումնա-  
սիրութեան մէջ Ազաթանգեղոսի պրայ (Kl.  
Schr. III. 339—420), որ այս անուամբ  
հասեր է ձեռքերնիս, և է պատմութիւն Տըր-  
դատ թագաւորին և Ա. Գրիգորի, ամենա-  
խիստ քննութեամբ մի աղքիւրներու՝ քա-  
զուածոյ հաւաքեր է երկայն և շարայարեալ  
պատմութիւն մի, զոր ինքն կը կոչէ « Վարք  
Ա. Գրիգորի » : Այս տեղ կը գտնուին Հայաս-  
տանի գարձին և այնուհետև պատահած զէպ-  
քերու մանրամասն տեղեկութիւնքը, զորս ինքն  
բառին յատուկ իմաստովը պատմական կը  
կոչէ . և իրաւամբ Ազաթանգեղոսի այս մասն  
կընայ իրք բացարձակ արժանահաւատ աղքիւր  
համարուիլ : Ուստի հին հայկական եկեղեցւոյ  
պատմութեան հիմնական խնդրէ մի յառաջ

կու զայ ամենակարևոր՝ և մանաւանդ թէ ո-  
րոշիչ հետեւանք մի, զոր ասկային Պատշմիդ  
շէ հանած :

Չորրորդ զարու պատմաւթեան համար, ՏԵՐ-  
ՊԱՏԱՅ մահուընէն սկսեալ մինչեւ թագա-  
ւորութեան բաժանումը, Փաւստուի պատմա-  
կան գործն առաջին կարգի պատմական աղ-  
րիւր մ'է : Այս նոյն խոկ մեր ժամանակ-  
ները, մինչ վազուց արգէն հեղինակաւոր բա-  
նառէրք հաստատեր են նորա արժեքը, հին հայ  
զիստականաց շարամիտ քննազատութեան հե-  
տեւանքն զգալի կը լինի : Յիբաւի շատ զար-  
մանալի է, որ Փաւստուի անձնաւորութեան  
մասին եղած միակ վաւերական տեղեկու-  
թիւնը, զոր կու տայ ինքն խոկ Փաւստու  
իւր անձին վրայ, Հ. Գարեզին և Էմին այ-  
լայլած և խանգարուած կը համարին : Փաւս-  
տոս յիշելով այն իշխանները, որոնք նորըն-  
տիր կաթողիկոսին Յուսեկան ուղեկիցք եղան  
մինչեւ ի կեսարիա, նոցա մէջ վերջընթեր  
տեղը (Գ. Ժ. Ֆ.Բ.) կը յիշէ<sup>1</sup> . և լու զմերոյ տոհմի

1. Եջ 29. ազագը. Ակնեակոյ. 1889: — Արդի-  
նաւոր է գերմաններէն թարգմանութիւնն Ա. Լաւերին  
(Կոլտսիս 1879), առկային երրեան մեծամեծ վրիզակաց  
մէջ կ'ինկնայ թարգմանիչն . ինչպէս, օրինակ, ու կ-  
զրէին զայս մէջ-ը (Կոտորացի) արբային ու (Դ. Ե.)  
Խոսքերը կը թարգմանէ գերմաններէն (Եջ 65). « և Ա. Ա-



(ազգի<sup>2)</sup>) իշխանն Ամառունեաց » : Ասոյդէ թէ բոլոր միւս իշխաններն իրենց անուններովը կը յիշատակուին պատմըչէն . բայց բոլորովին հակառակ է ողջամիտ քննազատութեան , ըսել՝ թէ խանզարուած են այդ եր-

որինեան (!) նոտարը , որը առաջի արքայի կային և արձանագրէին զայն » : Մինչդեռ մէհ-ը բառն հասարակ յուն . Ծյութաքրօւութեան է , նոյնանիւ ընդ Ծյութօգրաքրօւութեանին , զոր թէպէտ չեմ կրնար ապացուցանել , սակայն ըստ բաւականի կը հաստատուի համեմատութեամբ ընդ ծեստեքրօւութեան , ձաշքրօւութեան , որոստաքրօւութեան , և այլ բառից (Հ . Ուսներ . Ա . Թէոդոս . էջ 197) : Նոր-ը-շէ մեկնաբանութիւնն (glossae) չառ հետաքրքրական է , վասն զի յոյն-հոյներէն մեկնագրէ մի առնուած է այն , յորում կը կարգացուէր անուշատ . Ծյութաքրօւութ-շէ . հմմա . G. Goetz : Corpus glossar . Lat . II . S . 450 : Ծյութօգիքքօւութեան . Եզակի ուղղական ձեռն նոյն բառին , զոր մեկնիւն անփոփոխ պահեր է մեկնագրի մէջ զատածին համեմատ , վրան զրեր է և ապա բնազրին մէջ մասեր է :

Լաւէր յէջ 60 (Դ . Դ) 'ի ձեռն մեծին Պետրոսի կրկին անդամ 'ի կեանու կը վերակոչէ զլոյժեթիկ , սորս ուղարմածութեանց և սիրալիր կարեկից դժոյն համար . Այժեհու = Ճօրհաւ . — Կ'երեի թէ թարգմանչին ժանոթ չէ Գործք Առաք . թ :

Նաև նոյն իւղէ ներբինւոյն վրայ ևս նորօրինակ զադամար մ' ունի , էջ 245 , այս բառերով . « Այլ Յովհաննէս եպիսկոպոս , որդի պահապանի կանանցի Փառհնի » , ևն . մինչդեռ մենք կը կարդանք , Եւ . Բ . « Այլ Յոհան եպիսկոպոս , որդի Փառինայ հայրապետի » :

2 . Հայկական պատմչաց հրատարակիւք յիրաւի դեռ ևս բանասիրական զրութեան տղայական տեսակիւտին վրայ են , և ամեններն գաղափար չունին բնազրի գիտական քննազարտութեան վրայ : Եւ զրեթէ ԺԷ և ԺՈ զարուց թեսեղիտեանց նշան կը հրատարակին զա-

կու հասկանալի բառերը, պարզ անոր համար որ իրենց գաղափարներուն հետ չեն համաձայնից, փոխանակ անուան պահասոթիւնը ենթադրելու : Տարօրինակ է այն յամառութիւնն՝ որով կ'ուզեն ոմանքը յոյն ընել ըդգաւառոս. ահա լամինի խօսքերը, որ սակայն չէ կարող մերժել բոլորովին այն տեղելութիւնը՝ զոր ինքը կառկածելի կը համարէր. և զենք կրնար ըսել թէ արգեօք հօք կողմանէ թէ մօք կողմանէ . կը պատկանէր նա

նուիք : Այսան զի պարզապէս ո՛ք և է ձեռազիք մի կը յանան ազագրել, և եթէ հաճին, ՚ի ներքը (իշից) կը յաւելուն քմանացոյ ընարութեամբ միւս ձեռազրաց զանազն ընթերցուածները : Այդ այս ընթերցուածք կը մտնեն ՚ի ազագրին, Օբն-է կամ Յեր-ու-օբն-է այդին բառերով, այնպէս որ՝ այդ ժանօթութեամբը և ոչ իսկ զազափար մի կ'առնուի խօսքանիքը ձեռազրաց բնագրին հանգամանաց վրայ : Փաւառոսի մէջ կը տեսնենք՝ որ նորա բնագրին խանգարուեր է ամբար. մեկնաբանութեամբը (Glosseme) . իսկ միամիտ տպագրողք անշփոթ այդ խանգարութեամբը բնագրին մէջ անցուցեր են : Այսպէս, որինակ իմ, յոյն բառից հետ զրուած են կանոնաւոր կերպով 'ի բնագրին' չին զիստու ընթերցողի մը մեկնագարար զրած բառերն են. զոր որինակ, (միշտ փակագծեալին են յաւելուածք), Դ. Գ. - Հե-յն-Յ. - Ե-ր-ո-Պ. (Ե-ի-ւ-ը-ը-ը) և - Պ-ւ-Պ+ . — Պ. Ը. 'ի Հե-յն ( - Պ-ւ-Ը- - - - ) - Ե-ր-ո-Պ+ - - Ե-ր-ի-ւ-Պ-ւ-Ե-ի-շ : Նոյն իսկ հայկական բացարութիւնը կը պարզուին, և ի բնագրին միամին կը զանուի նաև մեկնութիւնն. այսպէս . Պ. . Ե էջ 10 . և բն- (Ե-ր- - - - Ե-ր-ի- - ) Ե-ր- - - Ե-ր- - - , մինչդեռ Պ. . Ե. էջ 11 ուղղագոյն է . և բն- ին Ե-ր- - - Ե-ր- : Այդ աեցու արժանի է զիստութեան, վասն զի Միս-

այս երեւլի ազգատահմիս<sup>1</sup> ու Բայց այնու՝ զի  
Հայք. Եթելիացոց նման իրենց ազնուակա-  
նութիւնը մօրերնէն չէին առնուր, այդ են-  
թազրութիւնն կը կորսընցունէ իւր արժէքը:  
Ապա կը հաստատի այն՝ թէ սուսզիւ Փաւ-  
ստո Սահառունեաց<sup>2</sup> ցեղէն էր։ Շատ ուղիղ

4. Langlois: Collection des historiens anciens et modernes de l'Arménie I. S. 204.

2. Հայկական անուանց գրութեան մէջ՝ Հերքանի գրութեան հասեցաց, թէ և այլով մասամբ չառ թէ, բայթինեաբ ունի և մեծամեծ զժուարութեանց կը պա-

է իշխնի կարծիքը, որով կը ցուցնէ թէ Փաւուտոս պատմիչն բոլորովին զատ անձնաւորութիւն է և պէտք չէ շփոթել համանուն եղիսկուկոսին հետ. բայց կը սխալի նա, երբ կը կարծէ՝ թէ Փաւուտոս պատմիչն ձեռնադրութիւն առած չէ. մինչդեռ բովանդակ գրուածն կը հաւատաէ մեզ, թէ հեղինակն ինչ մեծ մասն ունէր այն բոլոր նուիրապետական կոիներուն մէջ : Մարդ մի, որու համար այնքան կարեւութիւն ունէ ին եկեղեցւոյ շահերն և խնդիրներն, անսարակոյս պէտք էր եկեղեցական դաստիարակին պատկանիլ, չի նկատելով և այն սկարագայն՝ թէ Դ. և Ե զարերուն մէջ ի Հայաստան շատ զժուարին էր որ եկեղեցականներէն դուքս մէկը գտնուէր, որ այնքան ուսումն և զիտութիւն ունենար՝ որով կարենար իրը մատենագիր ներկայանալ : Ուրիշ աւելի կարեւոր սկարագայ մի ես. — Փաւուտոս եղիսկուկոսին ամենասերտ մտերմաւթիւն ունէր Ներուէս կամ

առանձնը, մասնաւորապէս և և չ առաները զրելու համար : Բայց առափ, միակ դիտական զբութիւնն՝ զորկարեցի էր նկատութեան անուոյ, այն է՝ Լոգարդի զրութիւնն բոլորովին անզործազրեցի է իրեն անուշ զութեանց համար : Ամենուն ժանութ անուշեանց համար, ինչպէս են՝ Խոսրով, Խորեն և այլն, փոխանակ գիտական բայց օտար X զրին՝ ես Ch զործածեցի :

թողիկոսի հետ, մինչ ընդ հակառակն մեր հեղինակը պէտք է որ սակաւ մի յետոյ լինի այն ժամանակէն՝ յօրում ապրեցաւ եկեղեցւոյ այս իշխանը. ապա թէ ոչ՝ պիտի չկարենայինք մեկնել այն բազմաթիւ ժամանակազրական և ուրիշ տեսակ վրիպակները, որոնց մէջ կ'ինկնայ յաճախ Ա. Ներսիսի նկատմամբ :

Այն զրբիս տպագրութիւնը հետեւալ վերնազիրն ունին, անշուշտ ձեռագիրներէն առնըլով, և Բուզանդարան պատմութիւնը ։ Մեկնութիւն և Բիւզանդացւոյ պատմութեանց (Խորօք! Ա.) մարզու միտքը չի գոհացներ բնաւ, և Բիւզանդացւոյ կամ Բիւզանդեայ բառերուն կըսպասուի։ Խմինի խօսքերն այս մասին բաւական գոհացուցիչ չեն (Այն. Էջ 205). և Պըտրախուտարար կորսուեր են ձեռագրաց մէջ այն տասը տուները, որոց մէջ Փաւստոս՝ Դ զրբին վերջը՝ իւր անձին վրայ տեղեկութիւններ տուեր էր ։

Ե զարուն վերջը ապրող՝ արժանահաւատ պատմիչներէ միոյն՝ Պազար Փարսկեցւոյ տուած տեղեկութիւնը Փաւստոսի մասին շատ յարգի են։ Նա Փաւստոս կամ Փաւստոս Բուզանդացի կը կոչէ զինքը (յէջ 2, 44, 44, տպագր. վեհետկոյ, 1873) և յայտնապէս կը նշանակէ զրբին անունը «Հայոց

պատմութիւն » (Ն. էջ 2): Եւ ճիշդ այն  
տեղեւն ուրել կու տայ Փաւոսոսի պատմու-  
թիւնը՝ ուր որ Ազաթանգեղոս կը զազրե-  
ցունէ<sup>1</sup>, և անոր զրուածոյն համառօտ՝ բայց  
ամրողջական ծանօթութիւն մի կու տայ:

Գործոյն տարօրինակ բաժանումը կամ  
թռւարկութիւնը, որ կը բովանդակէ շորս զիրք  
կամ Դարրութիւնը, ինչպէս կը կոչէ ինքը,  
Գ. զրքէն սկսելով մինչև Զ ի միասին, այլևայլ  
ենթազրութեանց պատճառ եղեր է: Այնշափ  
աւելի անծանօթ է մեզի երկու առաջին զրոց  
բովանդակութիւնն, որշափ զի նոյն իսկ Դ.  
Փարագեցի նոյն շափով և բովանդակութեամբ  
տեսներ է նոյն զիրքը՝ ինչպէս որ ունինք մենք  
ներկայապէս: Արդ կը մնայ քննել թէ ար-  
դեօք Փաւոսոս հայերէն զրեց իւր զործը, թէ  
յունարենէ թարգմանութիւն է:

Այդ ինզիրը շուտով չի լուծուիր: Այն

1. Ինչպէս հասկնալի է, Փաւոսոս չէր կարող շա-  
րունակել Ազաթանգեղոսոի պատմութիւնը, քանի որ  
վերջինս իրմէ կէս գար վերջը զրուեցաւ: Լազարդ կ'հե-  
թագրէ փախանակ Ազաթանգեղոսոի՝ ուրիշ ասորերէն  
լեզուով բնադիր մի: Բայց յայտնապէս սխալ է այս:  
որովհետեւ չայառառնի գարձին պատմութեան զիրքը  
հասեց է ձեռքերնիս: բայց կարելի է թէ « Վարչ Ա-  
Գրիգորի » կոչուածը, զոր հաւաքեց կամ ձեւցուց  
Գուտշմբիդ և անգրամկան ժամանակամիջոցին խմբա-  
զրուած է, ասորերէն լեզուով զրուած լինի:

յունարկն բառերն , որոնք հեղինակին պրո-  
թեան մէջ կը գտնուին , ինչպէս են օտքապոց  
(սատրապք , Դ. , Գ.) , սրատղլաւոց (ստրատե-  
լատուրիւն , Դ. , Բ) , ձրշճճօչօս (որբոդոքս , Դ. , Ե  
և Ը) ոչինչ կ' ապացուցանեն . որովհետեւ կրնան  
զիւրաւ մեկնուիլ այն սերտ յարաբերութիւն-  
ներով , որք կային հոռվմէական կայսերութեան  
և Հայաստանի մէջ՝ չորրորդ դարու առաջին  
կիսուն :

Պրոկոպիոս կը վկայէ՝ թէ կար Փաւստոսի  
զործը յունարկն լեզուով , և Պարսկական  
պատերազմին մէջ Ա. , 5 (Էջ 26 , 44—30 ,  
23) յառաջ կը բերէ երկու կտոր , որը ճշդիւ  
կը գտնուին Փաւստոսի մէջ (Դ. , ԾԲ—ԾԴ և  
Ե. , Ե) : Պրոկոպիոս կը կոչէ զայն « ն տῶν  
Αρμενίων ἵστορία » (26 , 8) և կամ « ն տῶν  
Αρμεնίων συγγραφή » (30 , 20) , որ է՝  
Հայոց պատմուրիւն : Պիտելու է որ ճիշդ  
Դազար Փարավեցոյ տուած վերնագիրն է : Առ-  
կայն Պրոկոպիոսի զբքին մէջ գտնուածն հա-  
րազատ բնագիրը չէ , այլ քաղուածոյ մ' է՝  
փոփոխուած և յարմարցուած ընթերցողաց  
ճաշակին , որոնք նոյն ժամանակի յունական  
իմաստակութեամբ կը խորչէին ո՛ւ և է բար-  
բարոս կամ օտար իրերէ . ուստի և պատ-

միշն կը զգուշանայ խորթ անուններէ , և մերթ փոքրիկ անճղութեանց մէջ ևս կ' ինկնայ : Պրոկոպիոսէն չենք կրնար որոշ եղբակացութեան մի հասնիլ , թէ յունարէն բնագիրը արդեօք հարազատ սկզբնագիրն էր՝ թէ լոկ հայերէն բնագրին քաղուածոյ մի :

Փաւոտոս սակաւ մի յետոյ , Գ. զայրութեան վերջը , մեզի կարեոր տեղեկութիւն մի կու տայ (էջ 58) . « Կատարեցաւ երրորդ դարք <sup>1</sup> , քսան և մի սպատմութեանց զայրութիւնը , ժամանակագիր կանոնը <sup>2</sup> փախըտեայք <sup>3</sup> Բիւզանդեայ ժամանակագիր մեծի սպատմազրի , որ Էր ժամանակագիր Յունաց » :

Այս տեղեկութիւնը կը հատառուի նաև Ղ. Փարապեցոյ տուած ծանօթութեամբ Փաւոտոսի մասին : Նորա սպատմական արժանահաւատութեան ջատազով կը հանդիսանայ ընդգէմ յարձակմանց իւր հայրենակիցներուն , որոնք իրենց ազգային սնապարծութեամբը

1. Անշառա զբանագրի վրիզակ է այդ՝ փոխանակ չէր + լինելու , ինչպէս ուղղեր է զայն Գեղզեր իւր գրութեան մէջ :

Մ. Թ.

2. Այսու մեկնիշն կը հասկնայ զգուխներու քածնուած ցուցակը կամ ցանելը , որ ընդհանրապէս զրբերու սկիզբը կը դրաւի :

3. Փոխանակ չ-է-ր-է-ր-է-ր-ի զնելու է՝ Փ-ը-ր-է-ր-ի , և Շ-է-ր-է-ր-է-ր-ի քառէն վերջը զանուած է-ր-է-ր-է-ր-է-ր-է-ր-է :

նախատուած կը համարէին իրենք զիրենք:  
 կը խոստովանի նա թէ Փաւատոսի մէջ շատ  
 երկրայելի կտորներ կան, զօրս ինքը ան-  
 խիղճ խարդախողաց զործ կը համարի: Փաւ-  
 տոս՝ որ Բիւզանզիոնի մէջ իմաստութեան յը-  
 տակ աղքերէն առեր էր իւր ուսումը և կըր-  
 թութիւնը, չէր կարող այնպիսի առասպե-  
 լայօդ անտեղի բաներ զրել: Ո՛րշափ աւելի  
 յարգի պիտի լինէր, եթէ Պաղար աւելի ճիշդ  
 տեղեկութիւններ տուած լինէր մեզի Փաւ-  
 տոսի Բիւզանզիոնի մէջ բնակելուն նկատ-  
 մամբ: Բայց անտարակոյս ինքն այլ այդ մա-  
 սին այնշափ զիտէր՝ որշափ մենք զիտենք,  
 որ է ոչինչ: Այս պատճառաւ ևս՝ միամիտ  
 հմտութեամբ կը ճոխանայ կոստանդնուպոլսոյ  
 հիմնարկութիւնը նկարազրելով, որ բնաւ կազ  
 չունի Փաւատոսի և նօրա մայրաքաղաքին մէջ  
 բնակութեան հետ: Եւ կարծես թէ բաւա-  
 կան կը համարի նա Բուզանդացի բառը՝  
 Փաւատոսի Բիւզանզիոնի մէջ բնակիլը հաս-  
 տատելու և բացատրելու համար: Այն մա-  
 սին <sup>1</sup> մէջ, յորում Պաղար կը խօսի այն  
 թեթևամիտ մարդկանց վրայ՝ որոնք իրենց  
 լրբութեան սխալները ծածկեր են Փաւատոսի

անուան ներքեւ, այսինքն է՝ որոնք խարդախեր են նորա զրութիւնը, կարծես մեզի հեղինակին լեզուին վրայ տեղեկութիւններ կ'ուզէ տալ: Վասնզի անմիջապէս կ'աւելցնէնա, թէ այսպիսիք « են ումանք ի Յոյնս, այլ մանաւանդ առաւել յԱսորիս <sup>2</sup> » . իսկ արդ Յոյները չեին կարող խանգարել՝ բայց եթէ յունարէն լեզուով զրուած զիրք մի. ապա կը հետեւի առէ՝ թէ Փաւստոսի զործը յունարէն լեզուով զրուած էր: Այս կարծեացս նպաստաւորը են նաև ժամանակազրտկան հանգամանքներն: Փաւստոս զրեց Դի զարուն վերջերը, հաւանականաբար Վոամշապուհ թագաւորին առաջին տարիներուն մէջ (359—416): Վեցերորդ զարութեան մէջ գտնուած եպիսկոպոսաց կենսազրութիւններն՝ ժամանակակացաց և մասամբ ևս ծանօթներու նկարազիրք են: Հայերէն զրութենէ առաջ լոյս տեսեր է Փաւստոսի զիրքն, և Հայաստանի նախազրական ժամանակին կը պատկանի.

2. Փարագեցւոյ այս վկայութեան վրայ հաստատուած փաստն այնչափ կը զօրէ յունարենի համար, որչափ ասորերենի համար. մանաւանդ թէ վերջնոյս աւելի նպաստաւոր է ըստ ինքեան. Փարագեցւոյ բացատրութեանը նայելով, և կրնայ Քննուիրէն կարծիքը հաստատելու ժառայել, որ ասորւոյ ուրումն զրչին հետքը կ'ուզէ նշանաբել:

հետեւաբար օտար լեզուով միայն կրնար շա-  
րադրուիլ այդ գիրըն:

Միւս կողմանէ Փաւատոս շատ պատիւ չի  
ըներ իւր կարծեցեալ բիւզանդական նուրբ  
հմտութեան: Դժբախտաբար Պրոկոպիոս Հայոց  
պատմութենէն առած հատուածները փոխեր  
և վայելու յունարենի դարձուցեր է. բայց  
կրնան մեզի զաղափար մի տալ յատուի ա-  
նուանք: Նա որ Շապուհ թագաւորին անունը  
Առօύրօն կը թարգմանէ՝ փոխանակ Տաπօրηց  
զրելու, յայտ է թէ յունարէն լեզուի տգէտ  
մէկը պէտք է լիներ. կը յիշեցնէ այս Ա-  
զաթանգեղոսի զրբին Կουսարաց (փոխանակ  
Խօսքից ըսելու) և 'Արտասրաչ (փոխանակ  
'Արտաչէրէնիչ): Անտարակոյս Փաւատոսի յու-  
նարէնն այլ նոյն ոճը ունէր, զոր կը գտնենք Ա-  
զաթանգեղոսի յունարենին մէջ, առ Մալալասաց  
կամ և Ճշնակաց ձո՞ւ տօս ձայնու Գրցիօրէու  
մէջրէ տօս նոն » գրութեան մէջ, հասարակ յու-  
նարէն մի, զոր կարող էր ուսանիլ օտարական  
ոք ընտանեկան գործածութեամբ՝ մօտիկ զա-  
ւառաց Յոյներուն հետ առնչութեան մէջ լի-  
նելով<sup>1</sup>, այլ ոչ վարժարանաց մէջ ուսած գիտ-

1. Վերը. յէջ 186, յիշուած բառն ռէմբէր+ սառուզիւ  
կը ցուցընէ թէ Փաւատոսի զիրըն ռէմբէր և ռէմբէր-  
մէջ (չուռակալաւուստա և չամուշ չարակ: Դիրէ) յունարէն  
գրութիւն մ'էր:

նականի մի վարժ և յստակ լեզուն։ Փաւու-  
տոսի գրքին ոճը, կարգաւորութիւնը և բո-  
վանդակութիւնը կը հաստատեն մեղ ամէն  
էջի մէջ՝ թէ զրողն ոչ միայն յոյն չէ, այլ  
բնիկ և հարազատ արևելցի մի։ Փաւուտոս  
բոլորովին հայ է ազգաւ, և յայսմ կը կայա-  
նայ իւր զօրութիւնն և իւր տկարութիւնն։

Փաւուտոսի զիրքն նոյն ժամանակաց Հա-  
յասս տնի աղնուականութեան և քահանայա-  
կան դասակարգի հայելին է։ Միայն բնիկ հայ-  
ազգի մի, և այդ երկու տիրող դասակարգե-  
րու պատկանող անձ մի միայն կարող էր այն-  
պիսի ճշգրիտ և մանրամասն տեղեկութիւն-  
ներ տալ մեզի՝ աւատական և եկեղեցա-  
կան շրջաններու աշխարհին և կենաց մասին,  
ինչպէս որ կ'ընէ իրօք փաւուտոս։ Նա ար-  
տարոյ կարգի յստակութեամբ կը նկարա-  
դրէ մեղ այն բնիկ և յայտարար հանդա-  
մանաց պատկերը։ Ամենամեծ համակրու-  
թեամբ և ճարտարութեամբ նշանակուած են  
այն տեղ՝ տիրող իշխանաց և հայրապետաց  
յատկանիշ նկարագիրները։ Նոյն ժամանակի  
Հայաստանի վրայ մեր ունեցած բոլոր ծա-  
նօթութիւնը՝ մի միայն արդիւնք են այս պատ-  
մբչիս կենդանի և իրական նկարագրութեանց։  
Փաւուտոս մասամբ իւիք իրեն պատմութեան

բնտիր աղբխարներ ունեցեր է առջեր . — արքունի զիւան մի կայր նոյն ժամանակները , որ ուներ նոյնպէս զիսաւոր զիւանապետ մի , արքունի դրան բարտուղար կոչուած <sup>1</sup> :

Այս աղքիւրես տոեր է , օրինակ իմն ,  
այն ամեն տեղեկութիւնները՝ որոնք անսա-  
րակոյս պաշտօնական արձանագրութեանց մէջ  
միայն կրնային գտնուիլ . ինչպէս են՝ ձեռ-  
նազրուելու համար կեսարիա զացող իւրա-  
քանչիւր կաթողիկոսաց ուղեգութեանց պատ-  
մութիւնը : Ամեն անգամ կը յիշէ յականէ յա-  
նուանէ անոնց հետ ուղեկից եղող իշխան-  
ները , հետևաբար լաւ հիման վրայ հասաւ-  
տուած է նորա պատմութիւնը : Բայց կարելի  
չէ ի սպառ լսութեամբ անցնիլ Փաւստոսի  
տեղեկութեանց մէջ զտնուած մեծամեծ թե-  
րութիւնները : Դէպ ի քահանայական զա-  
ռակարգն ունեցած իրեն սաստիկ յարումն և  
համակրութիւնն՝ զինքը կողմնասէր կը ցուցը-  
նեն թագուօրական կուսակցութեան և քա-  
դարական տեսութեանց նկատմամբ . ուսկայն  
գրեթէ միշտ արդար կ'երեխ առ զիստոր  
ներկայացուցիչս Աղքիանոսի տոհմին , որ հա-  
կառակ քահանայական կուսակցութիւնն էր :

1. In *quiescent* *arrested* *hypothalamic* *hormone* + *pitressin* *U.* *luteinizing* *hormone*

Նախ և առաջ պէտք է յիշատակել այս  
նկատմամբ՝ թուերու մէջ զործ զրած արտաքոյ  
իրազի շափազանցութիւնները և զէպէերու  
խանգարութեամբ ըրեր է։ Բայց զիտելու  
արժանի է, որ ոչ միայն թշնամոյն ըրած  
կորստեան թիւը կը շափազանցէ, այլ և Հա-  
յոց ըրածներուն։ Այս բանիս պատճառը  
ոչ այնչափ բարեմիտ հանոյքն եղեր է՝ զոր  
կը զզայ արեելցին՝ ո՛ և է վիթխարի հսկա-  
յական իրի մէջ, որչափ այն զիտաւորութիւնը՝  
որով ուզեր է ցուցնել թէ Հայաստան ինչ-  
ովէս ծաղկած և բազմամարդ տշխարհ մ'ե-  
զեր է, քանի որ զեռ թագաւորաց և իշ-  
խանաց ամպարշտութիւնն չէր կործանած ազ-  
գային տերութիւնը, և սպարսկական իշխանու-  
թիւնը չէր տիրապետած։ Ասկայն հեղինա-  
կին ինքնաստեղծ զիւտերն ըստ մեծի մա-  
սին այնպիսի բարեմտութեամբ եղած են,  
որ ամենէն տեղի նուազ քննադատ ընթեր-  
ցողն անգամ կրնայ գուշակել իրաց ստոյդ  
եղելութիւնը։ Շապուհի և Արշակայ մէջ ե-  
զած Յամեայ մեծ պատերազմին ժամա-  
նակ՝ Հայք 29 յաղթութիւն կ'ընեն, որոց  
հետեւանքը կը լինի — յետին աստիճանի  
կործանումն աշխարհին և զօրաւոր նախարա-

բաց անցնիլը ի կողմէ Պարսից : Աստի կարող  
է ամենայն մարդ իմանալ թէ ի՞նչ տեսակ  
յաղթաթիւնը էին՝ որոց վրայ կը խօսի  
պատմին, թէ և բիւրաւոր Պարսիկը կը  
մեռնին անոնց մէջ : Շապահի արշաւանքին  
միջոց ընդդէմ Հայաստանի՝ յառկապէս Աիւ-  
նեաց աշխարհն է որ կը քայլացուի և կ'աւ-  
րըշտըի, որովհետեւ — երեսուն տարի առաջ  
— Անգովի իշխանը պատճառ եղեր էր Ներ-  
սեհի զէմ պատերազմելուն<sup>1</sup>, որ սակայն  
նոյն ինքն Փաւստոսի արիշ տեղեկութեանց  
շի համապատասխաներ : Դարձեալ կ'ըսէ նա,  
իւէ Շապահ այն սպատճառաւ հայածեց զբժիս-  
տոնեայս, որովհետեւ քաղաքականօրէն յարեալ  
էին առ Արշակունիս, որ է՝ առ քրիստոնեայ  
թագաւորս Հայաստանի : Հայկական մեծա-  
մասթիւնն այսու այնպիսի զիտումներ կ'ըն-  
ծայէ պարսիկ թագաւորին, որոնք կրնային  
հասկանալի լինել՝ եթէ զործը հոռվմէ ական  
հզօր կայսերութեաւ հետ լինէր, բայց ընդ-  
հակառակն բոլորովին անտեղի են՝ երբ խօսքը  
Հայոց տկար և խախուս տէրութեան վրայ  
է : Ասոնց վրայ աւելցնելու է նուև ժամա-  
նակագրական սիսալները . — Պարսից Ներ-

1. Փաւստ Բուզանդ . Կ. ՄՌ . Էջ 182 (ապրիլ . Ակ-  
նեակոյ , 1889) :

սեհ թագաւորը (293 – 302) կը յաղթէ և կը կուրացընէ Հայոց Տիրան թագաւորը (326 – 337), այնպիսի ժամանակի մէջ՝ մինչ վաղուց արդէն կը թագաւորէր Ներսէնի թռոր Շապուհ թ., և միանգամայն կը յիշատակէ Ալաղէսը (364 – 378) իրք ժամանակակից հոգմայեցի կայսր<sup>1</sup>: Շատ տարակուսականն է զարձեալ Ներսէս կաթողիկոսի և Ալաղէս կայսեր ժամանակակցութիւնն: Հայրապետն կ'աքսորուի կայսրէն և կը մնայ ինը տարի կղզւոյ մի վրայ, և Վաղեսի մեռնելէն վերջը կը դառնայ ի հայրենիս, մինչ կ'ասպրէր զեռ Արշակ թագաւորը (+ 367): Պառ թագաւորը (367 – 374) երկար ժամանակ չի համարձակիր բնաւ Ներսէսի հակառակ գործ մ'ընել՝ վախնալով հոգմայեցի ինքնակալէն. սա յանուանէ չի յիշատակուիր, բայց կը

1. Ներդէքէ կը համարի թէ Շա և ճէ Բի որդին՝ կը բանակըն Ներսէս լինի. այսու կը լուզուի ստուգիւ ժամանակական զժուարութեան զինուոր կեծիոն: Առաջն, Տիրանոյ մահուան ժամանակ (եթէ զայդ 557ին զնենք, կամ թէ սակաւ մի յետոյ՝ զուցէ 541ին) Շապուհ թ., որ մներ էր յամին 510, չէր կարող յարրուն հասած որդի ունենալ: Բաց աստի, պատմութիւնն ըստ որում Ներսէս յաղթուեցաւ ի Յունաց և կանոնցը ձեռքէն եւաւ, և յետոյ գարձեալ խազազութեան զաշամբը՝ զայն եւա առաւ, կը ցուցինէ՝ թէ 'Իիոկղետիանուսի միջոց եղած Պարսից պատերազմը կը յիշատակուի առ հայն ազատ կերպով:

Հասկըցուի բնականաբար պաշտպանն քրիստոնէից՝ թէ ողոս մեծն, որ կայսր Եղան յամին 379, և որուն գահակալութիւնը չի տեսան ոչ Պատկ և ոչ Ներսէս :

Փաւստոսի աղբիւրները եղեր են յաճախ ժողովրդական վեպեր, թերեւս հին երգեր. ոյս ազգեցութիւնը կ'ընէ, օրինակ իմն, հաւատարիմ Գրաստամատի և Արշակ թագաւորի մահուան պատմութիւնն . Շասկուհի և Արշակայ մէջ եղած պատերազմի նկարագրութիւնն , ինչպէս նաև Վասակայ հաստատուն և անորիսպելի յաղթութիւններն , և այն միօրինակ կըկնաբանութիւնք իւրաքանչիւր զըլլոց վերջը , « բայց միայն Մերուժանն փախչէր », ի պատիւ Մամիկոնեան ազգատոհմին շինուած երգէ մի կարծես առնուեր են : Դարձեալ , երկրորդ Մամիկոնեան Մուշեղի յաղթութեան կամ պատերազմաց պատմութիւնն , յորում անփոփոխ միօրինակութեամբ կը յիշատակուի միշտ , թէ բոլոր նուաճած գաւառները « ի հարկի (ժառայութեան) կացուցաներ , առերէր , զերէր , և առնոյր պատանդս ի նոցանէ » , թուի թէ յաղթանակի երգ մ'է՝ մի և նոյն վերջաբաննութեամբ որ

միշտ կը կրկնուի : Պատահույն Գնելայ , զեղեցիկ Փառանձեմի և նենգուոր Տիրիթայ ողբերգական պատմութիւնն անտարակոյս բանասեղծական աղբիորե քաղուած է : Բայց պատմութեան ամենաբարձր կամ ամենէն աւելի աշբի զարնող կէտք կը կազմէ՝ Ներսէս կաթողիկոսի տեսարանին վրայ երեխին , իրեն առ Արշակ թագաւորին ըրած սարաֆելի զուշակութեամբք և սպանալեօր : Աակայն այդ զէպքն ժամանակագրական հաշուոյ անկարելի կը թոփ , որովհետեւ կաթողիկոսն կը նկարագրուի այն տեղ իրը հասունացեալ հասակով և պատկառելի մէկը . մինչ սուզին այդ պատմուած զէպքն՝ Պապ թագաւորի ձնընդենէն առաջ պէտք է պատահած լինի . ապա ուրեմն՝ ամենէն աւելի ուշ՝ յամին 360 , այլ հաւանականաբար շատ առաջ . և ահա այնպիսի ժամանակ մի կը հասնինք , յորում զլիուոր անձն՝ Ներսէս կաթողիկոսն՝ տակաւին աշխարհիկ պիճակին մէջ էր :

Հաւանական է ուստի՝ թէ ի պատիւ թշուառ Արշակունեաց և քաջասիրա Ամամիկոնեանց յօրինուած երգերն՝ զբականութենէ զուրկ ժամանակին համար պատմական նիւթ մասակարեր են հեղինակին , ինչպէս հոռվիմայեցի տարեզիր պատմըշին՝ Գովուրիւնք հըս-

լակաւոր արտանց (Clarorum virorum laudationes) կոչուածները : Խնապէս այն տեղ դամբանուկան ճառերէն, այսպէս այլ Հոյաստանի մէջ պատմական աւանդութիւնը ողբերէն առեր են իրենց ծագումը : Պատանույն Գնելայ պատմութեան մէջ յայտնապէս կը յիշասակուի, թէ նենդութեամբ եղած սպանութեան իւրաքանչիւր սպարագայք առնուած են ի պատիւ սպանելոյն եղած ողբական երգերէն<sup>1</sup> : Ա . Ներսէս իւր բոլոր ճգամբը ջանաց արգելու մեռելոց համար եղած կոծը և աշխարումը, իրր հեթանոսական աւելորդապաշտիւն մի, բայց ի զուր : Նոյնպէս

1 . Փաւաստափ իւռաբերն (Տ. Պ. ԺԵ. ԺԵ 124) մեծ կարեռութիւն ունեին, վասն զի կը հաւատառեն այն կարծիքը՝ թէ Փաւաստափ իւր պատմութեան նիւթը քաղեր է գիւցազանց և յուղարկաւորական երգերէն, որը թերանացի աւանդուեր էին : « Ազա իրեւ մեծ իրքն ամարձակ յայտնեցան ի լուելիս ամենեցուն, և ի ձայնարկութեանց ամենայն եղեւ նաև մայր ողբացն, և ձայնարկութեանց ամենայն ի ձայն ողբացն ական նուագել զիրսն արփանց Տիրիթայ, զակն զնելին, զքսութիւնն, զնեարս մասն նիւթել, զալանութեն, ձայնիւթեն զեղգեղեալ իւռազատութեամբ, ի նուանելի իւրեանց ձայնիցն, իրքն յայտնեալ չոչակ հարկանէր » : Այս երգերը կը յօրինէին յալականը և աղղական կանայք (Մ . Խոր . Բ . Ա ), ինչպէս բոլորովին նման պրէժինեղբարկան բանասեղծութիւնն Առաքիկայի՝ յիշուած է սպանելոյն ընտանեաց կանանց կողմանէ : Փաւաստափ շատ ձիւդ և գեղեցիկ կերպով կը համեմատի Մերիմէի Աշ-Նիշին :

քաջատիրտ իշխանն Ամանուէլ Ամամիկոնեան զուր տեղ արգիլեց զայն, որ յիշելով Աբրոյն պատուէրը՝ մահուան անկողնի միջէն խստիւ հրամայեց և խրատեց, որ ամեննեին չի կոծեն զի՞նըը իրեն յուղարկաւորութեան հանդիսին միջոց : Ամկայն հայ ժողովուրդն այնու չի թուզուց իր առվորութիւնը, և սպառը երգերով պատուեց իր վերջին դիւցազնը<sup>1</sup> :

1. Փաւուսոս Բիւզանդ. Ե. ԽԴ. — «Եր. (Ամենէլ) իրրե կայր հիւանդի մահիմա իւր... առաջի ամենեցուն առէ... Ամ յանձարդ իրրե հեթանոս կոծ կամ աշխարհան ոք անյուսութեամբ զնիցէ ինձ :... Զի մեզ մեծ հայրապեան ներսէս զայս ամակ պատուիրէր » . և այլն (էջ 264-5) : — Յայտնապէս կը առանուի Բիւզանդայ զբութենէն, թէ ինչպէս հայ ժողովովեան մէջ խոր արմատ ձգեր էր այդ սովորութիւնը, և թէ ինչպէս ժողովուրդն երախտագիտական պարաք մի կը համարէր պատուել իրեն զիւցազները այգովիսի երգերով : Ե՛ւսէ Բիւզանդ (էջ. 266) . «Այս իրրե մեռաւ մեծ սովարապեան Ամենէլ, հրամանն զոր տայր յազազս կոծոյն չզնենոյ՝ այնմ ինչ ոք ոչ անապ . այլ ամենայն մարդ երկրին չայց կոծ եղեալ, մեժաւ աշխարհօք լային զնոս ոռ հասարակ աղասիք և չինականը : Զի ամենայն մարդ իրրե. զէօրէ ի կարի առնէին զնմանէ վասն քաղցրութեան մարգասիրութեան, հեղութեան, հանգարտութեան, իննամաս բարերարութեան՝ բարէնչան զայցարհաւաշէն անձն Ամենէլի : Ամենէլեան բերանարաց հառաջէին զինի նորա, կղկաթ կաթողի լինէին զիւրեանց քաջ զօրավարէն, զփրկչէն իւրեանց, զյաղթական զահուանին զարգասուէն, յայնպիսոյն հեռացեալ զնացեալ ի յանշատելին ի մեկնելոցն ո : — Այս տողերուս մէջ ով չի տեսներ եռանեղուն սրաի կայեեր, երախտագէտ թելերու թրթուուներ, քերականական

Դարձեալ, առասպելախտան զրոյցի կերպարանք  
ունին այն բոլոր յատկապէս քրիստոնեայ պատ-  
մութիւնք, յորու ամբարիշտ վաղէս կայսեր  
հալածանաց վրայ կը խօսուի, որոնց միջոց  
այլևայլ նեղութիւններ կրեցին արքն Աս-  
տուծոյ՝ Բարսեղ և Ներսէս։ Այս պատմու-  
թիւնք ակնյայտնի ապացոյցներ են, թէ  
ինչպէս զրականութենէ զուրկ ժողովրդեան  
մէջ՝ սերունդ մի միայն յառաջ պատահած  
զէպքերն անզամ կը մասցուին ի սպառ, և  
կամ խանգարուած և ոչ պատմական ոճով  
կը հասնին յաջորդաց։ Նոյն իսկ այն զէպ-  
քերը, որոնք իւր ժամանակէն հազիւ երե-  
սուն տարի յառաջ պատահեր են, Փաւստոս  
բոլորովին առասպելական զրոյցի ոճով կը նկա-  
րագրէ մեզի։ Այս ամէն ըստծներէս կը հե-  
տեի, թէ ընդհանրապէս ամենայն զգուշու-  
թեամբ և շափով պէտք է օգտուիլ մեր պատ-  
մընէն, կամ յաւագոյն ևս՝ ժամանակազրէն,  
թէ և շատ սեղեկութիւններ ունի, որոնք  
մեծ արժէք ունին իրենց մանրամասն պա-

կապերու անսառառդ զրչի հետքեր, որ նոյնանիշ քա-  
ռերու խճողմամբ ուզեր է զգացմանց չերժութիւնը և  
սառակութիւնը բացատրել. և Փաւստոս ուրիշ քան  
չէ ըրած, բայց նոյնը առեր անփոփոխ և իւր պատմու-  
թեան կարդին և խմառախն յարմարցուցեր է։

բազայից համար : Եւ այս բանս այնչափ աւելի  
ցաւալի է , որ ինքը — ի բաց առեալ յոյն  
և հոռվմայեցի պատմքաց մի բանի սակաւ  
տեղեկութիւնները — Հայաստանի Դ. զարու  
եկեղեցական և բազարական պատմութեան  
միակ աղբիւրն է :

Այս բանս այնչափ աւելի յայտնի կը լինի ,  
եթի համեմատենք զինքը նոյն ժամանակի  
ուրիշ պատմական աղքերաց հետ , որոնք  
գրեթե բնաւ արժեք չունին : Այս բանս կը բ-  
նանք ըսել յատկապէս Մ . Խորենացոյ  
պատմական գործոյն համար , այն պատճառաւ  
պարզաբար՝ որ Գուտչմիզի և Կարրիէրի ու-  
սումնասիրութեամբք ցուցուեցաւ , թէ Մ . Խո-  
րենացոյ գրութիւնք . Ե զարու գործեր են ,  
եթէ ոչ աւելի ևս ուշ , և հետեարար եր-  
կայն ժամանակի միջոց մի կայ ընդ մէջ  
գրութեան և պատմուած զէպքերուն : Օրի-  
նակ իմն , քննենք միայն այս տեղ այն ժա-  
մանակագրական գրութիւնը , զոր կը հաստատէ  
Մ . Խորենացի եկեղեցական պատմութեան  
համար : Նա բաւական կը խոտորի Փաս-  
տուէ , ինչպէս կը հաւաստէ երկու հեղինա-  
կաց աւանդած կաթողիկոսներու ցանկերուն  
հետեւալ բազզատութիւնն .

## Փառաբան

## Խորենացի

|                      |            |    |      |
|----------------------|------------|----|------|
| Գրիգոր               | Գրիգոր     | 30 | տարի |
| Այրիստակէս           | Այստակէս   | 7  | —    |
| Վրթանէս              | Վրթանէս    | 15 | —    |
| Յուսիլի              | Յուսիլի    | 6  | —    |
| Փառէն                | Փառներուհի | 4  | —    |
| Շահակ <sup>1</sup>   | —          | —  | —    |
| Ներսէս               | Ներսէս     | 34 | —    |
| Չունակ <sup>2</sup>  | —          | —  | —    |
| Յուսիլի <sup>3</sup> | —          | —  | —    |

1. Այս Շահակը կամ Սահակը՝ Աղքահանս եղիսակագութեան ազգաւորին ազգաւորնեան էր, վասնզի և ոչ ոք դպր ի առնենք Գրիգորի (կաթողիկոսութեան) արքանեց, Կըսէ Բիւզանց (Պ. ԺԵ):

Մ. թ.

2. Այս անձս, որ Ա. Ներսէսի կենզականթեան միջնորդ՝ Արշակ թագաւորին հրամանաւ կաթողիկոս եղաւ, ինչպէս կը պատմէ Բիւզանց (Պ. ԺԵ, էջ 127), և ուրիշ ձեռնադրութեան ոչ մէկ եպիսկոպոս չնաւանեցաւ և ներկայ չեղաւ՝ բաց ի Կորզուաց և Աղձնեաց եպիսկոպոսներէն, մոսցուեր է կաթողիկոսաց ցանկին մէջ զբուելու լ. Տաքայեանի գրութեան մէջ (Արժ. 1895. թիւ. 92):

Մ. թ.

3. Ուս, որ և Յուսիլի Բ. Աղքահանս եղիսակագութիւն ցեղական էր, որ Ա. Ներսէսի մահութեն յետոյ կաթողիկոս գրուեցաւ Պատ թագաւորին հրամանաւ. առ և իւր համարդին Չունակ առաջինը եղաւ, որոնք կեսարիա չի դիմացին կաթողիկոս ձեռնադրուելու համար, որուե համար բաղոքեցին կեսարու Հայրապետը և քուծին զիշիւանութիւն կաթողիկոսութեանն ։ ինչպէս կը պատմէ Բիւզանց (Լ. ԽԹ):

Մ. թ.

|            | Շահակ  | Յ տարի     |     |
|------------|--------|------------|-----|
| Զաւէն      | Յ տարի | Զաւէն      | 4 — |
| Շահակ 1    | 2 —    | —          | —   |
| Ասպուրակէս |        | Ասպուրակէս | 5 — |

Խորենացոյ անուանց և թուականներու ցանկն զրեթէ միակ հիմն և ազբիւրն եղածէ յետագայ բոլոր հայազգի պատմիչներուն, այս պատճառուու ևս չենք կարող իրր սասայդ ազբիւրներ գործածել անոր վրայ հիմնուած եկեղեցական պատմութեանց տեղեկութիւնները : Այդ երկու ցանկերը բննելու համար սկսինք Մեծն Ներսիսէն : Կաթողիկոսաց բոլոր ցանկերն (նաև Միքայէլ առօրին և յայնը) կաթողիկոսութեան Յ 4 տարի կ'ընծայեն իրեն, որ անկարելի է : Ներսէս թունաւորուեցաւ Պատ թագաւորէն (+ Յ 7 4). սա՝ Ներսեսի մեռնելէն վերջը՝ եկեղեցական կարգ և կանոնաց հակառակ շատ բաներ ըրաւ . հաւանական է ասկա, թէ նորա մահն պատահած լինի՝ ամենէն առելի ուշ՝ Յ 7 3 տարւոյն վերջերը և կամ գէթ Յ 7 4ին սկիզբը :

1. Ուս Ուահակ կորհեայ կը կուռի, որ անմիջազէս Զաւենայ յախորդեց, որ երկու տարի միայն կաթողիկոսութիւնը ըրաւ, և իրեն յախորդեց Ասպուրակէս Անապեկեցի, որ Աղքաքանոս եղիւղուազուի ցեղէն էր (Բիւզ. Ե. Դ. Դ. :

Եր. թ.

Ներսէս՝ կաթողիկոս ձեռնազրուեցաւ կեսարիոյ Եւսերիոս հայրապետէն, որ Մեծին Բարոդի նախորդն էր (Փաւոսոս, Պ., Դ)։ Եւսերիոսի հայրապետութեան ժամանակը կը սպասահի 362—374<sup>1</sup> տարիներուն մէջ, հետեաբար 362էն յառաջ Ներսէս չէր կարող կաթողիկոս լինել<sup>2</sup>։ Ճշգիւ կը համաձայնի ասոր հետ Առկասաայ եկեղեցական սպասմանթեան մէկ անդեկութիւնը (Պ., 25), որ կ'ըսուի թէ՝ առ Յովիանոս (363—364) ուղղուած Անտիոքիոյ ժողովական թղթոյն ներքի ստորագրեր է նաև Իօաննէ (Իօաննէ)՝ Արմենիաց բԵցալու։ Ոա՝ նոյն ինքն է Շա-

1. Ըստ Հանդրապէս եկեղ. պատմիչք Ա. Բարոսի Հայրապետութեան ակիրոքը կը զեեն Քրիստոսի 570 թուականը, Հետեաբար Եւսերիոսի ման այլ կամ 569ին վերջը և կամ 570ին ակիրոքը պատահած պէտք է լինի. Հպիսեմ ինչու զրբուկիս հեղինակին 574 տարւոյն մէջ կը զեէ զայն. (անտ. Migne, Patrolog. I, S. Basile. — Alzog, Patrol. I, 1877, p. 338. — Fialon, Etude historique et littér. sur S. Basile, Paris, 1869, p. 83). Կ. Թ.

2. Հման. զերը, յէլ 419. Կրեայինը յիրափ յընզունի այն անդեկութիւնը, թէ Ա. Ներսէս ձեռնազրուած լինի Եւսերիոս հայրապետէն (Փաւոսոս, Պ., Դ), որով հաստատած կը լինէինը Փաւոսոսի պատմաթը (Պ., ԺԵ). առկայի Փաւոսոս Ներսէսի ի Եւսերիոս երթին սպասմանթիւնը կը դրէ չառանականաբար այնպիսի պաշտօնական աղքարաց վրայ հիմնեալ անդեկութեամբը, որ չենք կրնար յընզունի զայն։

հակը՝ նախորդն Ներսեսի, զոր Փաւատաս  
միայն կը յիշէ : Մովսէս կը շփոթէ զայս  
ընդ Շահակայ կորդուացւոյ (Կորճեայ), որ  
(Զաւենէն) վերջը կաթողիկոս եղաւ, և սխալ-  
մամբ Աղքահանսոսի տոհմէն սերեալ կը հա-  
մարի զայն : Բաց աստի, Մովսէս՝ երիտա-  
սարդ հասակի մէջ վախճանած Ա Յուսկան<sup>1</sup>  
և նորա թռուան Ներսեսի կաթողիկոսութեան  
մէջ եղած ժամանակամիջոցին կը գնէ Փառ-  
ներսեհի կ տարուան կաթողիկոսութիւնը, որ  
ամեննեին հաւանական չէ : Փաւատաս՝ Ներ-  
սեսի մահուընէն յետոյ ուրիշ Յուսիկ մ'այլ  
կը յիշատակէ, որուն վրայ լուսթեամբ կ'ան-  
ցնին Մովսէս և իւր հետեղք : Այս զի-  
պուածիս մէջ ուրիշ երկու արտաքին ցուցակք  
կը հաստատեն Փաւատասի տուած տեղեկու-  
թիւնը . Տէր Միքայէլ Պատրիարքը իւր Քա-  
հանայուրիւն<sup>2</sup> կոչուած զրութեան մէջ Ներ-  
սեսի յաջորդ կը գնէ .

1. Ա. Խորենացւոյ պատմաժն բոլորովին կամայա-  
կան գիւտ մ'է ընականաբար է իրը թէ Տիրան սովանել  
տուեր է զՅուսիկ այն պատճառաւ, որ առ արհամար-  
հեր և նախատեր է Յուլիանոսի պատկերը : Սակայն  
ոչ Տիրան և ոչ Յուսիկ ժամանակակիցք չէին Յուլիա-  
նոսի, հետեւաբար յայսմ ևս սխալ է Մովսէսի ժա-  
մանակադրութիւնն :

2. Եջ 54, առաջգր. Երուսաղեմի, 1871:

16. Տէր Յուսիկ. — Ա. Ներսեսի մահութեան յետոյ՝ սա կ տարի կաթողիկոսաթիւն ըրաւ :

Նոյնը կը հասաւասէ նաև ցուցակն , և Կաթոլիկօ տից պεցάլηց՝ 'Արμենիա ; » (cod. Paris. DCD fol. 180v. տպագրեալ կ' Combefisէ , Historia Monothelitarum cl. 288) : ծ ձգուս Նօրսէտից էտի ՀՅ Ցո ծովաչեւնե Փաքրդ . Էթ օստաւ Կուսէդիք էտի Կ .

Մինչև ցարդ բաւածներէս կրնամ ապահովագէս հետեցնել , թէ Մովսէս բոլորովին բարքիմն զառաւորեր է հետեւալ կաթողիկոսաց կարգը . Շահակ , Զաւէն , Ասպարակէս . փոխանակ գնելու՝ Զաւէն , Շահակ , Ասպարակէս : Յայսմ ևս Տէր Միքայէլ ամենայն կերպով համաձայն է Փաւասոսի հետ :

Որոշնեան Փաւասոս ամենենին տեղեկութիւն շի տար թուականներու մասին , և Մովսիսի տուածներն այլ սիսալ են , հետեւարար անկարելի է կաթողիկոսաց ժամանակագրութիւնը կազմել : Կրնանք միայն հետեւալները հասաւասել , թէ ա . Արիստակէս 325ին միջոցները (կաթողիկոս) էր , վասն զի Նիկիոյ ժողովոյն Հարց թուէն է . բ . Ա. Ներսես կը մեռնի 374 թուականէն տոաջ . և զ . Մեծն Աշհակ կը մեռնի նաւասարդի 30ին (= 7 սեպտեմբերի ) , Յազկերտ Բի

Թագաւորութեան Երկրորդ տարին, որ է՝  
439ին։ Այս համառօտ տեղեկութիւնը ան-  
բաւականիք են կաթողիկոսաց ժամանակագրա-  
կան ցուցակ մի շինելու։ իսկ Մովսիսի զիրքն  
չէ կարող ժառայել իրք ազրիւր եկեղեցական  
պատմութեան։

Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութեան  
պատմութեան համար ամենամեծ կարևորու-  
թիւն պիտի ունենար Տարօնոյ պատմութիւնը։  
որուն հեղինակ կը կոչուի Զենոր Պատի ա-  
նոնով առորի եպիսկոպոս մի, ժամանակա-  
կից Ա. Գրիգոր Լուսաւորչի սակայն Գր. Խալա-  
թեանց՝<sup>1</sup> իւր ըրած ուսումնախրութեամբ և  
նոյն զրբին մէջ զանուած տեղեկութեանց  
պատմական քննութեամբ՝ այն եզրակացու-  
թիւնը յառաջ բերաւ, թէ այդ զրութիւնն ը-  
կամ թ զարու առասպելայօդ զբոյցներէ կաղ-  
մուած զործ մ'է, զորի ու և է պատմական  
արժէքէ։ Զենորայ օգնականը կամ ընկերք  
եպիսկոպոսական աթոռներ ունին, որոնք զո-  
յութիւն շունէին։ այցելութեան կ'երթան  
նորա Երանազեմայ հայրապետաց, որոնք  
քրիստոնէութեան թ զարու կը պատմանին։  
Գրիգոր Լուսաւորիչ Գիսանեայ և Պետեարի

1. Գր. Խալաթեանց. ԶԵ-Բ ԳԵ-Ե-Յ ՇՆ-Դ-Դ-Դ-  
Բ-Ե. Վ. իննեան, 1895։

կոսց հոչակաւոր մեհեանը կը կործանէ , ո-  
րոյ գոյութիւնը կը հերքուի պարզաբար Ա-  
զաթանգեղեայ պատմութեան հետ համեմա-  
տելով այդ տեղեկութիւնը : Արձանագրութիւն  
մի և յոյն և խմայելացի նշանօք » (Զեն.  
Գլակ . Էջ 34) , կեզծ պատմական գրութիւն-  
ներ , որոնց խարազիրը կամ անուանը կրր-  
նան համեմատուիլ Պողոսէոս Քեննոսի <sup>1</sup> և  
Մտոյն - Պլուտարքեայ (de fluvjis<sup>2</sup>) անուանց  
հետ , (պատմութիւն Հեփթազաց յունարէն  
լեզուով գրուած և պատմութիւն Ճենաց =  
Չինաց) կը ներկայացնեն ծանօթ խարգա-  
խազի մի ազրիւրները : Զենորայ զիրքն , ի-  
րեն ոչ նուազ կառկածելի շարունակութիւնն  
ոյլ միասին առած , զոր շարազրեր է Յովհան  
Մամիկոնեան , կը ներկայացնէ առազելա-  
խառն զրոյցը կամ պատմութիւնը Գլակայ  
կամ Մորք կարազետի վանքին , որ նախա-

1. Առաջ վկայութեան Առիգառայ , է նոյն քնքն  
Պազոմէոս Աղեքաննդրացին՝ որդի Հեփեսափոնի , Տրա-  
յանոս և Աղքիանոս կայսերաց միջոց . որ իւր Հայրե-  
նիքէն Ք. Բնաս կոչուեր է : Այլեայլ արձակ և ոտանա-  
ռոր գրութիւններ ունի առ , թեզդէս կը յիշատակէ Փառ  
իւր Մ-րէ-ր-ր-նին մէջ . յորո նշանը է « Առօլե-  
լաւու տօն Արաւոտնոց ուր տից այս ուլսպաթիան չհա-  
նչց լուսուաց լծոց է » .

2. Առոյն-Պլուտարքեայ ընծայուած զրքի անունն է .  
յե . ուր ուժամն .

սպատիւ հիմնարկութիւնն էր ԱՄամիկոնեանց : Սոքա այն ժամանակ միայն Տարօնոյ մէջ և Աշտիշատայ շրջակայները հաստատուեցան, երբ՝ Եղարու մէջ՝ Գրիգոր Լուսաւորչի տանը վերջին կաթողիկոսին ժառանգ մէկ հատիկ զոտեր միջոցով՝ իրենց ցեղին ժառանգութիւն ստացան հայրապետական տանը պատկանող զիւղերը և ստացուածները<sup>1</sup> : Այս սուստ – պատմագրութեան հեղինակին զիստած զիստար նպատակներէն մին եղեր է, յաւելուածներ ընել Ազաթանգեղոսի Հայաստանի գարձի պատմութեան վրայ, որոնք մեծ կարևորութիւն ունեին յաշս բարեպաշտ ընթերցողաց : Զենորայ պատկառելի հասակն իրը հաւաստի փաստ կը նկատուի այն տրուած տեղեկութեանց արժանահաւատութեան, ինչպէս բարեմտարար կը նշանակէ հեղինակն<sup>2</sup> . « Եւ զուք մի ինչ աղարտէք զսակաւ պատմութիւնս, կամ եթէ Ազաթանգեղոս դայդ ոչ յիշէ . զիես յառաջազոյն զրեցի քան զնա ու : Գրիգորի յղութիւնն կը պատահի Արտադ զաւառին մէջ, « ի հանգիստ սուրբ առաքելոյն թաղէոսի ու, ուր յանուանէ կը յիշատակուին » :

1. Պաղար Փարոս Էջ. 105—4 :

2. Զենորայ Գրակայ Պատմութիւն Տարօնոյ, Էջ 19 : Ահանդամիկ, 1889 :

նորա զայեւակներն ի կեսարիա՝ Բարբար և  
Սովի, և Աշխաղէ (Ենթալիչ) եղբայրն  
Սովիայի, և Գրիգորի աներն՝ Դաւիթ, և  
իւր ամաւահինն՝ Մարիամ։ Կը յիշատակուի  
զարձեալ Գրիգորի Ռաքատակէս որպւոյն ճրզնա-  
ւոր դաստիարակն՝ Նիկիմաքոս (Նիշիմաշօց),  
Գրիգորի եղբայրն (Առուեն) Ճենաց աշխար-  
հին վրայ կը թագաւորէ, իսկ քեսորդին՝  
սպիտակ կոշտած Հոնաց կամ Գթաց վրայ  
կ'իշխէ, և այլն։ Արդ տարօրինակ քան է՝  
որ նոյն այս տեղեկութիւններս կը դանենք  
Մ. Խորենացոյ պատմութեան մէջ, որ  
միայն շի յիշատակուիր Լոռաւորշի ազգա-  
կանաց տրեելքի այս կամ այն կողման վրայ  
թագաւորելլը։ Աակայն Խորենացոյ տեղե-  
կութիւնք Զենորայ հեղինակութեան վրայ  
հաստատած շեն, այլ ուրիշ սուտ պատ-  
մազրութեան մի վրայ՝ որ նոյնպէս հին է  
ժամանակու, Արտիթէս (Արտօս) եղիս-  
կոպօսի մի թղթոյն վրայ, զոր կը յիշա-  
տակէ Ազաթանգեղոս այն տասնուերկու ե-  
սպիտակոսաց կարգին մէջ՝ զորս ընարեց Ա.  
Գրիգոր քրծաց ցեղէն։ Այլ թէ արդեօք  
Մովսէս օգտուեր է Զենորայ գրքէն կամ թէ

վերջինս առաջնոյն պատմոթենէն, այս լոկ  
մատենագրական խնդիր մ'է, և բնաւ պատ-  
մական կարեորոթիւն մի շունի :

Ուրիշ ժամանակակից ազգիւր մ'այլ է  
անշուշտ հետեւալ զրութիւնն . ո Յաղագս  
զարմից Արքոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի  
և պատմոթիւն Արքոյն Ներսեսի Հայոց հայ-  
րապետի ։ Հեղինակին, որ շատ օգտուեր է  
Ժամանականարար զրականու-  
թեան ուկեղարուն կը պատկանի և ողեաբ է  
նոյն ինքն Մեսարք Մինի կամ իւր աշակերտ-  
ներէն մին ։ Մ . Խորենացոյ օրինակն  
բաւական է ցուցընելու համար թէ որքան  
սակաւ կարեորոթիւն ունի սնական կամ զրա-  
կան կոչուած փաստն : Հեղինակին Յ 4 տա-  
րիներու կաթողիկոսութիւն ընծայելն Ներսիսի,  
որ լոկ աւանդական է և ոչ պատմական ,  
բնաւ նպաստաւոր չէ իրեն զրութեան ժա-  
մանակին : Բայց կան զեռ աւելի տարակա-  
տական կէտեր: Երբոր Ներսէս կեսարիա կ'եր-  
թայ կաթողիկոս օծուելու համար , ոչ միայն

4 . Սովերը Հայկականը . Զ . Էլ 4 . ազգը . Անենակ .  
1855 . Թրգմ . Լանգլուայի . Collection II , S. 21 ff .

2 . Լանգլուա . անդ . Էլ 19 :

5 . Շնորհանարար զայց կ'ընեմ յիշել աւալեան ՓԲ ,  
ՓԴ զույխները , վասն զի նոյն իսկ Լանգլուա կը զանէ  
ահանց մէջ վերջը եզակ խանդաբառմ մի :

նախարարաց սովորական նուիրակութիւնն  
կ'ընկերէ իրեն<sup>1</sup>, այլ և ոչ նուազ քան 28  
Եղիսկոպոսունը կ'ուզեկցին իրեն։ Այն հան-  
գամանիս բնաւ պատմական չէ։ Փառառո  
յականէ յանուանէ կը յիշառակէ այն ամէն  
իշխանները, որոնք ուզեկիցք եղան առթիւ  
ձեռնադրութեան Յուսկան (Գ., Ժ. 1), Փառենի  
(Գ., Ժ. 2), Շահակայ (Գ., Ժ. 2) և նոյն իսկ  
Ներսիսի (Դ., Դ.), և առկայն չկայր անոնց  
հետ և ոչ մէկ եպիսկոպոս։ Այս բանս բո-  
լորովին հակառակ լինելով յետազայից աեւու-  
թեանց, ուստի և պարագային համեմատ ե-  
պիսկոպոսներ կը հնարէին։ Այն եպիսկո-  
պոսաց ցանկին մէջ վերջինն է (Գ., Լ. 26)  
և Գնել եպիսկոպոս Մելետեաց ։ արդ,  
կարելի է ցուցընել թէ Մելիտինէի աթոռին  
վրայ այսպիսի եպիսկոպոս բնաւ զոյտթիւն  
չէ ունեցած, որովհետեւ Ո. Ներսիսի ժամա-  
նակակից եպիսկոպոսաց անուանըց զիտենք թէ  
ոյք էին. նախ Ուրանիս (վերջին անգամ  
յիշառակուած յամին 363), և յետոյ Ու-  
րէյս։ որ հայ կաթողիկոսէն վերջն այլ զեռ  
ապրեցաւ։ Այս ուրեմն Գնել եպիսկոպո-  
սը լոկ հեղինակին մտաց զիտեն է։ Դար-

1. Հեղինակին իշխանաց ցանկն եւ Փառառոսի ա-  
նուանց համաձայն չէ։

ձեալ, Արշակունեաց ծառայող և հպատակ իշխանաց մէջ երկու անդամ՝ կը հանդիպինք նաև Մելիտինեայ իշխանին<sup>1</sup>: Առափ կրնանք հետեցնել, թէ հեղինակն Մելիտինէ քաղաքը Մեծ Հայոց մէջ կարծեր է, ինչպէս որ Առաջին Հայքն այլ մի և նոյն քաղաքական պայմանի կամ առնչութեան մէջ կը դնէ: Կը պատմէ թէ ինչպէս Ա. Ներսէս բազմաթիւ եկեղեցիներ շինել տուալ Մերաստիոյ մէջ, յորմէ յայտնապէս կ'երեկի թէ հեղինակն բնաւ գաղափար չունի եղեք Հայոց թագաւորութեան քաղաքական սահմաններուն վրայ, որ արդէն վաղուց վերցուեր էր իր զրած միջոցին: Հսովմէական կայսերութեան սահմաններուն մէջ ևս նա եպիսկոպոսական թեմեր կ'ընծայէ Մեծ Հայոց կաթողիկոսին<sup>2</sup>:

Բոլորովին սխալ է հեղինակին այն վկա-

1. Գլ. Բ., էջ 55 և ՓՊ, էջ 88. Կերասիսի ձեռնադրութեան միջոց կ'երեկ՝ Սպանդիաս, և մահուան միջոց՝ Համամ: Ի մէջ այս երկու գիտաց կան Յն ամք, հեղինակն իմաստնաբար ի Մելիտինէ զրած է իշխանութեան փռփռխութիւն մի:

2. Յովհ. կաթողիկոս (էջ 55, ազագը. Երուսաղեմի, 1843) Հայոց ազգային եկեղեցական գասուն մէջ կը գնէ Մերաստիոյ, Մելիտինեայ և Մարտիրոսաց — քաղաքին (Նիբրկերտի) մետրապոլիտները: Հեղինակն թերեւ իրմէ օգտուած է:

յութիւնն , որով կը հաստատէ թէ Հայաստան մինչև Քաղկեդոնի ժողովը կախումն ունէր կեսարիայէն<sup>1</sup> : Հաւասարապէս՝ բայց նոյնափ ևս հակառակ պատմութեան՝ կ'աւանդէ յայն Պատմութիւնն (Արքաց), թէ Ա . Սահակայ անկմամբը կամ գահընկէց լինելովը վերջացաւ կեսարիոյ հայրապետաց նախազահութիւնը<sup>2</sup> : Այս ամբողջ զրութեանս մէջ միակ կարեոր և արժէր ունեցող բանն է՝ կարգն կամ գասաւորութիւնն գահուց հայ իշխանաց , որուն հեղինակը կը համարուի նոյն ինքն Ա . Ներսէս : Այն յիշատակարանս մի և նոյն աղքիւրը կամ ծագումը ունի՝ ի՞նչ որ ունէին Փաւատոսի մէջ զրանուած կաթողիկոսաց ուղեորութեանց պատմութիւնը : Անտարակոյս պատմիչն աչքի առջեւնեցեր է այն զրութիւնը , և անոր վրայ հիմնուած՝ իրեն տկար միջոցներով շարագրեր է Ներսիսի կենսազրութիւն մի : Իրը պատ-

1 . « Այնք աղաքաւ առնուին ձեռնազբութիւն Հայքի կեսարիա , մինչև ի ժողովը Քաղկեդոնի » : Պատմ . Ա . Ներսիսի կաթողիկոսի Հայոց . Սոփ . Հյկ . Զ . Եջ 51 .

2 . Combefis. hist. Monoth. cl. 289 « ἡ σὸν χειροτονία τῆς Ἀνατολῆς ἐκωλύθη ἐκ τῆς Καισαρείας διά τὴν ἐκπτώσιν τοῦ Ἰσαίαν » : որ է . « Զեռնազբութիւնն Արեւելից բարձաւ ի կեսարեայ անկմամբն Ասհակայ » :

մական աղբիւր բնաւ արժէք շունի այս զրութիւնս այլ, ըստ որում Փառաստոսի հետ չի համաձայնիր :

Մինչև ցարդ մեր ըրած քննութիւններէն և զիտողութիւններէն կրնանք եղբակացնել, թէ առաջին ժամանակաց հայկական եկեղեցւոյ պատմոթեան համար միայն երկու ստուգիւ արժանահաւատ աղբիւրներ ունինք, որ է Ա. Գրիգորի՝ վարդն Ազաթանզեղոսի զըրքին մէջ, և երկրորդ՝ Փառաստոսի պատմական երկասիրութիւնն :

Հին հայկական եկեղեցւոյ գոյութեան և կենաց պատկերն՝ ստուգիւ իրեն յատուկ բնաւորութեամբ մի կը ներկայանայ մեզ, որ և զզալի կերպով կը տարրերի ասկազայ մինակէն : Եւ այս բանիս մէջ կը դանենք երաշխաւորութիւն մի արժանահաւատութեան այն աւանդութեան, որ երկարժամանակ մասցւած էր անհոգութեամբ :

Հայկական եկեղեցին կը պարծի, թէ իսրհիմազիրներն մահկանացու մարզիլ շեն եզած և ոչ առարեալը, այլ նոյն ինքն Վրիստոս : Այս բանս կը հաստատէ նա՝ հիմնուած Ազաթանզեղոսի պատմութեան վրայ<sup>1</sup>. Ա.

1. A (= Agathangelos Ausgabe v. Titlis 1882( CII ff. S. 427 ff. — G (= Agathangelos neu herausgegeben von Paul de Lagarde. Abh. d. Gött. G. d. Wiss. phil. hist. Cl. 1888, 35 S. 1 ff) § 111 ff.

Գրիգոր կը պատմէ վաղարշապատ մայրաքա-  
ղաքին նորադարձ ժողովրդեան՝ իրեն երեցած  
զարմանալի տեսիլը : Կը տեսնէ նա երկինքը  
բացուած, և Որդին Աստուծոյ՝ որ երկնաւոր  
զօրաց հետ կ'իջնէ, և ոսկի ուռամբ կը բախէ  
զետինը : Յետոյ կը տեսնէ քաղաքին մէջ-  
տեղը՝ արքունի պալատին մօտ՝ ոսկեղէն  
խարսխի մի վրայ բարձրացած հրեղէն մեծ  
սիւն մի . նորա խոյակն ձեւացած էր ամպե-  
րէ, որոց վրայ կը փայլէր լուսաճաճանչ խաչ  
մի : Կը տեսնէ զարձեալ ուրիշ երեք հաւա-  
սար սիւներ, բայց աւելի ցածք և արեան  
պէս կամբագոյն խարսխաց վրայ հաստա-  
տուածք երեք տեղեաց մէջ, ուր նահատակե-  
ցան կուսանքն՝ Գայիանէ, Հոխիսիմէ և ա-  
նոնց ընկերք : Եւ այս սեանց վրայ կը բար-  
ձրանայր կամարակասդ ամպեղէն խորանաձե-  
զմբեթ մի : Եւ այս զմբեթին զաղաթը կայր  
Աստուծոյ աթոռն իւր բոցափայլ խաչով, որ  
կը սփռէր իրեն համատարած լոյսը և պայ-  
ծառութիւնը :

Այս արեելեան կրօնական մտացածին  
տեսիլներուն նպատակն ամենապարզ է . և  
սակայն ընդարձակ մեկնութիւն մի կը յա-  
ջորդէ տեսլեան<sup>4</sup>. « Առաջին խաչն, որ

1. Agath. A. S. 435 = G. § 117. — Խակ ոսկեր-  
վենակ. 1862, էջ 562—3.

ցուցաւ քեզ, ունի զպարծանս քահանա-  
յութեան պատուին, պանծացեալ ի խաչն  
Քրիստոսի : Խոկ երեք ևս՝ որ ունին զաեղի  
վկայարանացն հանգստի սրբոցն, զի ի տեղ-  
ւոջ հեղման արեանն իւրեանց շինեցին հան-  
գիստ վկայարանք ոսկերաց իւրեանց : Խոկ զի  
բարձր է սիւնն առաջին, զի մեծ և բարձր  
է պատիւ կաթողիկէ եկեղեցւոյ քան զամե-  
նայն սրբոցն . . . : Եւ ի վերայ կատարոյ շի-  
նուածոյն զոր տեսանես, նոյն ինքն աթոռ  
ամենազօր թնութեան աստուածութեանն ինք-  
նութեան . զի նա ինքն զլուխ է Եկեղեցւոյ  
սրբոյ » : Յետոյ, ըստ երկնաւոր ծրագրին՝  
զօր ցըցուց կամ զծեց ինքն Քրիստոս, կը  
շինուին գիշաւոր եկեղեցին<sup>1</sup> և կուսանաց  
վկայարանք :

**Այս** պատմութեան ամենամեծ նշանակու-  
թիւնն յայտնի կ'երեի : Հին արքայանիստ  
վաղարշապատ քաղաքն այնուհեան Հայաս-  
տանի հոգեոր մայրաքաղաքը կը զառնայ-  
բայց հայկական Հռովմն՝ շեղաւ յաւերժական  
ոստան (urbs aeterna): **Ապագայ** փոթորկա-

1. Ա. Գրիգոր նոյն պահուն տակաւին եպիսկոպոս  
ձեռնադրուած շինելով, ոյն տեղը՝ ուր վերը մայր ե-  
կեղեցին պիտի բարձրանայր՝ պարզ խոչ մի կը կանգնէ  
պարապապատ :

լից կոխներու միջոց՝ կամողիկոսն թողոց քաղաքը, և յետ այլի այլ պանդիստութեանց՝ յաժին 4 կե գարձեալ նոյն սրբազան տեղայն մէջ հաստատեց իւր աթոռը, ուր կայ մինչեւ ցայտմ։ Եկեղեցայէս Երիշաժին կը կոշտի, ի յաւերժ յիշատակ այն աւանդութեան՝ թէ ինքնն Քրիստոս հիմնարկեր է հայկական Եկեղեցին և հաստատեր է նորա ինքնազիխութիւնը (ՃՈՒԿԵՓՃԼԱ), իրեն բացարձակ անկախութիւնը ու է արեելեան և արևմտեան պատրիարքութենէ։

Ազաթանգեղոսի գրոց Խմբագրութեան մասին Գուտչմիզի<sup>1</sup> ըրած ուսումնասիրութեամբը ցուցուած է արզէն յայտնապէս, թէ իրեն բաղած մասն իրը Տեսիլ կամ Յայտնութիւն Պրիգորի, և որուն միայ հաստատուած է հայկական Եկեղեցւոյ տառուածային հիմնարկութեան բովանդակ աւանդութիւնն։ Եղարու կը պատկանի։ Պրուած է վաղարշապատցի քահանայէ մի՝ ի սկարծանս այն առեղ զոյսւթիւն ունեցող Եկեղեցւոյն, և այնպիսի ժամանակի մէջ՝ յորում ոկտեր Էր Յաղկերտ Բէ հայածանքն, ուստի և 451—456 տարիներուն մէջ։ Մայզ պատմական աղբիւրն,

1. Kl. Schr. III S. 395 ff.

որ է՝ Ալարք Ո. Գրիգորի կոչուածն, բնաւ  
եկեղեցական պատմութեան այս հիմնական  
կետիս վրայ յիշաստակութիւն չըներ : և Դիտե-  
լու արժանի է, կըսէ Գուշշմիդ<sup>1</sup>, նորա բաց-  
արձակ լութիւնն Գրիգորի զործոց մասին  
ի վաղաբշագուա՝ կաթորիկոսութեան աթոռոյն  
վրայ ։ Կը բացատրէ նու զայս՝ այն տեղե-  
կութեանց գուշտական յատկանիշով, բայ  
որում լոկ հարաւ—արևմտեան Հայաստանի կը  
պատկանէին<sup>2</sup> : Սակայն այս բանու չէր պատ-

4. Kl. Schr. S. 382.

2. Նոյն, անգ. էջ 582. — Այս բանու սխալ է. վասն  
զի Գրիգորի առաքելութիւնն ամփոփուած չէր միայն,  
այս անցուելութեանը համեմատ, հարաւ և արևմտեան  
զատաց մէջ, այլ հաւատաբարէս արեւելեան կա-  
րենագոյն կողմերը ի նկատի առնուած էին: Խոկ թէ  
յայտնազեւ նշանակուած են ուզեկ երկու առներուն անդը և  
թուականը, այս բանու յրեն առանձին պատճառերը  
ունի: Երկու անցերն են, որոնց մէջ բայցից Գրիգոր  
Յովի: Մկրտչի և Աթանազիւնոց նյիսորները, գորա  
կեսարիայէն բերեր եր. այսինքն է, յԱշուշաւ: Տա-  
րօնոյ մէջ, և ի Բագաւան (Պիցուան)՝ Բագրեանուայ մէջ:  
Առաջնորդ տօնը կը կատարուեր յ՛՛ Սահմի, երկրոր-  
դին՝ Կառասարդ էին, յորում ի պատիւ գիցն Ամա-  
նորայ (Պիւ Հա-ր-ր-ր-ը, Փալէնուու Ֆէօւ: յոյն թարդմա-  
նութեան մէջ) ուրախական հանգիստ կը տօնուեր ե-  
րախույրի պաղոց յիշաստակը: Երաւամի ազա այն նըշ-  
խարներն, որոնք յատուկ զօրութիւն մ'ունէին պաշտ-  
ապաներու ընդունմ գիւց, երկրին տօներուն համար բաշ-  
խուեցան գիտաւոր կեդրոններուն մէջ: Քրիստոնէական  
նոր տօներն ոչեաք էին հայտնի ժողովրդական գից  
նորիքայ էին ազգային տօները: Ատուգիւ, բայ վկա-  
յութեան Փաւատուի, էին ժամանակները տօներ էին

ճառը, որովհետեւ Գ. զարուն մէջ վաղարշա-  
պատ չէր Հայաստանի հոգեոր մայրաքաղա-  
քը, այլ Տարօնոյ Աշտիւատ քաղաքը՝ հա-  
րստային Հայաստանի մէջ։ Այս քաղաքիս  
սրբութիւնը, որ մայր Եկեղեցին էր և Հա-  
յաստանի հոգեոր կեղրոնավայրը, այնշատի  
նուիրական էր և եղական, որ նոյն նշանա-  
կութիւնը շունէր վաղարշապատ, զեռ այն  
ժամանակ բոլորովին զորի լինելով հոգեոր  
կամ սրբագան յատկաւթենէ։ Խնչովէս որ  
Տարօնոյ զիխաւոր քաղաքն, իրեն հոչակաւոր  
երեք մեհենից պատճառաւ, որոնք նուիրեալք  
էին առ Ամանգն (Հերակլէս)՝ սպանիչն օձից  
(վիշտապարադ, ծրախոնտուուչւրից), առ Ասկե-  
մայրն Անահիտ և առ Աստղիկն (Ափրաղի-  
տէ), հեթանոս քրմաց զիխաւոր կեղրոնատե-  
ղին Եղեր էր. այսովէս նաև Գրիգոր կործա-  
նուած մեհենից տեղը կանգնեց Քրիստոսի  
Եկեղեցին<sup>1</sup>, և բրիստոնեայ Հայաստանի կե-  
րկու զիխաւոր տաները։ Աշտիւատաց մասին առևս զիրը  
և էջ 61-2 Բագաւանի հանգէռն կը կատարուէմ մինչև  
ի կէս նոյն գարուն՝ խուռանքնթաց բազմութեամբ շուր-  
ջակայ ժողովրդոց և ներկայութեամբ շատ եղբակացու-  
աց և երկու նուիրակաց կութողիկոսին (Փառատ. Պ.  
Ժ.): Թերեւ առելի ուշ ժամանակ վնասակար եղած  
լինի Ամարշապատի նախանձաւորութիւնն կամ մըր-  
ցումն։

1. Ըստ Հայ Աղաթահեղիկոսի, Ճ՛մ (ապզր. Ակ-  
նեակ. 1862, էջ 610), եկեղեցւոյ քիմունըը կը զիտ

զրոնը բրաւ զայն : Այս բանս կը հաստատուի Փաւառութեամբ : Առիջորաբար կը կոչուի նա՝ մեծ և առաջին և մայր բոլոր Հայաստանի եկեղեցեաց, որ և կը զանուէր Տարօն երկրին մէջ : Ուրիշ աեզ կ'ըսուի . և Նախ և (q)առաջին և զրիխաւոր աեղին պատուական, զի յառաջ նախ անդ շինեալ էր զառրը եկեղեցին, և ուղղեալ սեղան յանուն Տեառն<sup>2</sup> : Կը կոչուի նաև այլուր . և Գլխաւոր սեղան, ամոռ իշխանութեան հայրապետացն<sup>3</sup> : Տեղոյն պաշտպան սրբոց տօնն, որ է՝ Յովհաննու

Գրիգոր և կը կանգնէ սեղան մի ի պատիւ Քրիստոսի . և Զի նախ անդ արար սկիզբն շինելոց եկեղեցեաց, և ուղղել սեղան յանուն Առքը Երրորդութեանն և կազմել աւագան մկրտութեանն : Յոյնը կ'ըսէ . թէ նախ կանգնեց սեղան մի « Ճն ծնըրաւ Շիշ ծծչու Շուն Յուն » . ապա ընթերցեր է նու . « սեղան փառաց Աստուծոյ » և ոչ « Քրիստոսի » : Առաջ կը հաստատէ . թէ շատ սեղաններ (Յսուստիրա, իսկ Ա . մէշ-ն) կանգներ է « Ճն ծնըրաւ Խրιստօն » . մինչդեռ հայն ունի « յանուն Առքը Երրորդութեանն » : Այս աեզ ինձ թուի թէ յոյն պահեր է ճիշդ բեադրին իմաստը . իսկ հայերէնն իսկեպարուներ է . վասնզի Փաւառու այլ (Պ. ԺԴ, էջ 36) կ'ըսէ . « Զի յառաջ նախ անդ շինեալ էր զառրը եկեղեցին, և ուղղեալ սեղան յանուն Տեառն » :

1. Հման . Փաւառու Պ. Դ. , էջ 7 . « ի մեծն յառաջն ի մայրն եկեղեցեացն Հայոց» որ էր յերկրին Տարօն . Պ. ԺԴ, էջ 56 . « ի մեծն և նախ (q)առաջին եկեղեցին ի մայր եկեղեցեացն ամենայն Հայաստանեաց :

2. Փաւառու Պ. ԺԴ, էջ 36 .

3. Փաւառու Պ. ԺԴ, էջ 57 .

լարասպետի և Աթանազինեայ, զոր Ս. Գրիգոր պատուիրեր էր կատարել ամեն տարի՝ 7 Մահմի, Հայուսուսնի ամենամեծ տօներէն մին էր. և Քանիզի այնովէս խոլ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց, հանզերձ թագաւորութիւն և մեծամեծօքն, նախարարօքն՝

1. Եփառելի է, թէ այս մեծ ամսախմբութիւնն կը կատարուէր հարաւային Հայուսուսնի քաղաքներէ միոյն մէջ՝ Այս բանին պատճառն այն է, որ գետ Դ գարու առաջին կիսուն հարաւային Հայուսուսնի քաղաքական ամենամեծ կարենութիւն ուներ քան վերջը. Տիրու թագաւորն (326-557) ընդհանրապէս հարաւային կազմերը կը բնակէր, ինչպէս Մատիաց գաւառին Շնարեց քերպին մէջ (Փառառ. Պ. մ. էջ 52), և կամ Աղձնեաց Շառանէ առանին մէջ (Փառառ. Պ. մ. էջ 59): Անզեղ և Շնարեց քերպերն արբունի էնց-պա-պա-պա- (ԿԱ-ՆՈ-ՎԱ-ԼԱ-ԿԱ-Ց) էին (Փառառ. Ա. Ա. էջ 211): Անզեղ քերպին մէջ բաց ի գանձերէն կային եակ շատ թագաւորաց ցիրքերը. — ամսակը վրիզական Տիզրանց գերի բնած թագաւորաց (Strabo XI p. 532 C) գերեզմանները կարծեցին, սակայն սուսպիր արշակունի թագաւորաց էին, «արանցն արշակունիաց» (Փառառ. Պ. մ. էջ 146): — Յատկապէս հարաւային գաւառաց նախարարը կ'երեւն միւս թագաւորին չուրիլ, ինչպէս են Շոկեացին Աղձնեաց, իշխանին Մեծ-Մատիաց, Մատիաց-Շառանց, Աղձնեաց և Հայանենից: Յիրամի գարմանարի է այս բանը, որով հետեւ յիշեաց նախարարութիւնը (ի բաց առեալ Աղձնեաց գաւառը), յետոյ համամշական նախանդ Չորրորդ Հայոք կը կազմեն. և յամին 297 հաստատած իրազարութեան գաւանց մէջ կ'որոշուի՝ որ Անզեղուն և Մատիր Հռովմայեցւոց ձեռքը անցնին: Պրոկոպիոս կ'աւանդէ, թէ հինգ ժառանգական «Կամբարարաց» կառավարութիւնն իրազարութեամբ առեալ այս նախարարութեան մէջ, եղին խոլ հովմէսական տիրա-

և աշխարհախումբ բազմութեամբ պատռել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կոսցն, և ապա յանուն առառածութեանն սրբեցան, և եղեն առն ազօթից և աեղի ուխափց ամենայն ուժեք: Ամանաւանդ յայն ի զիմաւոր տեղին յեկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ, կատարել անդ ամի ամի եւրե անգամ<sup>1</sup> »: Ինչպէս յայտնի է, այս տեղ խօսքը ազգային ամենամեծ տօնախմբութեան մի լրայ է, որ Հայուսանի ամենէն աւելի սրբազան տեղուցն մէջ կը կատարուէր: Եօթն անգամ կատարելու սովորութիւնն անշուշտ հեթանոսական աւանդութենէ մի առեր է իւր ծազումը: Արդ ո՛ և է խոհական և անկողմնասէր ընթերցող

պետութեան միջոց, մինչեւ Զենոնի կայսերութեան ժամանակը: Անոնց հռովմէական կայսերութեան հպատակ լինելով նշանն էր՝ իշխանական չքեղ զգեստոց տրաւթիւնն (Procop. de aedif. III, 1 S. 24), ինչպէս էր նաև ի Վրաստան (τὸν δὲ Ἱεροπόλισθα τὰς σίκειας βασιλείας τὰ σύμβολα Ῥωμαῖοις ὁφελεῖν. F. H. G. IV S. 189): բայց նորա՝ հռովմէական պետութեան հպատակ լինելով ազատ չէին նայ թագաւորին հպատակութենէն, որ նոյնպէս Հռովմայեցւոց գերիշխանութեան ներքեաւատական իշխան մ'էր: Սոյնպիսի կրկնակ առնչութիւններ գոյութիւն ունէին նոյն ժամանակները ուրիշ կողմեր են, ինչպէս ի Դամասկոս և հռովմէական Արարիա նահանգին մէջ, և այլն: Հմատ. Mommsen, Röm. Gesch. V S. 476 Anm. und 486,

ողիսի տեսնէ , թէ Աշտիշատայ այս եկեղեցաւ-  
կան շքեղութիւնն յայտնապէս կը հակառակի  
Աղարշապատու զրոյցին կամ աւանդութեան :

Աշտիշատը՝ եկեղեցական կեզրոն լինելով  
նոյնպէս ժողովներու զումարման զիսաւոր  
տեղն էր : Ներսէս կաթողիկոսին հրամանաւ  
ու ամենայն եպիսկոպոսունքը Հայոց աշխարհին  
ժողովեցան ի զիւղն Աշտիշատ , ուր զոտա-  
ջինն զեկեղեցին էր շինեալ . զի նա էր մայր  
եկեղեցեացն , և ի տեղի լեալ նախնեացն  
ժողովոց սիւնհոգոսին<sup>1</sup> ու : Յետոյ երրոր ար-  
քունի տան հաղարշապեան (Հայր մարզպեան)  
կը սպառնայր եկեղեցական բնդարձակ կա-  
լուածները յարբունիս զրաւել . Ներսէս կ'ըսէ  
իրեն . և Տէր մեր Յիսուս Քրիստոս , որ ըն-  
տրեաց նախ զայս տեղի՝ զնել զանուն իւր  
տատ . . . սպառուիրեաց մի ամեննեին յայլոյ  
ինչ ակն զնել կամ ցանգալ<sup>2</sup> ու : Այսպէս ահա  
յայտնի կը տեսնուի , թէ տակաւին դ  
զարու կիսուն շատ սակաւ ծանօթութիւն կայր  
Աղարշապատու օծութեան մասին , այնպէս  
որ Ներսէս զՔրիստոս կը համարի հիմնադիր  
մայր եկեղեցւոյն<sup>3</sup> :

1. Փաւատ . Դ . Դ . էլ 76 .

2. Փաւատ . Դ . Փ . էլ 148 .

3. Կ'հեթազրուի՛ Աշտիշատ զանունդ եկեղեցւոյն :  
Եր . Թ .

Փաւստափ ուրիշ երկու տեղիք աւելի կարևորագոյնք են : Կը յիշատակէ նու յանուանէ Հայաստանի սրբազն տեղերը<sup>1</sup> . ա . Մայր եկեղեցին՝ հանգերձ զերեղմանաւ առաքելոցն . բ . Թորդան , որ էր լուսաւորչին զերեղմանը . գ . Տրդաւ թագաւորին զերեղմանն , և վերջապէս՝ դ . ո ի գուառն Այրարատեան , որ նախավկայքն Քրիստոսի՝ Գայիանէ և Հոխիսիմէ կային (կեցին) , իսրեանց հանգերձ գործակցօքն : Ազա ուրեմն ծանօթ են Փաւստուի վազարշապատու մէջ զանուած նահատակքն կամ սրբուհիք . սակայն կաթողիկոսանիստ եկեղեցոյ մասին՝ որ տպա կը զերպանցէ քան զամենայն եկեղեցիս Հայաստանի՝ զեռ ամենեին տեղեկութիւն շունի : Երբոր Յուսիկ կաթողիկոս ձեռնազրուած կապարովիայէն զարձաւ , թագաւորն և անթիւ բազմութիւն ժողովրդոց ընդ տապա զացին և ողջունեցին զինքը . և յետոյ և մատելի քաղաքն մեծ յԱյրատաւ<sup>2</sup> , յեկեղեցին

1 . Փաւստ . Գ . ԺԴ :

2 . Յեկեղեց ձեռազրի վրիզակ լինի այդ փոխանոսկ Աւելութ գրուելու . վասն զի ուրիշ ոչ մէկ տեղ , ոչ Փաւստուի և ոչ Ազաթանգեղոսի մէջ . չի յիշուիր թէ Արտաշատու մէջ եղած լինի գլխաւոր եկեղեցին կամ Հայրապետական աթոռն , այլ ընդհակառակն Աշտիւտայ մէջ , ինչպէս տեսանք զերը :

ԵՐ . ԲՊ .

զառնային, և հասուցանելին զյանկալի մանուկն ըստսիր յաթոռ հայրապետական<sup>1</sup> Ապա ուրեմն յԱրտաշատ<sup>2</sup> էր հայրապետական աթոռն և ոչ ի վազարչապատ :

Հարկ է յիշեցնել, թէ մինչև Կերուկ կաթողիկոսի մահը՝ հայկական եկեղեցեցին կախումն ուներ Եկեսարիայէն : Խոկ արդ բոլորովին իրարու հակառակ ենթապրութիւնը են, հրապառակոթիւնն աւարապալատական իշխանութեան և ուղղակի աստուածային հաստատութիւն : Ապա ուրեմն հաւանականարար՝ այն ժամանակ միայն հնարուեցաւ վազարչապատու զբայցն կամ աւանդութիւնն երբոր իսկառ բնորհատեցաւ Եկեսարիայ հետ ունեցած յարաբերութիւնն : Այս բանիս հետ ամենայն կերպով կը համաձայնի մեր յառաջազգին ապացուցած առաջարկութիւնն, թէ քրիստոնեայ Հայաստանի նախկին ժամանակց մէջ եկեղեցական կեզրոնն չէր վազարշապատ՝ այլ ուրիշ տեղ մի, մինչդեռ նախը սրբոց տեղական պաշտամամբ միայն ծանոթ էր : Հետեարար Ե զարու մէջ կասկական ոգումի հնարուած և առանց ո՛ւ և

1. Փաւառ. Գ. ԺԲ, էջ 50.

2. Ըստ իս Աշուշաւ կարդալու է. անս ժան. 2, էջ 65:

Մ. Թ.

է պատմական արժէքի զրոյց մ'է այն, յուրում կը պատմուի Ա. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով հայկական ազատ ինքնապուխ եկեղեցւոյ հաստատութիւնն :

Մինչդեռ, ընդ հակառակն, պատմական փաստերով ապացուցուած ճշմարտութիւն մ'է հայ եկեղեցւոյ միւս պարծանքն, թէ Հայաստան առաջին երկիրն եղեր է՝ որ ընդուներ է քրիստոնէական կրօնքը, հռովմէական կայսերութենէն շատ յառաջ : Աակայն պիտի սխալի մէկը եթէ կարծէ, թէ նոր կրօնքն իսկոյն ընդունելի եղաւ նաև հասարակ ժողովրդեան մէջ, մինչ ընդ հակառակն մուտքաւ նա բարձր իշխանութեան կողմանէ և բռնութեամբ : Բնաւ նորա հետ կապուած չէր ու և է հոգեւոր կամ տնտեսական ազատութիւն : Գ և Դ զարուց Հայաստանն պարզապէս առատական իշխանութիւն մ'էր, ճիշդ մի և նոյն կերպով կազմակերպուած, ինչպէս էին երկու զբացի երկիրներն՝ կապադովիիա և Պոնտոս՝ նախ քան իրենց հռովմէական նահանգ դառնալը : Բաց ի զօրաւոր, պատերազմասէր և անկախ ազնուականութենէ մի, կայը նաև Հայաստանի մէջ ամենամօխ քահանայական դասակարգ մի, որուն պատկանող ընդարձակ կալուածները

կը մատակարարէին բազմաթիւ սպասաւորք (լըքօծուլօւ)։ Թուի թէ դիւրին եղաւ շահիլ ազնուականութիւնը ի նոր հաւատոս Քրիստոսի<sup>1</sup>։ Տրդատայ նման իշխան մի, որ ամենայն ասպետական ձրիւք և առաքինութեամբք օժտեալ էր, և միանդամայն օտարին լծէն ազատեր էր իւր հայրենիքը, պէտք էր զարմանալի ազգեցութիւն մ'ընել այն անկիրթ՝ բայց քաջասիրտ մարդկանց վրայ այս պատճառաւ ազնուական դասակարգն այլ առանց զժուարութեան հակատակեցաւ նորագերիշխանութեան։ Նոր կրօնքին քան զամէնն աւելի յամառութեամբ ընզիմացան քրմերն, որոնք թէ լաւ կազմակերպուած էին և թէ հմուտք էին կոխւներու։ Աակայն այս գէպքիս մէջ շատ խոհականութեամբ և յասով զրութեամբ մի կը զործէին թազաւորն և Գրիգոր։ Զուր տեղ քրմերն սպաշտապանեցին իրենք զիրենք, օգնութեամբ մեհենից սպասուորներուն, իրենց սրբազան և պատնիշափակ . ամրոցաց մէջ։ Բոլորն այլ կարգակործանեցան հիմնայատակ . մեհեաններն տա-

1. Կ'ըսէ Աղունթանգեղոս (ՃՇԵ, յէջ 610, հրատ. Անհետկոյ)։ «Նախ զայնոսիկ լուսաւորեաց մղբառութեամբն՝ որ ընդ իւրն էին ՀՀ-ՀՀ Ն-Ե-Ր-Շ-Ն, որ ընդ նմայն երթեալ էին ի քաղաքն Ահսաբացւոց»։

պալեցան, և նոցա տեղ եկեղեցիներ կանգնեցան, և քուրմիթու կալուածներն անցան քրիստոնեայ քահանայից, որոնց վրայ ուրիշներ ևս աւելցուց թագաւորն առաստաձեռնութեամբ :

Երկու միլիունինը խուռն բազմութեան ժաղավրոց՝ պատկեցին զործը : Յայտնապէս մասնաւոր նպատակներ ուներ թագաւորն՝ քրիստոնեայ կղերը բարձրացնելուն և ճռիացնելուն մէջ, որ բայ ամենայնի հեթանոս քրմաց քաղաքական պրոթիւնը ստացաւ : Այսու կը զիտէր նա հակակիո մի զնել զերիշանութեան ազնուականաց, որք բոլորովին ընկածեր և ակարացոցեր էին միապետութիւնը : Երկու առաջին սերնդոց միջոց, Տրդատայ և իւր Խոսրով որդւոյն թագաւորութեան ժամանակ, ոյն քաղաքականութիւնն առանց ընդդիմութեան յաջողութիւն ունեցաւ : Այս պայմաններուս մէջ հաւանական է այն ենթազրութիւնն, թէ երկրին քրիստոնէութիւնն շատ վերիվերոյ էր, և թէ այն ընդհանրապէս տարածուեցաւ միայն իշխան տարերաց մէջ, որ է՝ ազնուականաց և քահանայից զասակարգերուն մէջ, և այս բանս ստուգիւ իրականութիւնն է :

Նոյն իսկ երկրին սրբազան կեղրոնին մէջ

յԱշտիշատ՝ դեռ խոր արմատներ ձգեր էր  
հեթանոսութիւնն : Երբոր վրթանէս, Գրի-  
գորի որդին և երրորդ կաթողիկոսն, խոր  
հօրը շինած եկեղեցւոյն մէջ կը կատարէր  
առառածային պաշտօնը, ծածուկ կերպով կը  
միաբանին այն ամէնքը՝ որոնք մինչեւ նոյն  
ժամանակները պահեր էին իրենց հին կոտ-  
ոպաշտութիւնը<sup>1</sup>, զրեթէ երկու հազար մար-  
դիկ, հայրապետը սպաննելու համար : Այդ  
մարդիկը բոլորն այլ հեթանոս քրմերու ըն-  
տանեաց կը պատկանէին և նոցա կուսա-  
կիցը էին : Ապա շատ իմաստութեամբ զոր-  
ծեց Գրիգոր, երբ պարսպապատ ամրացուց  
սրբազն աեղերը թէ՛ քաղաքաց և զիւղից  
մէջ, և թէ զղեկաց և զաշտաց մէջ<sup>2</sup> : Հե-  
թանոսը զայրացած կը յարձակին և և հա-  
սեալ պատէին զմեծ քաղաքորմն եկեղեցւոյն  
Աշտիշատու<sup>3</sup> : բայց հրաշից ազգեցութեամբ  
շեն կրնար բռնել զվրթանէս, և վերջապէս

1. Փառատ. Պ. - Պ., էջ 7. « Որք միանգամ զնեու-  
թիւն կուսպաշտութեան հեթանոսութեան զնովն առվո-  
րութիւն մինչեւ ցայնժամ ևս ունեին զաղանի, ի մի-  
միաբանութիւն ժողովեալք՝ հասանէին իրբե հազարը  
երկու, խորհուրդ եղեալ ընդ միմեանս՝ սպանանել զքա-  
հանայապեան Աստուծոյ զվրթանէս » :

2. Ագաթ. ձի. էջ 587. հրատ. Վենետիկ. 1862.

3. Փառատ. Պ. - Պ., էջ 8.

ամէնքն ալ քրիստոնեայ կը դառնան և կը  
մլրտուին : Աակայն շատ տարօրինակ բան է ,  
որ մասնաւորապէս կանայք են հին կրօնքին  
պաշտպանք կամ կուսակիցք . Աշտիշատու ա-  
պսատամբութեան զլիաւոր և ծածուկ զրր-  
գուին էր Խոսրովի կինն , « մեծ ափկինն Հա-  
յոց <sup>1</sup> » : Եղյնապէս Փառանձեմ թագուհին ,  
Պապ թագաւորին մայրն , դիւաց նուիրեց  
իւր զաւակը , « քանզի անօրէն մարդ <sup>2</sup> էր  
և ամեննեին յԱստուծոյ ոչ երկնչէր <sup>3</sup> » : Թէ  
և քահանայք բուռն կերպով կոռւեցան և  
ջանացին վերցնել հեթանոսական սովորու-  
թիւնները , և մասնաւորապէս մեռելոց հա-  
մար ըրած անվայել կոծը և ողբերը , սա-  
կայն նոքա զեռ ապագայ ժամանակաց մէջ  
այլ շարունակուեցան : Յամին 378 , Մամիկո-  
նեանք իրենց ազգատոհմի քաջ սպարապետին  
Մուշեղայ մարմինը առնըլով , « հանին եղին  
ի տանիսն աշտարակի միոյ . ասէին՝ թէ  
վասն զի այր քաջ էր , առիւզք իջանեն և  
յարուցանեն զզա <sup>4</sup> » : Թէ ո՞րշափ խոր կեր-

1. Փաւառ . Գ . Գ . էջ 8 .

2. Հեղինակն շատ ճշգութեամբ անձ—person կը  
թարգմանէ այս բառը , որ Փառանձեմի համար զրուած է :  
Ո՞ . Թ .

3. Փաւառ . Գ . Կ . էջ 159 .

4. Փաւառ . Ա . Լ . էջ 245 . — Առէղներու մա-

պավ հեթանոսութիւնն արմատացեր էր մա-  
սամբ չայատանի մէջ, կը հաստատէ մեզ  
կորեան պատմութիւնն, որուն համեմատ-  
գեռ Եշ զարու առաջին քառորդին՝ հարկ ե-  
ղաւ որ Ո. Մեսրոպի Գողթն գուտաէն ար-  
մատախիլ ընէ հեթանոսութեան վերջին մը-  
նացորդները<sup>1</sup>: Այս իսկ Պ. զարու առաջին  
կիսուն՝ հեթանոս կրօնին զեռ իրեն ազգեցո-  
թեան մէջ էր. և թէ որշափ սակաւ մուտ զտեր  
էր քրիստոնէութիւնն ժողովրդեան քազմո-  
թեան մէջ, կը վկայէ մեզ Փաւատոս խիստ  
բառերով՝ Տիրան թագաւորին (326—337)  
կառավարութիւնը նկարազրելու միջոց<sup>2</sup>: Ժո-  
ղովրդն բոլորովին օտարացեր էր քրիստո-  
նէական կրօնքն, իրենց թագաւորին օրի-  
նակին հետեւլով, որ եկեղեցւոյ սխերիս  
թշնամի էր. վասնզի քրիստոնէութեան ա-  
նունը միայն ընդուներ էին արտաքսայէս և  
կը համարէին զայն իրր մարդկային կրօնի  
մի և ո մոլորութիւն իմն մարդկութեան ։  
Ճշմարիտ քրիստոնեայք միայն նորա էին,

ոին հմետ. Առվա. Խոր. Ա. ՓԴ, և Langlois Coll. I,  
Տ. 26, N. 1. — (Հմբա. Խոյնուէս ՀԲ. Հ-+Պ+ Հ-+Պ-  
Հ. Պ. Վ. Այբառն, Հրատ. Վենեսուլ. 1895. Էլ 177-9.  
— Վ. ՓԸ):

1. Առվ. Հայկ. ՓԱ. Էլ 8.

2. Փաւատ. Պ. ՓԴ, Էլ 32-33.

որոնք կարող էին և հելլէն կամ ասօրի զբարութեամբը ։ զբուածները կարդալ իսկ արդ աղնուականութեան կամ նախարարաց մեծամասնութիւնն , ինչպէս նաև խառնազանն բազմութիւնն և շինականք , զուրկ էին այս զիտութենէս : Զուր տեղ վարդապետք և իբրեւ զյորդահեղեղ անձրեաց սաստկութիւն՝ զվարդապետութիւնն (հաւատոյ) ի վերայ հոսէին զցայդ և զցերել . ոչ ոք ի նոցանէն և ոչ մի բան , և ոչ կէս բանի , և ոչ զոյզն յիշատակ , և ոչ նշմարանս ինչ զոր լոէինն , և ոչ կարէին ինչ ունել ի մտի ։ վասն զի անոնց սիրան , ինչպէս Պատմիչն տրտնջելով կ'ըսէ , « ընդ անպիտանս և ընդ անօգուտս և եթ զրօնեալ էին » : Ըստ հին հեթանոս սովորութեան , անոնց անկիրթ և բարբարոս մտքերն՝ զիցարանական առասպելաց և զիցազնական երգոց և վիպասանութեանց հետամուտք և սիրողք էին . գաղանի կերպով կը կատարէին նաև իրենց հին պիղծ և անառակ սովորութիւնները : Իսկ այն տրտունջներն , թէ անկատար կերպով ըմբռներ էին քարոզուած վարդապետութիւնները , կը ցուցինեն , թէ որչափ սակաւ զարդացումն ըրեր էր անոնց մէջ քրիստոնէութիւնն : Մի անգամմիայն Գրիգոր իւր վարդապետութիւնները

Հին բնիկ հայկական լեզուով բացասրեց կամ  
քարոզեց<sup>1</sup>։ Խրեն յաջորդաց մէջ էին ան-  
նշան սրգիքն և զեռահասակ թոռն։ Նոյն  
ժամանակաց վարդապետք կամ ասորի<sup>2</sup> էին,  
ինչպէս էր հոչակաւորն Պանիկը, և կամ  
յոյնք, որոնք ընդհանրապէս չէին կրնար  
երկրին բնիկ լեզուով խօսիլ և կամ շատ  
անկատար կերպով<sup>3</sup>։ Եկեղեցական լեզուն  
ևս կամ ասորերէն էր և կամ յունարէն<sup>4</sup>։  
Այսպէս ուրեմն քրիստոնէութիւնն սեփհակա-  
նութիւն եղաւ զիտնական գառակարգին, որ  
է՝ այլեայլ լեզուներ զիտցողներուն միայն։  
Այսպիսի պարագայից մէջ զիւրաւ կը հաս-  
կըցուի, թէ ի՞նչպէս հին զիտցողնական երգերն  
և կրօնական հանդէսը անփոփոխ պահեցին

1. Աղաթ. Ա. Տիգ., էջ 492. «Հայրաբար հայե-  
րէնախօս գտաւ»։ (իսկ մեր հրատարակութիւնն ունի,  
էջ 655. «Ոյնպէս և առ եկեղեց հասեալ երեսալ՝ Հայ-  
ր-բ-բ-բ-»՝ հայերէնախօս գտաւ»։ — Պ. թ.)

2. Խրեմն այս վարդապետք մատցեր են զարձակա-  
նութօրինակ կամ անժանութ հեթանոսութիւն մի։ Եպի-  
փան Աղձնեաց երկրին մէջ կ'արգելու ձաւը ուսուելը, զոր-  
ուորը կը համարէին Ասորիք Փառաւ։ Ի՞ւ ի՞ւ։

3. Հաւանականաբար տեղույն բնիկ լեզուն չզիտ-  
եալն եղաւ պատճառ, որով ամենենին արգիւնք չունե-  
ցաւ։ Ա. Յակոբ Մէրժացւոյ առաքելութիւնն ի Արքու-  
նիւս՝ հարաւային Հայաստանի մէջ։ Փառաւ։ Պ. թ.։

4. Առանցոյն համար կը վկայէ Փարագեցի ի, էջ 54.  
իսկ վերջոյն համար Մ. Խոր. Պ. 1, 2.։

իրենց ազգեցութիւնը խառնազանն ժողովրդական մէջ :

Յայտնի է թէ կրօնք մի , որ նոյն թոկ ներսը այսշափ սակաւ արմատացեր էր , չէր կարող զարգանալ կամ տարածուիլ դուրսը : Երբոր Աղուանից պատանի կաթողիկոսն Գրիգորիս , վրթանեսի որդին , կ'աշխատէր զարձունել ի քրիստոնէութիւն Մազբաց : — Հիւսիսային ասպատակաւորաց — թազաւորը<sup>2</sup> , նա չի կարենալով համոզուիլ և հաւանիլ Վրիստոսի խաղաղաբար օրինաց , կ'ըսէ . « Զի ոչ յափշտակեսցուք , զի ոչ աւարեսցուք , զի ոչ առցուք զայլոյ , թէ կեցցուք այսշափ անշափ զօրաց բազմութիւնը » : Թազաւորն կառկածելով՝ թէ նորա առարելութեան մէջ հայ թազաւորին քաղաքական հնարազիսութիւն մի լինի , սպաննել տուաւ զհայրապետն :

Մնողհակառակն շատ դիառդութեան արժանի է , թէ ինչպէս սակաւ մուտ զուաւ Հայուտանի մէջ մազգեցանց կրօնքն , հակառակ բուռն

1. Նոյն են սոքաւ Հոնաց նետ , ըստ վկայութեան Փառասոսի . « Եւ երթեալ յանդիման լինէր թազաւորին Մազբաց , իշխանին բազմութեան զօրացն Հոնաց » : Փառաս . Գ . 2 . էջ 14 .

Եր . թ .

2. Առ ցեղով արշակունի էր , հետեաբար ազգակից հայ թազաւորաց , և կը կոչուէր Անեսան : Փառաս . Գ . 2 . էջ 14 .

Եր . թ .

ճգունց և ձեռնուուութեան սասանեան պետութեան : Այս դիսպուածիս մէջ սակայն քաղաքական պատճառ մի ևս կայր . արտաքոյ կարգի սաստիկ յարումն և հաւատարմութիւնն առ տունն Արշակունիաց<sup>1</sup> նկատել կու տայր Պարսից թագաւորը իրր ովերիս թշնամի : Ոչ միայն քրիստոնեայ հայր՝ այլ և հեթանոսը՝ բնուա չեն ոզեր ընկունել պարսիկ մոզերուն կրօնըրը : Պատմութիւն<sup>2</sup> մի կ'աւնովէ սակայն , — որ կրնայ առարկութեանց նիւթ լինել , — իրր թէ պարսիկք բանութեամբ մասցին զայն՝ իրենց տիրապետութեան ժամանակ՝ Պ. զարու մէջ , և կործանեցին հին կուրքերը : Բայց նոյն խել Պ. զարու մէջ ի սպառ օտար և անծանօթ համարուած է այդ : Երկու որացողքն՝ Մերուժան արծրունին և Աման մամիկոնեան , որք շատ ուղերու մէջ կրակառուներ (ատրուշանը) շննեցին , բոլորովին անոր և առանձին մնացին , և ոչ խել հարազատ բնասանեաց միջն իրենց հետեւողներ զունելով<sup>3</sup> : Կոյն խել

1. Առցա մասին շատ զօրուոր քացարութիւններ կը զակուին առ Փառառուի . Պ. , Ե . Պ. , ԵԵ . Ե , Ե Ե . և այլն :

2. Մովս . Խոր . Բ. , ՀԵ .

3. Փառառ . Պ. , ԵԵ . Ե Ե 179 .

Պապ թագաւորին միջոց , որ քաղաքական օրէն Պարսից կողմը միտեց և բոլորովին հեշտանոս յետաշրջութիւն մի սկսաւ , և շատերը թագաւորին հրամանաւ դարձեալ կուռքեր սկսան շինել և պաշտել<sup>1</sup> , բնաւ կրակապաշտութեան հաստատուելուն զաղափար անգամ չի կայ :

Հրէութիւնն , ընդ հակառակն , սաստիկ բուռն ազգեցութիւն ունեցեր է հին քրիստոնեայ Հայաստանին վրայ : Յայտնի է ԱՄ Խորենացիէն , թէ Հայաստանի բարձր աղոնուականութիւնն ինչպիսի եռանդեամբ երրայական կամ գէթ հին կտակարանական ծագումն կ'ընծայէր իրեն : Արշակունիք անգամ , կ'ըսուէր թէ , Արրանամէն և Քետուրայէն սերեալք էին . Բազրատունիք՝ Նարուքողնոսորի ժամանակակից Ամբատ անունով նշանաւոր հրէի մի սերունդք կը համարուէին , Ամրծրունիք և Գնունիք՝ Աենեքերեմի որդուց՝ որոնք Հայաստան փախեր էին , Ամատունիք՝ Ամսոնի հօրը Ամանովին , և այլն : Աստուածաշնչի աւանդութեանց այս կազակցութիւնն կը գտնուի նաև ուրիշ արհելեան ժողովրդոց մէջ , որոնք ինքնուրոյն կեանք մի

կը վարէին, անջատուածք հառվմէական կայ-  
սերութենէն, ինչպէս էին վրացիք և Արիա-  
սինիացիք, որոնք իրենց թագաւորները Դաւ-  
թէն և Առղօմօնէն սերեալ կը համարին<sup>1:</sup>  
Այսպիսի զբոյցք միայն խորենացւոյ ժամա-  
նակին չեն պատկանիք, վասն զի Փաւստոսի  
ևս ծանօթ է հին հայկական պատմութեան  
վրայ եղած հրէական ազգեցութիւնն+ ըստ  
իրեն վկայութեան, ինչպէս նաև ըստ Խո-  
րենացւոյ, Տիգրան բազմաթիւ հրէաներ բե-  
րեր է ի Հայաստան՝ հանդերձ իրենց Հիւր-  
կանս քահանայապետով։ Հայաստանի շատ  
քաղաքներու մէջ բնակչաց մեծ մաս մի,  
մանաւանդ թէ յաճախ մեծազոյն մասը, հրէա-  
կան ծագումն ունէին<sup>2:</sup> Բայց արդեօք նորա-  
ստուգիւ բնիկ երրայեցիք էին։ Մալսէօ<sup>3</sup> կը  
պատմէ, թէ Արտաշատու և Վաղարշապատու  
հրեայք Տրդատայ միջոց քրիստոնեայ զար-  
ձան։ Այս բանս սակայն տարակուսական կը  
թուի սակաւ մի։ Գրեթէ փորձութիւն կ'ու-

1. v. Gutschmid, Kl. Schr. III S. 295.

2. Փաւստ. Դ., Ար. ուր ստուգիւ թուերն կը ցու-  
ցընեն հեղինակին շափազանցութիւնը։ Կը խօսուի ե-  
րբայական զաղթականութեանց վրայ յԱրտաշատ, ի  
Վաղարշապատ, յԵրուանզաշատ, ի Զարեհաւան, ի  
Զարիշատ,

3. Մ. Խոր. Պ., Էլլ. :

նենանք հաւատալու, թէ մաս մի հայ ժողովրդեան<sup>1</sup> ստոգիւ պարծանք կը համարէր իրեն երբայսկան ծագումն ունենալը, իրը ազնուականութեան պատուանուն<sup>2</sup>: Այն հրէութեան նպաստաւոր նկարագրին հետ սերտ առնչութիւն ունի՝ նախկին հայ քրիստոնէութեան տեսակ մի հին կտակարանական զրոշմը: Երբոյեցոց պատմական զրբքերու ներշնչած զիցազնական հոգին աւելի ախորմելի էր պատերազմիկ կամ զինուորական ազնուականութեան, քան նոր կտակարանի քաղցր վարդապետութիւնն: Ի՞նչ որ չի կրցու զլուի հանել Նեկեփորոս կայսրն քահանայից հետ միասին, կրցաւ զայն ընել միայնակ կաթողիկոսն Արքանէս: Պարսից զէմ եղած պատերազմը՝ կրօնական պատերազմ հրատարակեց նա, որուն մէջ մեռնողները մարտիրոսաց կարող կը զառուին, և ննջեցելոց տարեկան յիշատակին օրը անմի-

1. Թերեւ ասորիք և հելլէնք, զորս Տիգրան բերաւ և մասոյց բանութեամբ Հայաստանի մէջ:

2. Ահճն Բարսեղ (թուղթ 523) յայտնազեւ կը ժամացանել առ Եղիփան եպիսկոպոսն, թէ Կազմագովիկիոյ մողերն (τὸ τῶν Μαχουσαίων ἔθνος) Արքահամէ չեն սերիր. ուս ծէ առ τοῦ 'Աթրահι γενεալոցից սկզեւ կմն բնէց: τοῦ παρόντος τῶν բάցան էμսթօլօցիցն. Յայտ է թէ Եղիփան ուրիշ տեղ զառած պէտք է յինք պարափէ մողերուն Արքահամէ սերելուն աւանդութիւնը:

ջանդէս սուրբերէն վերջը նոցա անուանը կը յիշուէին . վասն զի նոցա , կ'ըսէ , պատերազմի խառնուրդին մէջ մեռան , ինչպէս Մատաթիա և Յուղա Մակարէ և իրեն եղբայրներն<sup>1</sup> : Այսպէս նաև Ներսէս , պարսկական պատերազմի մեծ վտանգին միջոց , բոլոր աշխարհին մէջ ազօթք կը պատռիրէ , ըստ օրինակի հին կտակարանին : Դարձեալ պարսկական պատերազմին ժամանակ Մովսիսի հետ կտարեալ նմանութիւն մի կը զանենք , որ Ամաղեկացւոց վէմ կոռելու ժամանակ՝ լեռան զլուխը ազօթեց . Ներսէս կաթողիկոսն Պատրիարքութիւն հետ Նպասլերան զլուխը կ'ելնէ պատերազմին միջոց . կ'ազօթէ նա բազկատարած , և այս ազօթից զօրութեամբ կը յաղթէ Հայոց բանակն . « Ատէու կաց յաղթս և ազաշեա զՃէր : մինչ զեռ խառնուրդը ե՞ն » , կ'ըսէ թազաւորին<sup>2</sup> :

1. Փառառ . Գ . ԺԱ . էջ 28 . « Զի ուրա , առէ , ի նմանութիւն Մատաթիայ և Յուղայ Մակարէի ահեղանի ճամկատ պատերազմի . և նմանութիւն եղբարց նորա » Անուշաղիր օրինակող մի փախխակը է անունները մինչդեռ Մակարէ մականունն բնականարար Յուղայի կը պատկանի : Այս բանու յառաջ բերեր է սիսալ զրութիւն մի , և զրուեր է նոյն փոխանակ Նորդի : Չեզ կը նույնու կարծել որ կամ Արքանէս և կամ Փառառու այսպիսի խառնակ գաղափարներ ունեցած լինին Առամենացւոց ազգաբանական առնելութեանց մասին :

2. Փառառ . Ե . Դ . էջ 195 .

ինչպէս յայտնի է, եթովսացի քրիստոնեայ թագաւորը այնու ևս Դաւթի և Սովոմնի օրինակին հետևեցան, որ բազմակինութիւնը պահեցին՝ իբրև իշխանական տռանձնաշնորհութիւն։ Այս բանիս աղօտ հետքեր կը ցուցընէ նաև քրիստոնեայ Հայաստանը։ Այսակ թագաւորն, թէ և իւր Փառանձեմ կ'սաջմէն օրդի մի ևս ունեցեր էր, քաղաքական պատճառաց համար կ'ամսւսնանայ Ոլոմոցիա անուամբ յայն իշխանութեոյ մի հետ։ և վերջը, երբ սա կը թոնաւորուի իւր նախանձորդէն, Պարսից արքայից արքային զաւարը իրեն կնութեան կ'ուզէ առնուլ։ Պրինուոր ներքինին և կանանցի վարիչն (մարդպետ կոչուած), սովորաբար հայր տիտղոսը կը կրէր, և որչափ որ կը անէր թագաւորութիւնը՝ ամենէն աւելի նշանաւոր իշխաններէն մին էր, և ընդարձակ կալուածներ անէր (մարդպետութիւն) Տարօնի և Վասպուրականի մէջ<sup>2</sup>։ Մարդպետութիւնն քրիստոնէութեան

1. Փաւառ. Գ., 1, էջ 152—153.

2. Փաւառ. Գ., ԺԴ. Մազմ. Խոր. Բ., Ե. Թեովմա Արքունի Գ., Բ., էջ 128, կ'ահեռանէ ովն և Առնակեպիսկոպոս ուստանին Կախճառանու և Մարգարեականի ։ Ազաւ ուրիմ Նախառանու մէջ էր մարդպետին բնակութիւնն։ Լազարք (էջ 162) կը կործէ թէ Ազաթանգեղոսի մէջ (Ա. էջ 461) եղած ցուցակն

Ժամանակ ևս զոյսւթիւն ունէր, բայց չենք  
կարող ի հարկէ եզրակացնել աստի թէ կա-  
նանցն ևս զոյսւթիւն ունէր միանգամայն։  
Դ. զարու մէջ մարզպետն այլ ևս ներբինի  
չէր, այլ արքունի տան հազարապետ և միան-  
գամայն թագաւորին հաւատարիմ կուսակցու-  
թեան պուխ, սաստիկ տոելի հաւատարապետ և  
թէ ազնուականներուն և թէ պատմըցին,  
որ բարձրագոյն իշխանութեան ձկուազ և կղե-  
րականութեան նպաստող Մամիկոնեան ցե-  
ղին կատաղի կուսակից մ'էր։

Հրէական սովորութիւնը և հեթանոսական  
յիշատակութիւնը կը բացատրեն մեզի հին  
հայկական նորիապետութեան բազմաթիւ  
մասնականութիւնները, և ամէն բանէ յա-  
ռաջ՝ ազգին մեծ հայրապետին եզական  
զիրքը։ Թուի թէ ի ոկղրան իրեն պաշտօ-

քրիստոնէ յառաջ եղած ժամանակաց ցուցակն է, ո-  
րովէնուե կ'ըստի և երրորդ իշխանն Մարզպետութեան  
իշխանութեանն ։ Ամելայն կը յառեր նաև իմաստու-  
թեամբ։ և Այս բանս պիտի չկարենայ հաստատել սու-  
պութեամբ՝ ով որ գիտեր է, թէ որչափ յամառու-  
թեամբ կը յարատեն ։ Ին անմիտ սովորութիւնը ։  
Ոնտարակոյս այսոքէս պատահեցաւ նաև քրիստոնեաց  
Հայտառանի մէջ։ Խանանցի զիտաւորն պահեց միշտ  
արքունաց մէջ իւր բարձրաստիճան կարգը և պաշ-  
տօնը, նոյն բայց կանանցի և նորա ներբինի պահա-  
պաններու ։ Նեթանուարեկեան սովորութեան վերցուե-  
լէն վերջն այլ։

նական պատուանունն էր կարողիկոս (ՀՀ-  
ՖՈԼԱԲԸ)։ վասն զի երկու զրացի աշխարհ-  
ներուն մէջ ևս, ի վիրա և յԱղուանս, զըլ-  
խաւոր հայրապետն այս անունը կը կրէր. և  
այս երկու երկիրներուն և Հայաստանի մէջ  
բաւական սերտ կրօնական առընչութիւն մի  
կայր հին ժամանակները<sup>1</sup>։ Արէ Ելեան քրիս-  
տոնեայք՝ եկեղեցական բարձրագոյն իշխա-  
նութեան վերաց՝ աւելցուցին նաև քաղաքական  
բարձր վարչութեան պաշտօնը<sup>2</sup>. հաւանա-  
կանաբար ցուցընելու համար, թէ այն պաշ-  
տօնը ունեցողն՝ ըստ նշանակութեան բառին՝  
կը համարուէր իրը առաջնորդ ընդհանուր  
աղղին<sup>3</sup>։

1. Իրաւ է թէ Հայոց կաթողիկոսն կը համարուէր  
իրը «առաջին հաւասարից մէջ — primus inter pa-  
res»։ բայց այս բանո իւր թեմին մեծութեան և  
կարեւութեան հետ համեմատական էր։

2. 'Օ սπὶ τῶν καθόλου λόγων. Euseb. h. e. VII,  
105. — 'Ο τὰς καθόλου διοικήσεις τῆς παρ' αὐτοῖς  
καλουμένης μαγιστρότητος τε και καθολικότητος διελ-  
θώγ. VIII, 41, 2.

3. Հայաստանի և զաշնակից երկիրներուն մէջ աւելի  
նազոյն է այդ յորչորժումը քանի Պարսկաստանի մէջ.  
ուր կարելի է միայն ցացընել զայն ի զարուն սկիզբ։  
Հայք նոյն յորչորժումը կու առյին նաև կեսարից արք-  
եպիսկոպոսին։ Եւսեբիոս կը կռւուի «{-թողի--}- {-  
թողի--} (Եսաբիոս) յերկիրն Գամբաց» (Փառա. Դ.  
Դ. էջ 75)։ Կոյնոպէս կը պատմուի Շաբաեղ հայրապե-  
տին համար, թէ բարձրացաւ կեսարիոյ կաթողիկոսա-  
կան աթոռին վրայ. և եւու թ-թ-եւ յ-թ-ու- {-թողի--}

Բայց Փաւստոս համեմատաբար շատ սահկառամ կը զործածէ այս պաշտօնական անունը Հայոց հոգեոր բարձրագոյն զիխոյն համար. իրեն զրբին մէջ յաճախ զործածուած սովորական բացատրութիւնը են, քահանայապես, եպիսկոպոսապես և հայրապետ։ Որտեղաբանութիւնը են հետեւալ յունարէն բառերուն. ձրչւարքան, ձրչւուսուուս և ուրաքանչական բառը այն իմաստով առնուլ կամ հասկընալ, ինչ որ կը հասկցուէր ապազայ զարոց եկեղեցական կանոնագիտութեան մէջ, պարզաբար այն պատճառաւ՝ որ Փաւստոսի զրած միջոց պատրիարքութեան գաղափարն զեռ զարգանալու վիճակի մէջ էր։ Բայց նոյն իսկ իր սիխուակ բացատրութիւն<sup>1</sup>, կարելի է թէ

— Անդ ան կիրաբան (Փաւստ. Դ. Թ. էջ 102)։ Ազաթանգեղուն նաև այսպէս կը կոչէ զ'Անդողիոս. զոր սովորաբար արքեպիսկոպոս կ'անուանէ (Ա. CXIII S. 446), զ'Անդողիոս պարք. Պահանջման ար յոյն ալ (G. § 138) կը գեէ «τὸν ἀγιότατον καὶ καθολικὸν Λεόντιον»։ Դ գարուն մէջ գեռ հասաւառուն չեր այդ յորիորիումը, և յիրաւի կեսարիոյ մէջ պատրիարք անուան զործածութիւնն անգամ ապացուցանելի է։ Առկայն տարակուական կ'երելի ինձ, թէ կեսարիոյ մետրապոլիտն ի-Բաղդադ կամ ի-Բաղդադ կ'առաջին կուռած լինի։ Կարելի է թէ շայերը առած են իրենց այդ անունը։

1. Հմին. Սոկրատ. Պատմ. Ակեդ. Ե. Ը. Տիէ Յէ Պուտակէ ծօւռնէօս «Էլլածիօս ծ... Կաւարելաց... ձու...»

սպատրիարքութեան յորջորջումն Ներսիսի մահ-  
ւընէն յետոյ հնարուեր է, երբ Աեսարիայէն  
հպատակութեան կտակն խզուեցաւ, որ կայր  
մինչև նոյն ժամանակ<sup>1</sup>: Իսկ թէ Փաւոտոս  
իւր երրորդ դպրութեան մէջ յանախ կը գործ-  
ածէ այս յորջորջումը, կը նշանակէ թէ ի-  
րեն միջոց գործածական եղած անունը աւելի  
հնագոյն շրջանի մէջ փոխազրեր է. վասն զի  
յառաջ կը գործածուէին միայն եպիսկոպոսա-  
պետ և քահանայապետ. թէ առաջինն է ==  
ձրչւունուսուուս, կը ցուցուի - առանց ուշ զնե-  
լու նշանակութեան - կրկին աւելաբանական  
արքեպիսկոպոսապետէն<sup>2</sup>: Ամենարացայայտ  
է քահանայապետ բարի յանախ գործածու-  
թիւնն կաթողիկոսին համար:

Յոյներն այլ կը գործածեն ձրչւունուսուուս բառը  
բարձրաստիճանն եկեղեցականներուն համար,  
այլ միայն զբական կամ հոետորական ոնոյն  
մէջ, յորում բատ կարի կը զգուշանան զիտա-  
կան և պաշտօնական անուններէ: Փաւոտոս  
շունի այս սովորութիւնը : Քահանայապետ

Γρηγόριος δέ Νόστις.. καὶ Ὅτρήιος δέ τῆς ἐν Ἀρμενίᾳ  
Μεլιτηνῆς τὴν πατριαρχίαν ἔκληρόσεν. Πλευραὶ δὲ  
կոչէ զանոնք «non veros atque ordinarios patriarchas, sed extraordinarios legatos».

1. Հման. v. Gutschmid, Kl. Schr. III S. 353.

2. Փաւոտ. Պ., ՓԵ., և Ե., Պ.

(ձօրշւէքէնց) բառը սովորական յարջորջումն է . Հրեից զիխտոր կամ մեծ քահանային թէ Ա . Գլոց և թէ ուրիշ հեղինակաց զրութեանց մէջ : Այս ամենասովորական յարջորջումն շատ զբուարին է սկասահական բան մի համարել , հին հայկական եկեղեցւոյ ունեցած հրեական ձկտումի նկատելով<sup>1</sup> : Ստուգիւ կաթողիկոսութիւնն շատ սակաւ նմանութիւն ունի քրիստոնեայ եպիսկոպոսութեան հետ , այլ բնդհակառակն շատ կը յիշեցնէ հրեական և հեթանոսական օրինակները :

Սոցա մէջ առաջին տեղը կը բռնէ կաթողիկոսութեան ժառանգական յաջորդութիւնն : Սոյն իշխանութիւնո բացառիկ կերպով կապուած էր Գրիգոր Խուանորչի տաճմին հետ . և որովհետեւ ովեար չէր երբէք զաղարիկ այն , հետեւորաբ կաթողիկոսները<sup>1</sup>

1 . Յետագայ մատենագիրը շատ առկա անգամ կը զորժածեն զայս . օրինակ իմեւ , կը գտնեմ Ա . Խորենացւոյ մէջ Եպիսկոպոսութիւն (Պ. , Ի . Պ. , Խ . Պ. , ԽՈՒ . Պ. , ԽՈՅ) . մի անգամ միայն + - Հ - Ն - Յ - Պ - Դ (Պ. , ԺԶ) շայրը կաթողիկոսին համար : Կոյնոպէս կը գտնեմ Ակաթողիկոսութիւն Եպիսկոպոսութիւն (Ա . Էջ 468 , 474) , - Ե + - ԵՊԻ - ՍՊՈ - (Էջ 498 , 502) , + - Բ - Պ - Վ - Երկու անգամ (Էջ 507) . ընդհակառակն , + - Հ - Ն - Յ - Պ - Դ մի անգամ միայն (Էջ 462) . և + - Հ - Ն - Յ - Պ - Վ - Ե յէջն 467 - Կոյնոպէս Պատրիարքուս + - Հ - Ն - Յ - Պ - Վ - Ե կը կուտաք յէջն 467 (Մինչ յոյն անք միայն չուօշքոք) .

2 . Յառակապէս ովեար է հառկնալ զայս այն կաթո-

կ'ամուսնանային զրեթէ առանց բացառութեան : Այս բանին հետևանքն այն եղաւ՝ որ շատ երիտասարդ անձինք կաթողիկոսական աթոռին վրայ բարձրացան, որ բացարձակ կերպով հակառակ է յետազայ ժամանակաց սովորութեան : Մանուկն Գրիգորիս, Արքանիսի որդին, հոգետասանամեայ հասակի մէջ կաթողիկոս կ'ընտրուի վրաց և Աղուանից, որովհետեւ ոքարեհասակ էր և զգիտութիւն Առուծոյ յանձին կրէր<sup>1)</sup> : Այդ բանին մէջ արտագին կերպարանին ևս մեծ նշանակութիւն ունեցեր է : Կոյժնովէս իւր Յուսիկ եղբայրն, որ տառուերկու տարեկան ամուսնացեր, ալեաք է որ շատ երիտասարդ հասակի մէջ կաթողիկոս եղած լինի : Փաւուս սովորաբար կը կոչէ զինքը և երանելի մանուկն Յուսիկ<sup>2)</sup>, և ցանկալի մանուկն Յուսիկ<sup>3)</sup> . տարօրինակ յորդորացում մի ամբողջ աշխարհի մի հոգեոր զինոյն համար : Ներսէս ևս շատ երիտասարդ հասակի մէջ կ'ընդունի իւր բարձր աստիճանը : Թէ ո՛րպատի

զիկուսց համար, որոնք Լուսաւորչի ցեղէն էին, և որոց վերջինն եղաւ Ս. Սահմակ Պարթե, որ 50 տարի կաթողիկոսութիւն ըրաւ (389-439) :

Եր. թ.

1. Փաւուս . Գր., 1:

յամառութեամբ պահուեցաւ այս ժառանգուկան յան յաջորդութեան իրաւունքն եկեղեցական պաշտամանց նկատմամբ , կը ցուցընէ մեզ ԺԴ դարու մէջ պատահած զէպք մի , զոր կը պատմէ Կիրակոս Գանձակեցի<sup>1</sup> : Ազուանից աշխարհին եպիսկոպոսներն և վարդապետք՝ մանկանառակ սարկաւագ մի կը ներկայացնեն Ոմար ոստիկանին , իրը թիկնածու կամ ընտրելի կաթողիկոսական իշխանութեան . և Նա շատ երիտասարդ է հասակաւ . կ'ըսէ ոստիկանն , ո զուք որ բուն յարմար տարիքը ունիք , ինչու կաթողիկոս չէք լինիր ։ Եռու կը պատասխանեն . և Որովհետեւ սա կաթողիկոսաց ցեղւն է և իրեն կը պատկանի այդ զահուն իրաւունքն ։ Ինչպէս յայտնի է , հին եկեղեցին շատ տեղեաց մէջ ամսւսնացեալ եպիսկոպոսներ ունէր<sup>2</sup> : Ապկայն քահանայական բարձրագոյն իշխանութեան ի հօրէ առ որդի ժառանգական յաջորդութիւնը՝ մինչև ի վեց սերունդ՝ միայն Հայաստանի մէջ կը զտնենք : Բայց այսու չէ կարելի ժխտել , թէ եղեր են նաև կու-

1. Կիրակոս Գանձակեցի , Ե . էջ 105 , հրատարակութիւն Մասկուայի յամին 1858 .

2. ԺԴ. կանոնն Տուրի երկրորդ ժաղովոցն (567) զետ շատ համարձակ կերպով կը իսոսի եպիսկոպոսներ կուլ վրայ , որովէս թէ բնական և սովորական բան մի լինէր :

սակրօն կաթողիկոսը, ինչպէս վերոյիշեալ զբիգորիսն, և լուսաւորչի որդին և յաջորդն Արհամակէս։ Ըստ պատմութեան Ազաթանգեղոսի, վերջինս՝ իւր պաշտօնը ստանձնելէն առաջ՝ կազազովիրոյ անապատին մէջ ճգնաւորի կեանքը մ'անցուցեր էր, ինչպէս յետոյ կ'ընէին Աթօղազետաց հովիչը (ՅՈՏԿՈՒ)։ Այնողիսի հին ժամանակաց մէջ բնաւ տարօրինակ բան մի շէր ճգնաւորական կեանքն, եթէ Ազաթանգեղոս իւր ժամանակին յատուկ և միակեցական հոգւոյն համեմատ և ըրած լինէր նոյն նկարազիրը։

Յետազայ ժամանակաց մէջ, երբ Յունաց օրինակին հետեւլով՝ սկսան կրօնաւորաց միշտն ընտրել բարձրաստինան եկեղեցականները, և կուսութեան վրայ շատ բարձր զազափարներ կազմեցին, բացարձակապէս անկարելի եղաւ այնուհետեւ ամուսնացեալ անձինք կաթողիկոս զնել։ Բայց ողևոք է զիտել՝ թէ եկեղեցականք կ'ամուսնանային այն ժամանակի իրը լոկ աշխարհականք, և իրենց սերնդեան կամ յաջորդութեան հոգը կարգազրելէն յետոյ՝ քահանայ կը ձեռնադրուէին։ Այս բանս

1. Սառուղիւ Առզամենոս (Զ. 54) կազազովիրոյ մասին կը հաստատէ, թէ աեզւոյն խիստ կլիմային պատճառու անկարելի էր բնակիլ անապատին մէջ։

կրնանք հաստատել թուսկան մասին, որ կա-  
թողիկոս լինելու առաջ կորուսը էր իւր ա-  
մասինը<sup>1</sup>: Առկայն ամեններն հաւանական  
չերեիր, թէ վեց սերնդոց միջոց ևս մե-  
ռած լինին կանայք՝ իրենց զրեթէ միշտ ե-  
րիտասարդ ամուսիններուն քահանայական  
աստիճան բնօւնելէն յառաջ: Բայց ապա-  
զայ ժամանակն չի վարանեցաւ այս բանիո  
ևս հնարք մի զանել: Զենար Գլակայ<sup>2</sup> պատ-  
մութիւնն Ո. Գրիգոր Լուսուորչի ամուսնա-  
կան կենաց մասին՝ կրնայ այս բանիո նա-  
խատիով որբնակ մի համարուիլ: Ու երկու-  
տառաշնամեռյ հասակի մէջ՝ կ'ամուսնանց  
բարեզպաշտ Գաւթի Մարիամ զաներ հետ-  
և յետ երկու զաւակ ձնանելու՝ կինն կու-  
անաց վանիք<sup>3</sup> մի կը մատնէ, իսկ այրն ա-  
զատ կը լինի իւր ապագայ պաշտաման հա-  
մար: Փաւստոս տակաւին տեղերեկութիւն շունի  
ապագայ ժամանակի մէջ հնարուած այս հաս-  
տատութեանց մասին: Ալրժանէս ծերութեան  
միջոց կ'ունենայ երկու զաւակ, յայտ է ապա-  
թէ իրր եպիսկոպոս ևս ամուսնայն հետ միա-

1. Փաւստ. Պ. Ա:

2. Զ. Գլակ. էջ 22:

3. Ո. Գրիգոր զրեթէ 257ին ժեած լինելով, Հարկէ  
է ենթազրել՝ թէ 250ին միջոցները կազազովելիոց մէջ  
կուսանց վանքեր կը գտնուէին (!):

սին կ'ապրէք : Այլ նոյն իոկ Փառառոս , համեմատաբար մեր ամենէն աւելի յատակ ազդքիրն , համամիտ կ'երեի աեսովթեանց կամ զադափարիներու Ներսիսի ժամանակին , որ Բարսղի կեսարացւոյ միջոցու սաստիկ ազգեցովթիւն կրեր էր . իւր շափազանց ուրին և համարումն նախկին հայրապետաց վրայ և իրեն յատակ աեսովթիւնըն սրբազան աստիճանի մասին , որը այնչափ վախուեր էին իրենց նախաժամանակին , շատ տարօրինակ հակառակովթեանց սպատճառ կր լինին իրեն , ինչպէս կր ցուցընէ ի մասնաւորի Յուսկան պատմութիւնն (Պ. , Ե) : Առ կր զղջայ ամուսնակալուն վրայ , զար սրբզ թագուորէն բանազատուելուն համար յանձն առեր էր : Միւս կողմանէ սակայն Աստուծոյ ազգեցովթեամբ զարծեր էր , որպէս զի սուրբ հայիւներու սերունդ մի յառաջ զայր իրմէ : Յետ մի անգամ մերձաւորութեան՝ կր զատուի նա իւր ամուսնէն . այլ ոչ եթէ ամսաւութիւնը իրր և ազաեղի ինչ ո կր համարի : Միով բանիւ , կ'երեի թէ զմուարին իրաւախութեան մի մէջ է պատմիչն՝ ընդ մէջ հին և նոր ժամանակիներու տեսութեանց : Շատ կասկածելի կր թուի այն պարագայն , որով թէ վրիմանէս և թէ իւր Յուսիկ սրպին եր-

կուրբեալներ կը ծնանին : Գրեթէ կը կար-  
ծուի , թէ աւանդութիւնն կ'ուզէ ըստ կա-  
րելոյն շատ կանուխ զնել վանական կենաց  
սկիզբը՝ նոյն իսկ ամուսնացեալ բարձրաս-  
տիճան եկեղեցականաց համար : Խնչպէս կա-  
թողիկոսը , այսպէս նաև բնականաբար միւս  
եպիսկոպոսը ամուսնացեալք էին : Յովհաննէս  
եպիսկոպոսն՝ փառեն կաթողիկոսի որդին է<sup>1</sup> :  
Եպիսկոպոսութեան ժառանգական յաջորդու-  
թիւնն ո՛չ միայն արական՝ այլ և իզական  
գծով կրնար լինել , ինչպէս պատահեցաւ  
խաղայ նկատմամբ , որ Բաղրեանդայ և Ար-  
շարունեաց եպիսկոպոսն էր , և Ա. Ներսիսի  
ընդհանուր տեղապահը : Ա Եւ ունէր նա եր-  
կու զուստր , որոցմէ մին կնութեան տուալ  
Ասրիկ անունով մէկուն , որ իւր աներէն  
մերջը՝ ինքը նոտաւ խաղայ աթոռը<sup>2</sup> » :

Նոյնպէս Եպարքոն մէջ՝ Առրմակ կը յաջողի  
Պարսից թագաւորէն իրը սեփական ժառան-  
գութիւն ստանալ իրեն և իւր ցեղին համար՝  
Բզնունեաց զաւատին եպիսկոպոսութիւնը , ո-  
րուն եպիսկոպոսն էր ինքը<sup>3</sup> :

1. Փառաւ . Եւ . Բ :

2. Փառաւ . Եւ . ԹԲ . « Եւ էին նորա (Խաղայ) եր-  
կու զուստրք , և եաւ զմինն Ասրիոյ ու Աննէն կին . զկնի  
աներոյն իւր՝ նա կալու զաթոռն խաղայ » :

3. Ա . Խորեն . Գ . Ա՚ :

Այս ժառանգական յաջորդութեան ընական հետեանքն որ է, ինչպէս երբեմն Հրեից քահանայապեաներուն որպաց պատահեցաւ, այսպէս նաև կաթողիկոսաց որպաց վրայ կը տեսնուէր յաճախ բոլորուին աշխարհական հոգի մի, օտար ամեննեին եկեղեցական և կրօնաւրական հոգիէ : Այսպիսի աշխարհասէր քահանայորդւոց ախարհներ են Պապ և Ամանազինէս՝ Յունկան որդիին . նոքա առավետական՝ աշխարհասէր և մահաւանդ թէ վայրադ կեանք մի կը վարեն : Զոր տեղ բռնի և եպիսկոպոսաց հաւանութեամբ սարկաւագ կը ձեռնազրուին . նոքա, թէ և նոյն պահուն բռնազատուած տեղի կու տան հարկին, այլ իսկոյն կը թողուն իրենց եկեղեցական աստիճանը : Յիրաւի սոքա երկուքու չարութեան վերջին ծայրը հասած կը համարուին : Այնոյն իսկ Ս. Ներսէս, Այշակ Թազաւորին փառաւոր սենեկապեաներէն մին, բացէ ի բաց կը մերժէ յանձն առնուլ եկեղեցական ամենաբարձր աստիճանը, երբ բոլոր ժողովներական յանկարծակի . ո Պէտք է Ներսէս լինի մեր հոգիւն . իրմէ զուրս ոչ ոք սպիտի լինի մեր հոգիւր, և ուրիշ ոչ ոք սպիտի նոտի այս աթոռին վրայ<sup>1</sup> ո : Ան-

1. Փառաւ . Դ , Գ . «Ներսէս լիցի մեր հոգիւ . ոչ

օգուստ տեղ կ'ամբաստանէ նա ինքզինքը՝ իրր  
թէ մեծամեծ մեղքեր և ոճիրներ զործած  
լինի<sup>1</sup>։ Այս բանիո մրայ թագաւորն և բոլոր  
բազմութիւնն սասափիկ կը ծիծաղին։ Յայտնի  
է թէ շատ զուարժ աեւարան մ'եղած և  
այն բավանդակ դիսպատճն։ Ենթի խոկ թա-  
գաւորն կը խըլ նորա ձեռքէն սուզավատիկ  
արդունական սուսերը հանգերձ ուկեայ սրա-  
մենին, և ականակուռ և ազամանգազարդ  
զօտին, որ սենեկապետութեան պատուա-  
նչանն էր. և արտասուալից բազմութեան առ-  
ջե կը կտրուին նորա զանգրագեղ երկոյն  
մազերը, և ծերունի եղիսկուզան Փաւուսո  
կը ձեռնազըլ զնա սարկաւագ։ Այս զէպ-  
քերս լոյս կը սփռեն նաև, ինչպէս կ'երեխ  
ինձ, այն տարօրինակ սպարագային մրայ, որ  
ոչ եթէ երեց որդին՝ այլ կրտսերն Արխո-  
ւուկէս հետեւյաւ եկեղեցւոյ հիմնազրին քա-  
հանայական կոչմանը։ Ամ թերես սիստի ա-  
ռարկէ որ, թէ Արքանէս տակաւին քահա-  
նայ չէր եղած. — զերոյիշեալ տմարդի եղա-  
նակն, որով կը բննազատուէ ին ձեռնազըլուի  
քահանայից որդիքն, կը ցոցընէ թէ ովէաբ  
ոք լիցի մեր հովիւ բայց ի գմանէ, և ոչ զը նուսի ովէ  
յայնու աթուու բայց զա ։

1. Շնականաբար պատմիչն այս բանիս մէջ որբոյն  
մէծ խռնարհութիւնը միայն կը տեսնէ։

եղած միջոց կր վերցուէր այդ արգելք , ինչ-  
պէս ի Բիւզանդիոն՝ այսպէս նուև Հայաս-  
տանի մէջ : Անշուշտ Արթանէս ևս ի ոկրզ-  
բան շունէր յօժաբութիւն քահանայալան  
աստիճանին , ինչպէս շունէին Աթանազինէս  
և Ներոն : Հայրապետական ցեղին այս աշ-  
խարհական ընթացքն խորհրդածութեան նիւթ  
կու տայ , զոր թերես ովիտի կարենանք բա-  
ցասրել՝ երբ յաջողինք գտնել կաթողիկոսին  
ընտանեաց սոսոյզ ծագումը :

Կաթողիկոսական տոհմէն զատ կայր նուև  
ուրիշ նշանաւոր քահանայական ցեղ մի ,  
նախանձորդ առաջնոյն , Աղքիանոս Եպիսկոպո-  
սին տունը . սա տակաւին արտաքոյ կարգի բարձր  
զիրք մի կը վայելէր : Ա . Գրիգոր՝ հեթանոս  
բրմաց որդիքը ժողվելով՝ եկեղեցական կղե-  
րանց մի հիմնեց , որուն աւելի կարողա-  
զոյն անգամներն եղիսկոսպատական ձեռնա-  
զրութիւն կ'ընդունէին : Ազաթանգեղոս սոյն  
Եպիսկոպոսներէն տասներկու հատ կը հա-  
շուէ , և անգա կը յաւելու . Ա Այսք որ յորդ-  
ոցն քրմաց ընտրեցան Եպիսկոպոսը կող-  
մանց կողմանց , անեցուցանել զքարողու-  
թիւն : Ա Այս քուրմերու որդոց մէջ՝ սոսո-

Ա . Աղաթ . ՃիԱ . էջ 630 . Հրատ . Աշենեակց . 1862 .  
Յունարենին մէջ կը պակսին երկու վերջիներն . Տե-  
րիկէս և Ալիքակոս :

ջին տեղը կը յիշատակուի Ազրիանոս , « որ  
ապա կողմանցն եփրատական գետոյն լինէր  
վերակացու » : Նա իսկ և իսկ շատ բարձր  
զիրք կը ստանայ . Ա . Գրիգոր զինքը արքունի  
զրան վերակացու կը կարգէ , իբր և այր ճշշ-  
մարիս և աստուածառէր » . ուստի արքունի  
եպիսկոպոս կը լինի նա : Դէալ ի Յունաս-  
տան հանասպարհորդելու միջոց՝ թագաւորն  
ամենէն աւելի ազնուական իշխանները կ'առ-  
նաւ հետք աշխարհականներէն , իսկ եկեղե-  
ցականներէն՝ մեծ արքեպիսկոպոսը Գրիգոր ,  
նորա Արիստակէս որդին և Ազրիանոս ե-  
պիսկոպոսը <sup>1</sup> : Ապագային մէջ ևս՝ Ազրիանոս  
եպիսկոպոսն նոյն բարձր զիրքը կը զրաւէ :  
Խոսրով կոտակի ժամանակ (347—326) ,  
Մանաւազեանց և Որդունեաց քաղաքական  
պատերազմին միջոց , և մեծ եպիսկոպոսն ո  
Ազրիանոս <sup>2</sup> կ'ուղարկուի իբր հաշտեցուցիչ ,  
թէալէտե տուանց արգեանց մեաց իրեն միջ-  
նորդութիւնն : Յետ ազետալի արկածին , կը  
ստանայ նա՝ իբր հասոյթ իւր եպիսկոպո-  
սութեան՝ Մանաւազակերտ քաղաքը և զը-  
զեակը , որ երբեմն Մանաւազեանց զիտուոր

1 . Ա. Պաթ . ՃիԶ . էջ 650 . Հրատ . Ակնեակոյ , 1862 .  
Յունասպարենին մէջ չի կայ Ազրիանոս :

2 . Փառատ . Գ . Դ .

ընակալայրն էր, հանդերձ նորա սկատկանող՝ Եփրատայ շըջակայ զիւզերով և սահմաններով։ Նա այնուհետեւ եպիսկոպոսապետին կամ կաթողիկոսին արեւելեան զրացին զարձաւ։

Ճատ հետաքրքրական և զիտողութեան արժանի է, թէ ի՞նչ կերպով Աղքիանոսի ցեղն կամ օտարք կրցան զրաւել կաթողիկոսական աթոռը, երբ Լուսաւորչի ցեղն արժանաւոր յաջորդներ չէր կարող հասցունել, ինչպէս պատահեցաւ Յուսկան մահուրնէն յետոյ<sup>1</sup>. « Ապա յայնմ ժամանակի միաբան խորհեցան աշխարհօրէն խորհուրդ, եթէ ում պարտ իցէ (զհայրապետութեանն<sup>2</sup>) զկաթողիկոսութիւն ունել։ Ապա իրրեւ ոչ ոք զոյր ի տանէն Գրիգորի այնմ արժանի, ապա նմանեցուցին<sup>3</sup> զՃահակ սմբ անուն ի տոհմէ զաւակին Աղքիանոս եպիսկոպոսին<sup>4</sup> »։

#### 4. Փաւատ . Գ. , ԺԵ :

2. Այդ բառը պէտք է գուրս թողուլ իրը մեկնութիւն < կաթողիկոսութիւն > բառին։

3. Անտարակոյս գրչադրի վրիպակ է այդ բառը, թերեւս հարկ է կարգալ բ-շն-շն-շն (յաթոռ). ինչպէս նեղինակն ուղղեր է զայն < բարձրացուցին, ամբարձին յայն կարգ կամ աստիճան >։

Ծ . Թ.

4. Ցիրաւի նախ և առաջ իրը կաթողիկոսական իշխանութեան կամ աթոռոյն ժառանգ՝ ներկայացուեցած էր քորեպիսկոպոսն Դանիէլ, որ վազուց արգէն Լուսաւորչէն հաստատուած էր. և ապա, յետ նորա նահատակութեան, Փառէն՝ որ հանդիսաւոր կերպով կա-

Նոյն բանը պատահեցաւ նաև յետ մահուան  
Ներսիսի, և այն զիսպատճին մէջ՝ թագաւորին  
առանց վարժանելու կաթողիկոս դրաւ Յուսիկ  
եղիսկոպոսը, և որ էր ի զաւակե՞ն Աղքիանա  
եւյիսկոպոսին Մանազկերասյ<sup>ու</sup> Այս կեր-  
պով յաջորդաբար ուրիշ երկու անձինք ևս  
նոյն ցեղէն ընդունեցան եկեղեցական ամե-  
նաբարձր աստիճանը։ Պատմիչն, որ կը  
ներկայացնէ մեզի սաստիկ եկեղեցական կո-  
ստիցութեան ձկոտումը կամ հողին, ընտ  
նպաստաւոր կերպով դատաստան չի ըներ  
այս անձանց նկատմամբ։ բայց սակայն ովէտք  
է ընդունիլ, թէ նորա զրեթէ միշտ բարե-  
պատ և ճշմարիտ քահանաներ եղան։ Զաւէնն  
է միայն՝ որ բացառութիւն կը կազմէ։ Աս,  
փոխանակ քահանայական երկայն սկզբաւո-

թողիկոս ձեռներգուեցաւ։ Բայց երկուքն ոյլ ոյլ  
ազգեցութիւնը կ'ընեն։ թէ աւելի աեզազահք եղեք են  
աթոռույն, քան թէ յատկապէս կաթողիկոսը։ Աակայն  
չառ առորոշեակ բան է, որ ասորի Դիմիքէլն զլիսուոր  
և սուսնին քահանայն է Տարօնի մայր եկեղեցւոյն, և  
նմանապէս Փառէն՝ իրեն կառուցած Ու Յովհանեսու  
ամենամասիկ մասրան (Բիւզանզ Հոբէրէն կ'ըսէ)  
քահանայն էր (Փառաս. Գ. Ժ. Ժ.): Սոցա ընտրու-  
թեան մէջ այն զիսպատճ է, որ եթէ Լուսաւորչ ցե-  
ղէն կարելի չէր կաթողիկոսութեան արժանի անձինք  
զանել, զէթ նորա զլիսուոր եկեղեցւոյ քահանաներէն  
ընտրեն։

4. Փառաս. Ել., իթ.

րին, թոյլ տուաւ որ եկեղեցականք ըստ  
կամս զոյնզգոյն ասզնեղործ նկարներով զար-  
գարուած կարճ զգեստներ հազնին, որոնք  
մինչև ժնզերը կը հասնէին, և ուրիշ մեծազնի  
մռչառակներ : Խնդին այլ նոյնպիսի ասզնե-  
զործ և նարօտօք ժապաւինեալ զգեստներ  
կը հազնէր, սամուրենի, կնզմենի և զայլենի  
մռչառակներ<sup>1</sup> : Ա'ենթազբեմ, թէ այդ Զա-  
մենի մռեծածը՝ բնաւ նորաձեռնթիւն չէր, այլ  
հեթանոս քրմաց հին ազգային սովորու-  
թիւն կամ տարազն էր այն, որուն թոյլ-  
տուոթիւն ըրեր էին առաջին կաթողիկոսք,  
և որ վերջապէս վերցուեր էր Ա. Ներսիսի  
վերանորոգութեամբ : Զաւեն նորոգեց միայն  
հին սովորութիւնը . և նոյն իսկ ո քրիստոնէ-  
ամիս, աստուածապաշտ և արդար ո կոչուած  
Ասպուրակէտն սկահեց զայն: Այս ամէնը շի-  
րացուարուիր լոկ փաւստոսի և նորա կուռակ-  
ցութեան թշնամական հոգւով: Աւկայն Աղ-  
րիանասի որդիքն զրեթէ ամէնքն այլ ընտիր  
անձինք եղան, և հակառակ Ներսիսի՝ միշտ  
հլուք և հակառակը թագաւորաց : Նոքա, ի-  
րենց շափազանց ներողամութեամբ առ պե-  
տութիւնն, կը յօւսային իր ժառանգական

յաջորդութեան սեփականութիւն ստանալ՝ կա-  
թողիկոսական զանը, որ իրենց փառասի-  
րութեան նպատակն էր: Ուստի իրենց և  
Քրիզորի տանմին մէջ անսակ մի նախանձ  
կամ մըցումն կայր, ինչպէս երբեմն Խորա-  
յելացւոց միջոց՝ Աքիաթար և Ագովի քա-  
հանայտապետաց երկու ընտանեաց մէջ. միայն  
թէ թագաւորին հաւատարիմ տունն ստի-  
պուեցաւ աեղի տալ, թագաւորական վարկին  
նուազելուն համար, և վերջին պահլաւոնեաց  
հոգեոր մեծ զերիշխանութեան պատճառաւ:

Առաջին առւնն, որ է՝ Ա. Գրիզորին,  
կը պարծէր՝ իրը թէ երեք մեծ սկանդալու-  
նի ցեղերէն մէկէն սերած լինէր. և այս  
բանիս համար Ա. Ներսէս, ինչպէս նու իր  
որդին Մեծն Սահակ, Պարրեն մակղիրը կը  
կրեն: Անակ, որ է՝ Գրիզորի հայրն, Առ-  
քենեան ցեղին կը պատկանէր: Սակայն  
Գուտչմիդ<sup>1</sup> հաստատուն փաստերով, ինչպէս  
կ'երեի ինձ, մխանց Գրիզորի և Անակաց  
մէջ եղած այս միութեան կազը: Բայց եթէ  
նա Տրդատայ այն խօսքերուն մէջ, որ զԳրիզոր  
անծանօթ օտարական ոմն կը կոչէ, կ'ուզ  
ճշմարտութիւնը տեսնել<sup>2</sup>, ես իւր կարծի-

1. Kl. Schr. III, S: 380, vgl. 383.

2. a. a. O. S. 409.

քէն շեմ։ Աւան զի այն ժամանակ՝ այսպէս  
ծայրայեղ կերպով ազնուականութեամբ ոլար-  
ծեցող ժողովրդեան մի մէջ, ինչպէս են  
հայր, բոլորունին անհասկանալի ոլիտի լիներ  
կաթողիկոսական ընտանեաց ունեցած ամե-  
նանանուոր զիրքն։ Յետ թագաւորական  
տանը, նա կը կազմէր ամենէն աւելի ազ-  
նուական ցեղը, և խնամութիւն կ'ընէր Ար-  
շակունեաց հետ, և մի և նայն ժամանակ՝  
միայն ամենաբարձր նախարարութեանց հետ,  
ինչպէս էր Մամիկոնեանց ցեղն։ Կաթողի-  
կոսին բովանդակ վարժոնքն կամ զործելու  
եղանակն՝ զիայ է արդէն իր բարձր զբո-  
թեան. տասներկու եպիսկոպոսը հայրապե-  
տանոցի մասը կը կազմէին, որոնք կաթողի-  
կոսի պալատին մէջ կը բնակէին՝ իրո իրեն  
աթոռակիցքը, օգնականք և խորհրդականք։<sup>1</sup>

1. Անուն-իշ-շ մէջ առաջինն էր իւր փոխանորդն.  
Ինչ ընդհանուր աթոռակալն՝ Երեւան-հ կը կուռէր  
(Փաւառ. Դի., ԺԲ)։ Բայց նա, կաթողիկոսի բացակայու-  
թեան ժամանակ՝ նորա պաշտօնը կատարելով. ինքն իր  
զիառուն ոչ մէկ բան կարող չէր ընել. ի բաց առեալ  
այն բաները միայն ինչ որ յանձներ կամ նշանակեր  
էր հայրն (որ է կաթողիկոսն)։ այսպէս կը աէ խաղ  
(Փաւառ. Դի., ԺԲ)։ «Բայց ես ետեղապահ եմ, և ոչ  
ինչ առանց այնորին, որ թողն զիս հայրն, ունիմ իւ-  
րանութիւն զործել ինչ»։ Կաթողիկոսին ամենէն ա-  
ւելի մերժաւոր էր Արքաւագապահան («բարձր»)՝  
(Փաւառ. Դի., ԺԲ)։ Երկուքը ազքատանոցներու հոգա-

կաթողիկոսն թագաւորական պատիւներ կ'ըն-  
դունէր . նա ձեռնադրուելու կ'երթար ի կե-  
սարիա , արքունի կառաց մէջ նստած և ա-  
մենէն աւելի ազնուական իշխանաց ընկե-  
րակցութեամբ . մի և նոյն շքով և արքու-  
դութեամբ կը կատարուէր նաև նորա յու-  
զարկաւորութեան հանգէսն<sup>1</sup> : Ըստ Փաւա-

բարձուներն էին , իսկ այլոց պաշտամանց մասին Փաւա-  
ռու անեղեկութիւն չի տար : Կաթողիկոսարանի մէջ  
առանձին եպիսկոպոսներ քնակելու ուղղութիւնն  
պահուեցաւ յԱշմիածին մինչեւ ի ՓԸ քարե (C. F. Neu-  
mann : Versuch einer Geschichte d. arm. Literatur S. 257) : Կերկարապէս , մինչ հայ կղերն ազգուն  
և կորուսեր է իւր նախակին փայլը և Հոխութիւնը , (յի-  
շենք միայն Ոինեաց նախագահութեան և Ողուանից  
կաթողիկոսութեան բարձութը , և շատ եպիսկոպոսաց  
փոխանուկ՝ ոգեականներու կամ քորեպիսկոպոսաց հաս-  
տառութիւնը) , տակաւին յԱշմիածնի պատրիարքական  
սինոգն էինք եպիսկոպոսներէ կը կազմուի :

1. Փաւառ . Պ. Ժ. Խ. Խ' : Փաւառոսի նկարա-  
գրութեան նայելով , կաթողիկոսաց յուղարկաւորու-  
թեան հանգէսն աւելի շքեղագոյն կը լինէր քան թա-  
գաւորացն : Մեռելոյն կ'ընկերէին արքունեաց ամենէն  
աւելի բարձրաստիւն անձինք . զինաւորն<sup>\*</sup> , սպար-  
պեան և մարզպեան :

\* Փաւառոս . Ս. Ներսիսի յուղարկաւորութիւնը  
մկարագրելով , կ'ըսէ . « Եւ տոեալ զմարմին սըր-  
րոյն Ներսիսի զառմն Աստուծոյ՝ պաշտօնեայր և  
կեղեցւոյն , և Փաւառոս եպիսկոպոս , և պաշտօ-  
նէիցն ՔԵ----Ք Տրդած (Թերևս ՏԵԴ--Դ , իմազէս կը  
զտնինք գրուած նոյն Փաւառոսի Զ գրոց ԺԶ գը-  
խոյն մէջ երկու անգամ , որ մի և նոյն անձը կը  
կարծուի լինել) , և Մուշեղ սպարապետն և Հայր

տոսին՝ կաթողիկոսին՝ արտօնութիւնը շորո  
տեսակ էին. թագաւորին սէրն կամ մտեր-  
մութիւնն, նորա ընծայած շուբն և պա-  
տիւք, ամենաբարձր զիրքն և պաշտօնն, և  
սերտ ազգակցութեան կազն արքունի տանը  
հետ ի ձեռն խնամութեան<sup>1</sup>: Յայտնի է թէ  
զրիզոր՝ միայն աւետարանը և հաւասարը քա-  
րոզելով չէր կարող ձեռք բերել այսպիսի շա-  
փազանց բարձր կացութիւն մի: Պէտք է զի-  
տել դարձեալ, թէ իւր ենթազրեալ հօրը մե-  
ծամեծ պատիւներ կը խօստանայ Պարսից  
թագաւորը, և երկրորդ ինձ կոչեցից<sup>2</sup>:  
Երբ Հայաստան կու զայ նա, խօսրով և  
թագաւորական պատիւներ կու տայ իրեն և  
կը նստուցանէ զինքը երկրորդ աթոսին վերայ:

մարդպետ : Զգիտեմ իմչու այստեղ ճեղիմակն իրը  
յատուկ կամ պաշտաման ամուս կ'առնու ։ ։ ։ ։ ։  
բառը, որ պարզ է թէ կը թշանուկէ քահանայական  
գտում զլխաւորը, աւագերէց կամ սարկաւագա-  
պետ: Հաւասական է թէ Ս. Ներսիսի առաջին ։ ։ ։  
։ ։ ։ ։ ։ ։ Մուրիկ (Փաւոտ. Դ. ԺԵ), որ մի ամգամ  
միայն տեսաբանին վերայ կ'երկի և այլ ևս չի-  
շատակուիր, վախճանած լիմի և իրեն յաջորդած  
սոյն Տրդատը. և այս բանը կը հաստատուի Յան  
Բիզամդայ Զ գրոց վերջին զլխում խօսքերէմ:

Վ. Թ.

1. Փաւոտ. Գ., Ե:

2. Ագաթ. Բ. էջ 57 և 58 (Կրտու. Վենետիկ).

Ըստ զրուցին, Անակ՝ Սուբենեան ցեղեն իշխան մ'էր, և այս ցեղս յիրաւի պարսիկ արքունեաց մէջ թագաւորին երկրորդ տեղը կը զրաւէր<sup>1</sup>: Առկայն Հայաստանի մէջ այս աստիճանն կամ կարգն առաւելապէս կարենեան պահլաւեանց կը պատկանէր, վասն զի Սուբենեանը նախ երրորդ կարգը ընդունեցան<sup>2</sup>: Բայց այդ այնչափ կարեսրութիւն չունի: Առ արգեօք այս երկրորդ զանուն (ծεύτεրօς Թքօնօս-ի) մէջ, որ կը պատկանի Գրիգորի հօրը, չի կայ ուրիշ զրեթէ ջնջուած յիշատակ մի, այն ինքն է՝ թէ իրօք Գրիգորի նախահարք ժամանակաւ թագաւորէն վերջը ամենէն աւելի բարձրագոյն զահը կամ զիրքը ունէին: Այդ եթէ զիտենք, թէ ինչպէս մերձակայ աշխարհաց մէջ, ի կազմակից և ի Պոնտոս, քրիստոնեան Մայի<sup>3</sup>

1862). «Եւ ասյր նմա պատիւ ըստ օրինաց թագաւորաց, և հանէր նատուցանէր զնա յերկրորդ աթոռ թագաւորութեանն »:

1. *Potestatis secundae post regem.* Ammian. XXX, 2, 5.

2. Մավս. Խոր. Բ, եկ:

3. Աս (յն. ԱՃ)<sup>4</sup> Պահառափ կամանայի և կապազով կիոյ կամանայի պատերազմի զիցուհին էր, զոր յովնք Շնոք և հռովմայեցիք Bellona կը կուէին: Գրեթէ նոյն ասուուածուհին է ու զոր Հայր Նուռես կ'անուանէին, կ'ըսէ Գելզեր իւր մէկ թղթուոյն մէջ յարում չառ ազնուութեամբ կը բացատրէ իւր մի քանի հար-

երկու կոսմանայից մէջ ևս՝ անմիջապէս թագաւորէն վերջը ամենէն աւելի բարձրագոյն տեղը կը զբաւէք<sup>1</sup>, և բաց աստի՝ Հայաստանի մէջ հեթանոս քրիստոնեութիւն ընդհանրապէս արքայ կրտսեր որպես միջէն կ'ընտրուէին<sup>2</sup>, շենք սխալիր՝ եթէ ենթազրենք թէ Լուսաւորչի նախահարը. Հայոց արքունի տանը

ցութերու և տարակայաներու. և կը յաւելու, թէ ըստ իս վրիզակ մ'է յառ հայութէաներու Նոնե գրելն. Ակաթանգեղասի գրքին մէջ կը զանենք միայն տժականաբար, Նոնե-ի-ի-ո- դ-ո-ի-է. կամ ՀՀ-ո-ա- բացատրութիւնը (ՁՒ). իսկ գրյական կամ յատուկ անունը Նոնե՝ մեր պատմազիրներէ ո՛չ միոյն քով չի զանուիր. Ոյն աստուածունիս ասորերէն կը կոչուի Նոնե և յունարէն Նոνակ, որ կը հնչուի Նոնե-. և միշեալ բանասէրն կը համարի թէ հայերէն բառն Նոնե-ի-ո- յառաջ եկեր և յունարէնեն. Ոյն բառն կը հասասաէ նաև հայկական աւանդութիւնն. զի Մովսէս կը պատմէ մեզ (Բ. ՄԲ) թէ Արտաշէս <յիշլ-դ-ր- զպատկեր Աթենայ (Կոյն է ընդ Նոնե-յի) առյ բերել ի հայու»:

Ե. թ.

1. Ἐστιν δὲ ἵερος δεύτερος κατὰ τυρῆν ἐν Καππαδοκίᾳ μετά τῶν βασιλέων. Strabo XII. p. 535 C. և ի Պահαպա. Δις τοῦ τοὺς κατὰ τὰς ἑξάδους λεγομένας τῆς θεοῦ, διάδημα φορῶν ἐπόγχανεν διερεύς, καὶ ἦν δεύτερος κατὰ τυρῆν μετά τῶν βασιλέων. ի Տիτρου. Sacerdos Herculis qui honos secundus a rege erat. Justin. XVIII, 4, 5.

2. Երուանդ թագաւորին եղբայրն՝ Երուազ, Բագրանի քրիստոնեան եր (Մովս. Խոր. Բ. Խ): Իւր յանորդն ընդունի (ψόλος τοῦ βασιλείως) եր Արտաշէս թագաւորին (Անդ. Բ. ԽԸ). վերջը նոյն թագաւորն Անոյ մէջ (զիցն Արտամազզայ) քրիստոն, կը զնէ իւր Մասն որդին (Անդ. Բ. ԽԸ).

կողմանակի զիծ մի կը կազմեն, որտե՛ք քրու-  
մասպետոթեան օգաշտօնը կը վարէին: Յե-  
տագոյ հայոց համար անհանգութելի էր այդ  
մասածոթիւնն, թէ իրենց առաքեալն հեթա-  
նոս քուրմերէ սերած լինի, և կը քօզար-  
կէին այն բանը՝ իրենց մարին աւելի յար-  
մար զբացիւ մի, իրը թէ արքայասպան հօրէ  
ծնած լինէր: Այս կարծիքն՝ թէ Գրիգոր հին  
հեթանոս քրմերէ սերեալ է, անտարակոյս  
լոկ ենթազրութիւն պիտի մնայ միշտ, սա-  
կայն շատ իրեր և խնդիրներ կը սկարզէ մեզ:  
Նախ և առաջ նոր լոյս մի կը սփռէ այն  
իրին վերայ, թէ ինչպիսի շափազանց եռանդն  
և ազգեցութիւն ի զործ զրաւ Ո. Գրի-  
գոր՝ հեթանոս քրմաց անտեսական վիճակը  
և ապրուստը հոգալու համար: Ոչ միայն  
նախնին քրմաց որդիքն են որ կը կազմեն  
քրիստոնեայ քահանայութիւնը<sup>1</sup>, այլ և մե-

1. Մի և նոյն հանդամանքները կը տեսնենք նաև  
իրլանդայի մէջ, ինչպէս կը վկայէ Windisch. «Իր-  
լանդայի մէջ այլ այնքան շուտով պիտի չի ժաղկէր  
քրիստոնեութիւնն, եթէ ի նպաստ իրեն չի ժութա-  
յին այն հոգեւոր ոյժերն՝ որք կային արգէն քերթողաց  
և գատաւորաց հին գառակարգին մէջ: Այս կարծիքը  
յահափ արտայայտուած է, ինչպէս կը կարգանք նաև  
O' Cury-ի ձառերուն մէջ: On the Manners and Cu-  
stoms of the Ancient Irish, ed. Sullivan II, p. 72.  
Ետա բացայաց է այն պատմութիւնը՝ որը կը կար-  
գանք Book of Armagh-ի մէջ (ի սկիզբն թէ զարու)

հետնք և ամբողք՝ իւրաքանչիւր իրենց սպա-  
սուորօք և յաճախ լայնածաւալ զիւղիւք և  
ազարակօք՝ կանոնաւոր կերպով եկեղեցական  
կալուածներուն կարգը կը մտնեն : Թագա-  
ւորաց առատաձեռնութեամբ հետզհետէ կ'ա-  
ռաւելուին այն կալուածներն . ամբողջ նախ-  
արարութիւնը կամ նահանգը , զեօղք և  
ազարակը պարզե կը արուէին եղիսկուլուսաց <sup>1</sup> :

Ա . Պատրիկիոսի և Դիքրթու բանասեղծի մասին .  
Ա . Պատրիկի Լէյնուըր գաւառին համար եղիսկուլուսի  
ժի պէտք կ'ունենայ և կը խնդրէ Դիքրթու բան-  
ասեղծէն՝ որ յարմար անձ մի գանէ իրեն . սա կը ներ-  
կայացնէ իւր մէկ աշակերտը . զոր խորոյն կը մկրտին ։  
Հման . Stokes, Goidelica <sup>2</sup> pp. 86 և 91 ; Hogan, Documenta de St. Patricio p. 104 սզզ ։

Ա . Խնդրէս տեսանք յառաջն ( էջ 94 ) . Աղբանոս  
եղիսկուլուսը իրեն կարուծ ստացա . Մանաւզեանց  
գաւառը . այսպէս նաև Բայանու եղիսկուլուսն նուէր  
ընդունեցաւ քոյոր Որդունեաց երկիրը՝ հանգերձ իրենց  
Որդորու քաջաքով ( Փաւատ . Գ , Դ ) : Փառէն կաթո-  
ղիկոսին որդին՝ Յովհան եղիսկուլուսն՝ անվայել խեղ-  
կատակութիւններ կ'ընէր թագաւորաց առջեւ , որպէս զի  
կալուածներ և ազարակներ ստանար ( Փաւատ . Գ , Բ ) :  
Ըստ կանոնաց Ա . Առանկայ . Ա . Դրիգոր քահանայից  
պարենի համար տուեր էր իրենց եկեղեցեաց պատկա-  
նոց ոչխարաց և ուրիշ անաւանց մէկ մասը . ինչպէս  
նաև ցորենի և զինույ տառանորդը : Տրդատ պատուի-  
րեց որ առենայն եկեղեցիք իրենց պահեստի համար  
չորս ազարակ ( Հ-Ղ ) . և քաղաքաց մէկ եօթը տուն  
( Երբայ Հ-Ղ ) ունենան ( Աղաթ . Ճ-Թ . էջ 624 ) :  
Յոյնն երկու անգամն այլ ձրօնրաց (-Ք-Շ-Ղ . Հ-Դ) կ'ըսէ  
Տ 450 . « Էտաքն τέσσαρας ձրօնրաց ևν τοῖς χωρίοις ,  
ևν ծէ ուλις չարտովծեսιν ։ πτά ձրօնրաց մէς նորմεσιան  
տօն լոքուց ։ Փաւատու ևս եօթն ազարակ կամ Հ-Ղ

Այլ ոչ այնքան ճշխ և տռառ նուերներ ստացաւ, ինչպէս կաթողիկոսն ինքնին : Անզամ մի Ներսէս պաշտօնական այցելովիւն կ'ընէ իւր կալուածոց կամ ձեռական իշխանութեանց մէջ<sup>1</sup> : Տասն և հինգ զաւառ կամ վիճակը կը պատկանէին իւր իշխանութեան, որոց մէջ զիստորներն էին . Այլարատ, Դարանադի, Եկեղեց, Տարօն, Բզնունիք և Շոփիք : Այն կալուածներէն ամսնց տեղը կրնանիք նաև ճշգիւ նշանակել . Գարանազեաց մէջ կաթողիկոսի ստացուածն էր Թորպան գիւղը, որ հայրապետաց զերեզմանատեղին էր, և Բարիմիա զից մեհեանն . Եկեղեց մէջ<sup>2</sup> կաթողիկոսին կը պատկանէր Թիլ աւանը<sup>3</sup>, ուր էր երրեմն Նանեական զից մեհեանը . Այլարատասայ մէջ՝ կալուած մ'ունէր յԱրտաշեանատ, ուր կործանուած էին Ա-

կ'ըսէ (Ե. 1.Ա.) : Բագրեանզայ եպիսկոպոսանիստ եղեղեցւոյն եղեները կը յիշէ Փառաստ (Ե. ԺԱ), որոնք անտարակոյն ի ոկզբան Բագրատնի Ամանոր զից մեհենին ստացուածներն էին : Հման . Յօնէ Արտամ Ասք (որ է՝ Պերրո, Պերօ, Գ.Էսրդ Աբովյացի, էլ 150, և Մանեթո թիւնն Հովհաննի էլ 247) յանցո Եղբայրութեան Առաքանիւն . Անկուլ . Խոհք եպիսկոպոսն արգունական ձիերէն զեղեցիկ և ուշեանձ նժոյզներ նուէր ստացաւ Թագաւորէն (Փառատ, Գ., ԺԲ) :

1. Փառատ . Գ., ԺԲ :

2. « Ե. Թիլն աւանիք, ի կալուածու Գրիգորի հօք եւրոց » . Փառատ . Գ., Բ. :

նահանջ բազիններն և Տիւր զից մեհեանն է : Գլխուոր կալուածն , Աշտիշատի մէջ վահագնի հին մեհեանն , ծանօթ է արդէն : Խնչպէս կը տեսնուի , նախկին հեթանոս մեհենից քանզուելովը՝ Ա . Գրիգոր ձեռնունայն շի մնաց . որովհետեւ նոցա պատկանող ընչից և ստացուածոց մեծազոյն մասն անտարակոյս կաթողիկոսական կալուածոց մէջ մտաւ : Այն կալուածոց մէջ ամենէն աւելի նշանաւորն էր Աշտիշատ , իրր բնիկ նիստ կամ կայենան հայրապետական տանը : Հայր

Ա . Ա . Ներսէս հայրապետի Ամաք զիւղն այլ (Փառատ . Զ . 2) , — որու մասին ինքնանան Աւուրհանքունիւն , Հայութեան մէջ յիշատակութեան արժանիք բան չի գտներ . — Թուի Այրարատի մէջ լինել : Այսպէս նաև կաթողիկոսին ստացուածոց մէջ ո գտակերտն իւր ըստանատակ \* . Այսրարատեան զատարին ի Վաղարշապատ քաղաքն > (Ագոթ . ձի) :

\* Այս բառու . որ կը գրուի նաև ը-դ-դ-դ-կ . ցարդ քանասէրներէն շատք յատուկ անում կը կարծէիմ . և կը հասկնայիմ Ս . Գրիգոր Լուսաւորչի պատկանող կալուածներէն կամ զաստակերտներէն միոյն անումը : Աերշիմ ժամանակներս ուսուցչապետն ։ Մաս զըցուց հաստատապէս՝ թէ յատուկ անում էր այն . այլ երկու պարօնի քառերու բարդութիւն մի (—դ և —դ-կ) . որ կը նշանակէ ————կ ————է է-կ-ւ ա-դ-է : Արդէն տարիներ յառաջ՝ Մին չ . Պ . Ամիշան զրեթէ Սոյն կարծիքը յայսմեր էր իւր նըշամաւոր Աւուրհանք երկասիրութեան մէջ . (Աւուրհ . Ղետիտ . 1890 , էջ 204) :

Մ . Թ .

մարդութեան այցելով եւան տոթիւ սպատմազիքն  
մեծ ախորժով և հանովեամբ կը նկարագրէ  
այն շքեղ զատակերուը (Փառա. Դ., Ժ.):  
Ո. Ներսէս կը սպատափրէ շքեղ ճաշ մի  
սպատրաստել ի սպատիւ ազնուատոհմ այցե-  
լուին. նոյն սպահուն Հայր մարդութեան ու ե-  
լանէր յեպիսկոպոսական կայենէն յասլարա-  
նիցն մինչև ի միայարանո սրբոցն (Յովհան-  
նու և Ամենազինեայ): Ի մեծ և ի զե-  
ղեցիկ հրապարակին երթեւեկս տեսալ շրջէր՝  
զնեմն տեսալ: Ապա տեսանէր զգեղեցկու-  
թիւն վայրացն, զնիստ շքեզովեան ի բար-  
ձրաւանդակ տեղեացն և զնայեացն ի խոնարհ,  
զի կարի վայելուշ էր տեղին: ... Զիա՞րդ,  
տաէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ  
մարդկան տուեալ է և ոչ արանց<sup>1</sup> ո: Աա-  
կայն Աշտիշաս, ինչպէս պիտի կարծուի թե-  
րես, եկեղեցւոյ յատուկ կալուած շէր, այլ  
Ո. Գրիգորի ստացուած: Պապ և Ամենա-  
զինէս, որոնք բատ ամենայնի հետեղը էին  
Ովնեայ և Փենեհեսի վարոց, և զինուո-  
րական կենաց տալով իրենք զիրենք՝ կ'ար-  
համարհէին և կը ծազրածէին սրբազան ի-  
րերը և տեղերը, այնու հանդերձ կը բնա-

կէին Տարօն զաւառին մէջ Աշտիշատի եկեղեցւոյն քով, զոր չիներ էր իրենց նախահանի Գրիգոր<sup>1</sup>։ Նոքա եպիսկոպոսանցի ( Էպիսկոպուսուն ) մէջ կը բնակէին, և բոլորովին անառակ և անկրօն կեանք մի կը վարէին, վարձկաններով, զուսաններով, խեղկատակներով և արիշ ամէն տեսակ անառակութեամբ պղծելով սրբազն տեղերը։ Աակայն նորու մինչև իրենց մահը այն տեղ մնացին՝ առանց վրդովաւելու մէկէն, որովհետեւ իրենց սեփական կալուածին մէջ կը գտնուէին<sup>2</sup>։ Նոյն իսկ Գրիգորի տանը վերջին կաթողիկոսն՝ Ա. Աահակ, արու ժառանգներ չունենալով, բոլոր իրեն կալուածները, ազարակները և զիւղերը, իոր յաջորդաց չի կտակեց, այլ իրեն զատեր որդոց՝ որ էին Աամիկոննեանք։ Եւ այսպէս Աշտիշատ զիւղն<sup>3</sup>, նախեին եկեղեցական ամբոցն, աշխարհիկ մարդկանց ձեռքը անցաւ։ Արդ, եթէ Արտիշատի կալուածը, ինչպէս պարզ կը հետեւի, ոչ եթէ եկեղեցա-

1. Փառատ. Գ., ԺԹ։

2. Հետեւաբար նոյն ժամանեակի կաթողիկոսը յԱշտիշատ չէին նատեր. Աթանազիկնեայ որդին՝ Ա. Նորական որ զարձեալ զրաւեց ընտանեաց աթոռը։

3. Բնակ գուշ կը կոչէ Ա. Փարակեցին (ԺԸ)։

կան աստիճանին կամ իշխանութեան պատմառու կը պատկանէր Ո . Գրիգորի տանը , ոյլ իր բնական ժառանգական իրաւունք . ազա ուրեմն յայտ է՝ թէ Ո . Գրիգորի նախահարդին տեարք էին Աշտիշտիք նոյն իսկ Հայաստանի դարձեն տառջ , որ ըսել է՝ թէ Լուսաւորիչն Տարօնի հին եկեղեցական իշխանաց տանը սերունդն էր :

Ստուգիւ նշանաւոր անձնաւորութիւն մի , որպիսի ոք էր Ո . Ներսէս , հայկական եկեղեցւոյ այս հնաւանդ և տարօրինակ զրութեան վերջ զրաւ : Դիմոզութեան արժանի հանգամանք մ' է՝ որ Ո . Ներսէս բոլորովին յայն տարերաց մէջ սնաւ և զարգացաւ , և ի Եկսարիս քրիստոնեայ վարժապետաց ձեռքը կրթուեցաւ : Ուստի յայտ է թէ՝ տակաւին զեռահասակ՝ իւր աշխարհին ամենաբարձր եկեղեցական իշխանութիւնն ընզունելով , ջանաց Հայաստանի մէջ ևս զործազրել Ո . Բարողի ժամանակի եկեղեցւոյն ամենաբարձր գաղափարները :

Հայ կղերին Եկսարիոյ հետ ունեցած սերայարարերութեան պատճառու , Ո . Բարողի նման անձնաւորութիւն մի պէտք էր ումենամեծ ազգեցութիւն զործել մօտակայ լեռնազառառաց վրայ . և յիրաւի , Փաւստոս տակաւին

բալորութին զիւթուած է այսպիսի կարող ան-  
ձնաւորութեան մի ազգեցութեամբ : Ներսէ ո՛  
չայտատանի թուժմաս թէքն է : Երեղ պա-  
րատականն կը զառնայ կը լինի ամենէն ա-  
ւելի եռանկան քահանայն , և միանզամայն  
նուիրապեա մի՝ որ անզուդ և առանց ակն-  
առութեանց խը նոյտատակին կ'ուզէ հասնիլ .  
« Զթազէ ական ամսոն միւսանզամ ելից ,  
և իւրաց հարցն նմանեալ որդի եղե <sup>1</sup> » : Եստ  
նշանաւոր եղաւ նոր կաթողիկոսին նախա-  
զահութեամբ զումարուած Արտաշատի մեծ  
ժողովն : Դժբախտաբար պատմիչն՝ նոյն ժո-  
ղովոյն զործոց և որոշմանց վերայ՝ շատ սա-  
կաւ իսկական տեղեկութիւններ կու տայ  
մեզ , մինչ կը ճախանայ ընդհանուր զովաբա-  
նական բացատրութեամբ : Անդ եկեղեցական  
նոր կանոնազրութիւն մի հաստատուեցաւ , և  
հաւատոյ մասանց կամ վարդապետութեանց  
նոր ժողովածոյ մ' եղաւ <sup>2</sup> Արոշուեցաւ զար-

1. Փաւուտ . Դ . Դ :

2. Հաւատականաբար առորերէն կամ յունարէն :  
Ըստ վկայութեան Համարտասէր կորեան , Նիկիոյ և  
Եփեսասի ժողովոց յունարէն կանոնք բերուեցան ի Հա-  
յուստան ի գարու մէջ ի ձեռն Վեհազայ . կորեան և  
Եղեղայ : Առափ կը հետեւի թէ այն կանոններն՝ զորս  
բերաւ Արիստակէն Նիկիոյէն՝ լոկ ինքնանար զիւս  
մէկն : Այն յաւելուածներն այլ զարձեալ , զորս կ'են-  
թագրենք թէ Լուսաւորիչ ըրուաւ , բեականաբար Ո . Ո -

ձեալ որ առաքելական կանոնք ամենուն համար ևս սպարտաւորիշք լինին : Եենաց համար կարեորդ էին մասնաւորապէս նոր և առելի խրատագոյն ամուսնական կանոնք (արզելեալ խրանամաթեանց նկատմամբ) , և կերաւկրոց մասին զրուած պատուերներն , զի հին հայկական եկեղեցին՝ այս ամենի բանի մէջ պէտք էր համաձայնիլ բովանդակ քրիստոնէութեան : Յնչ որշափ խիստ և ընդարձակ էին սոյն կարգագրութիւնք՝ կրնանք պատամիշին խօսքերէն հետեցրնել , որ զարմացած կ'ըսէ , թէ Ա . Կերսէս կ'ուզէր զրեթէ բոլոր հայ ժողովուրդը՝ մեծ վանական միարանութեան մի փոխել , ի բաց առեալ ամուսնութիւնը՝ որ ներելի էր . « Յայնմ ժամանակի կարզեցին (կազմեցին կանոնեցին յօրինեցին) , և առարին զամենայն ժողովուրդս երկրին հայց՝ իբրև կարդ միարանութեան վանականաց համաշխարհի , բայց միայն յամուսնութեան օրինացն » (Փաւատ . Պ. , Պ.) : Ինչպէս իւր նախահայրն Գրիգոր , այսպէս այլ

հակայ ժամանեակէն առաջ չէին կրնար գոյութիւն ունենալ : Հարկ չէ ըսէլ , թէ նոյնպէս Ա . Գրիգոր Լուսաւորչի ընծայուած ճաներն (Յ-Ֆ-Լ-Շ-Պ-Վ-Ն-Շ կոշուած) շատ ժամանակ վերջը եղած անվաւեր և խարզախեալ զրութիւնը են , ի բաց առեալ թէրես Արքաթանգեղոսի զրոց մէջ զանուածները :

Ներսէս կը քարոզէր անձամբ, բնականաբար տեղւոյն բնիկ լեզուով, և եղաւ անձնանուէր առաջնորդ մի հոգւոց, ջանալով ամենայն կերպով բարտօքել ստորին զասակարգին վիճակը՝ թագաւորին և մեծամեծաց ձեռնտուութեամբ :

Ամէն բանէ աւելի զարմանալի է իրեն օրինակելի կազմակերպութիւնն՝ հիւանդները և օտարները զարմանելու մասին, որոց համար առանձին շէնքեր կառոյց բոլոր զաւացաց մէջ<sup>1</sup>։ Ա. Գրիգորի Նազիանզացւոյ քսաներորդ ճառն և Ա. Բարսովի թուղթերն կը ցուցընեն, թէ Ներսէս այս բանիս մէջ ևս պարզապէս հետեւցաւ այն բարեկարգութեանց, զորս յիշեալ սուրբ հայրն եկեղեցւոյ մուծեր էր կապագովիկիոյ մէջ։ Մուրողութիւնը՝ որ Հայաստանի և բոլոր արեւելքի ընդհանուր հարուածն էր՝ բոլորովին արդիլեց Ա. Ներսէս։ Ամէն զաւառաց մէջ այլ աղքատանոցներ հաստատեց նա՝ ի պէտս կարօտելոց, որոց վերայ յատուկ վերակացուներ զրաւ։ Նմանապէս խրաբանչիւր զիւղից և առանաց մէջ հիւանդանոցներ և օտարներուն համար հիւանոցներ շինեց, և նոցա

մասնաւոր հոգաբարձուներ կարգեց, և իւ-  
րաքանչիւր հասարակութիւն պարտական էր  
ինքնին զարմանել նոցա պէտքը: Փաւառու  
կը վիայէ թէ Ա. Ներսիսի ժամանակ ընտ-  
մուրողներ չեն տեսնուեք<sup>1</sup>:

Երիտասարդութեան ուսմանց և կրթու-  
թեան համար ևս բարեկարգութիւններ ը-  
րաւ. Հայաստանի ամենայն զաւառաց մէջ  
յոյն և առորի լեզուաց վաճարաններ հաս-  
տառեց:

Բայց ամէն բանէ տեղի զարմանալի է  
այն արտաքոյ կարգի յառաջաղիմութիւնն, զոր  
ըրաւ միանձնական և նզնաւորական կեանքն  
իրեն աղղեցութեան ներքէ: Վաղուց արդէն,  
նոյն զարուն սկիզբը, Դանիէլ ասորին՝ Աւ-  
տիշատի եկեղեցւոյն զիխաւոր քահանայն  
մերթ ընդ մերթ անմարզի լերանց անա-  
պատներու մէջ ճգնաւորի կեանք կ'անցու-  
ներ, և ժողովուրդը կը յարգէր զինքը իրը  
սրանչելագործ: Խոր սիրական բնակարանն  
էր վահագնի հին մեհենէն սակաւ մի հե-  
ռու գտնուած քարայր մի, ջրարրի և պո-  
րակագեղ ծործորակի մի մէջ, որ Հացեաց  
դրախտ կը կոշուէր<sup>2</sup>: Ցետազայ հոշակաւոր

1. Փաւառ. Ե. Լ. Ա.:

2. Փաւառ. Գ. Ժ. Ի.:

երկու ճգնաւորքն , որոնք էին՝ Շաղիտա ա-  
սորին և յոյն Եպիփանը , Դանիելի աշա-  
կերտք կը կոչուին : Արա Ա . Ներսիսի  
ժամանակ բազմահոյլ ճգնաւորաց խումբեր  
աշակերտեցին իրենց , և իրր երեւելի հրա-  
շագործք հոշակուած էին : Խնազէս սովորա-  
բար անտպատի ճգնաւոր հարքն և Տրամա-  
խոսութեան (Dialogus) սուրբքն , այսպէս  
նաև սոքա անվասա կ'ասպէին վայրի զազա-  
նաց մէջ , առիւծներու , արջերու և ինձերու  
հետ : Այն ճգնաւորք մեծ զործ մի կատա-  
րեցին . հարաւային կողմերը , որոնք իրենց  
լեզուով կը զանազանէին Հայաստանի միւս  
մասերէն , սացա ձեռքով դարձան ի բբիս-  
տոնէութիւն : Ա . Եպիփան առաքելոյ նման  
զործեց և բարողեց Մեծ Ծոփաց և Աղ-  
ձնեաց աշխարհներուն ասօրի ժողովրդեան  
մէջ , իսկ Շաղիտա՝ կորուաց երկրին մէջ :  
Անձիտ զաւառին առաքեալն՝ Յովհաննէս ,  
որ նոյնազէս ազգաւ ասորի էր , բերանացի  
անստոյդ աւանդութեան մի համեմատ՝ ա-  
ւելի մանկահասակ (զի ծաղկեցաւ զրեթէ  
400ին միջոցները) , շատ մեծ յաջողութիւն-  
ներ ունեցաւ՝ կատարեալ կերպով հմաւա լի-

նելով տեղոյն լեզուին<sup>1</sup>, որ է՝ որտայերենի<sup>2</sup>: Այս կրօնաւորաց և ճգնաւորաց ըրած զործը կարելի չէ զրուատել բայ բաւականի, որովհետեւ նոցա քարոզութեանց արդիւնքն է միայն՝ որով Հայաստան ստոպի քրիստոնեայ երկիր մը զարձաւ՝ Ա. Կերպիսի և իրեն յաջորդաց ժամանակ: Ուստի փաստու, խոսելով նշանաւոր Գինդ ճգնաւորին և իւր նմանեաց վրայ, կ'ըսէ. « Եռքա շատ հեթանոս տեղեր շրջեցան հեռաւոր աշխարհներու մէջ, բազմաթիւ և ցիրութենէն, և շատերը բերին ի զիտութիւն յաւիտենական կենաց և ի ճանապարհն ճշշմարտութեան<sup>3</sup> »: Այս կերպով զարգացաւ Ա. Կերպիսի միջոց վանական և ճգնաւորական կեանքն: Օրինակ իմն, Ա. Եպիփան կը հաւաքէ իւր շուրջը 500 կրօնաւոր և աշակերտ. յայտնապէս կ'աւանդուի՛ թէ Ա. Կերպու այս մասին փոյթ տարաւ նաև կրտնաց համար: Աշխարհին իւրաքանչիւր զաւառաց

1. Joannis ep. Ephesi Commentarii de beatis Oriental. p. 182.

2. Թերեւ քրզերէն ըստ Կերողեքէի (ZDMG. 33, S. 165).

3. Փառառ. Ե, Փ2:

մէջ, ինչպէս նաև զլխաւոր տեղերը, կուսասաններ հաստատեց, զորս պարսպապատ ամրացուց աւելի առահօվութեան համար: Այս միակ մարդ, որ լի էր այնպիսի գործօնէութեամբ, իսր կաթողիկոսական սակաւ ժամանակին մէջ զիտցաւ բոլորովին կերպարանափոխ ընել հայ եկեղեցական կեանքը, և մերձեցրնելով զայն յոյն քրիստոնէութեան՝ բառնալ իրեն յատուկ ազգային բնադրումը:

Այլ պէտք չէ կարծել՝ թէ նուիրապետութեան ի զործ զրած այս միջոցներն, որոնք ոչ միայն կրօնական կենաց՝ այլ և ժողովրդեան բովանդակ ընկերական կենաց վերայ խոր ազգեցութիւն մի կը զործէին, ընդունելի եղան իսկոյն առանց արգելներու հանդիպելու: Ներսէս՝ իսր սակաւժամանակեայ հայրապետութեան միջոց՝ սաստիկ ուժգնութեամբ զործեց, ուստի բուռն հակազգեցութիւն մի յառաջ եկաւ: Թագաւորական կուսակցութիւնն բացարձակ կերպով թշնամի և հակառակ հանդիպացաւ նուիրապետութեան: Աակայն առաջին անգամ չէր այս՝ որ եկեղեցական և աշխարհական իշխանութիւնը իրարու հետ հակառակութիւն ունեցան. վաղուց արդէն Ա. Ներսիսի պատէն (Ա. Յուսիկ) նզովեց Տիրան թագաւորը և ուրիշ մեծամեծներէն շա-

տերը, յայտնի արիւնեզութեանց և անբարոյական զործոց համար. բայց ամենախիստ կերպով բրաւ զայն, որ է՝ հանդիսաւոր օք մերժելով և արտաքսելով թագաւորը, մինչ նա կ'ուզէր եկեղեցի մտնել : Թագաւորին հրամանաւ բրածեծ եղաւ նա, և այնպէս սաստիկ կերպով՝ որ մեռաւ. ուստի իր յաջորդին ըստ ամենայնի հլու և հպատակք եղան ամբարիշտ թագաւորին կամացը : Տարակոյս շի կայ՝ թէ Ա. Ներսիսի և Արշակ թագաւորին մէջ եղած զժառութիւնն բարոյական պատճառէ : յառաջ եկաւ, թէ և փաւուսի սոյն բանին ընծայած շարժառիթն ժողովրդական զրոյցներու ևս պատկանելու լինի, որ է՝ արդար զայրոյթն Գնելի սպանութեան համար և թագաւորին ամուսնանալն սպանելոյն կնոջ հետ : Ասկայն ստուգիւ արքունի

1. Նոյն կերպով՝ ինչպէս վերը պատահեցաւ. Պապ թագաւորին հետ եղած զժառութիւնն : [1]. Ներսէս խիստ բանիք կը յանդիմանելը թագաւորը՝ իւր գարշելի մեղքերուն համար (Փաւուս. Ե, 10<sup>o</sup>): Եկեղեցական պատճին թեական անտարբերութեամբ մի և առանց ու է ակնածութեան կը խռով այսպիսի վառեկաւոր և կնձռուս առարկայի մի վերայ (Փ., 10<sup>o</sup>), որպիսի կը դանենը միայն կիւրզի հայրապետին ներփնեաց վերայ խռոած քարոզին մէջ. որ թերեւ կարող պիտի լինէր շառապահել Զուայ մի և կամ արդի բերլինցի ցոփարան գրիշերը :

զահուն և սեղանոյն մէջ ծագած զժոտոթեան  
զիստոր պատճառք եղան քաղաքական շարժ-  
ափթք : Սաստիկ կերպով ընդդիմացան Ա .  
Ներսէս և իւր տեղապահ խաղ եպիսկոպոսն  
արքունի զաստակերտ Առշակաւանի կանգնե-  
լուն , որ ապաստանի քաղաք մ'եղաւ : Այն  
ամէն առանձնաշնորհութիւնք՝ զորս տուա-  
թագաւորն նոր քաղաքին բնակչաց՝ փոշ  
մ'եղան յաշս քահանայից և ազնուականաց ,  
որովհետեւ նոցա հապատակներն և գաղթա-  
կաններ խմբովին կ'երթային նոր քաղաքին  
մէջ հաստատելու իրենց բնակութիւնը : Կա-  
թողիկոսն զանգատեցաւ թէ այն նոր հիմն-  
արկութիւնն ըոլոր աշխարհին կործանման  
սկանառ սիստի լինէք , և կ'ուզուէք որ նոյն  
ինքն թագաւորն հրամայէք՝ որ նոր քաղաքացիք  
իրենց հին բնակութիւնները զառնան . հետեւ-  
բար կաթողիկոսն՝ այս դէսպիս մէջ՝ ազնուա-  
կանութեան և եկեղեցական առաջնորդաց  
արհամարհուած իրաւանց սկաշապան հանդի-  
սացաւ : Այսու կողմանէ քաղաքն երբէք չի  
ծագկեցաւ , և հակառակորդք յաղթանակեցին :

Ոլիմբիա թագուհոյն թաւնաւորուելէն վերջը  
յայտնապէս զժոտութիւն և հակառակութիւն  
մտաւ Ա . Ներսիսի և թագաւորին մէջ , և և  
սուրբ կաթողիկոսն Ներսէս այլ ոչ ևս յա-

ւել տեսանել զերեսս թագաւորին Արշակայ՝  
մինչև յօրն նորին կորստեան<sup>1</sup> ։ Առըր հայ-  
րազետն խզեց ի սպառ եկեղեցւոյ և արքունեաց  
մէջ եղած յարաբերութիւնը. թագաւորն այլ  
հակառակաթոռ կաթողիկոս ընտրեց Չունակ  
մէկը. Աակայն Ներսիսի և կեսարիոյ եկե-  
ղեցւոյ առաջնորդաց մէջ սերտ բարեկամու-  
թիւն լինելով, և ոչ մտածուեցաւ անզամ  
ձեռնազրուելու զրկել զՉունակ. Նոյն իսկ հայ  
եպիսկոպոսունք, որը կանչուեցան թագաւորին  
հրամանաւ կաթողիկոսին ձեռնազրութեան,  
ընաւ յանձնառու շեղան և բացէ ի բաց մերժե-  
ցին. այլ միայն Աղձնեաց և կորզուաց ե-  
պիսկոպոսները հաւանեցան, և զնացին կա-  
թողիկոս ձեռնազրեցին Չունակը՝ թագաւո-  
րին հրամանին համեմատ. Բայց Աղձնիք և  
կորզուք այն նահանգներուն մէջ կը զըտ-  
նուէին, զորս յամին 363 շնորհեցին Համ-  
մայեցիք առ Պարսիկս. ապա անտարակոյս ա-  
ռանց թեմի և իշխանութեան կ'առլէին այն-  
տեղ, հայ արքունիքն իրենց մասնաւոր թո-  
շակ յատկացնելով. սոյն բանս կը բացատրէ-  
նացա հլու հպատակութիւնը. Գարձեալ շատ  
կարեոր կէտ մ'է այս ապօրինաւոր ընտրու-

թիւնը, իրը հայ եկեղեցւոյ առաջին փորձ մի՝  
կեսարիայէն բոլորովին անկախ զլուխ մ'ու-  
նենալու :

Արշակաց արկածին պատճառաւ (յամին  
367) երկրին քաղաքական և եկեղեցական  
զիրքն ի սպառ կերպարանափոխ եղաւ : Հռով-  
մէական կայսերութեան միջամտութեամբ ար-  
քունի գահուն վերայ բաղմեցաւ մանկա-  
հասակ Պատին. այն միջոց իրօք կատարեալ  
ներդաշնակութիւն մի կը աիրէք աղնուական  
զասուն և եկեղեցականաց մէջ . թէ և սոսյզ  
է, թէ թագաւորն և մեծամեծք շատ թա-  
խանձեցին՝ մինչև որ հաշտուեցաւ Ներսէս ար-  
քունեաց հետ<sup>1</sup>, և սկսաւ գարձեալ մասնա-  
կցիլ տէրութեան գործերուն . զոր և ըրաւ յօ-  
ժարութեամբ և անձնանուէր կերպով : Հայաս-  
տանի հայրն՝ « Էք նոյա այնուհետեւ վերա-  
կացու և խրատատու , կարգիլ և առաջնորդ<sup>2</sup> » :  
Բայց հազիւ թէ շափահաս եղաւ Պատի, ե-  
կեղեցական խնամակալութենէն ազատեցաւ.  
և Ա. Ներսէս մերժեց զինքը եկեղեցւոյ հա-

1. Չունակ ոյլ ևս չի յիշատակուիր այնուհետեւ .  
իւր սակաւորեայ կաթողիկոսութեան պաշտօնն զա-  
զրեցաւ անշուշտ իւր պաշտպան թագաւորին դերու-  
թեամբն :

2. Փառատ. Ե, Ա:

զորդովենէն իւր նոզկալի անտառկութեանց  
պատճառաւ , եթէ սույզ է պատմըին ա-  
ւանդածն <sup>1</sup> : Թագաւորն չի համարձակեցաւ  
այն բանին զրէժն առնուլ ազգեցութիւն ու-  
նեցող և ամենուն սիրելի հայրապետէն . բայց  
եկեղեցական կուսակցութիւնն համարեցաւ  
թէ նորա տարածամ մահուան պատճառն ե-  
զաւ թագաւորին թունաւորն ։

• Այն ժամանակները երկցաւ այնպիսի հակ-  
ազգեցութիւն մի ընզգէմ եկեղեցականց <sup>2</sup> ,  
որուն նմանը երրէք տեսնուած է , բայց մի-  
այն թշնամի—քահանայից (Priesterfeind)՝  
կոչուած լըրիք թագաւորին միջոց , որ Նիու-  
րասի (Drontheim) լըրունոր (Jörundr)  
արքեպիսկոպոսը իրեն կուն կամ եարլը (jarl)  
անուանեց <sup>3</sup> : Դիանելի է զարձեալ , որ թէ

1. Հմեմ . Փառատ . Պ. , Խ. և Ե. , ԵԲ : Դիանելով թէ  
ինչպէս կուսակցական ողին յախուռն կերպով կը չա-  
փազանցէ այս մասին . ովէոք է մեծաւ զգուշութեամբ  
ընզունիլ այն տեղեկութիւններ :

2. Փառատ . Ե. , Խ. :

3. Սոյն գէպքան նորուեզիոյ պատմութենէն առևտուած  
է . յիշեալ արքեպիսկոպոսն և լըրիք թագաւորն իրա-  
րու հետ թշնամանուրով . թագաւորին յազգանակեց՝ ի-  
րեն կուսակցից ունենալուն նաև եկեղեցական դասր . յոկ  
արքեպիսկոպոսն այնչափ խռնարիեցաւ . որ թագաւորին  
իշխանութեան և ամենայն կամացը հպատակեցաւ . և  
նորա Լ-րէ (jarl) եզաւ : Մինչդեռ նախովին ժամա-  
նակաց մէջ՝ նորուեզիոյ թագաւորութիւնն Ո . Ռլաֆի

Պատ և թէ Երիք, այս երկու գիտակցաբար  
բանաբարողքն եկեղեցական իրաւանց, տա-  
կաւին անշափահաս պատանիք էին (Եկեղ. Ժ.,  
16). թէ Հայաստանի և թէ Նորուեզիոյ մէջ՝  
յաջորդքն խելոյն հանգարտ և անշառկ ջնջեցին  
հակակղերական կառավարութեան ծրագիրը,  
միոյն մէջ՝ Մանուէլ Մամիկոնեան և միւսոյն  
մէջ՝ Հակոն Հալէզր: թէ ուշ աւելի լաւ ըմ-  
բռնեց խոր ժամանակին ողին, հարկ չէ ըսել:  
Պատ բուռն կերպով կռուեցաւ եկեղեցւոյ զէմ,  
և ոկոսու Ա. Երախիսի հաստատած բավանդակ  
զրութիւնը եղծանել: Աղբատանոցները,  
հիւանդանոցները և օտարանոցները բնաջինջ  
բռտ. կռաստատանները փակեց և կռւսան-  
քը ցրուեց և հեռացուց: Բայց ամէն բանէ  
յառաջ՝ Պատ եկեղեցւոյ հարուստ կալուած-  
ները յարբունիս զրաւեց: Այն եօթը կա-  
լուածներէն՝ զորս Տրդատ յասկացուցեր էր  
իւրաքանչիւր եկեղեցեաց՝ հինգը յափշտո-  
կեց և արքունի կալուածներուն վերայ աւել-  
ցուց, և միոյն երկու անդ կամ հող թողուց

աւատը կամ կալուածը կը համարուէր, որուն աէքն էր  
արքեպիսկոպոսն և թագաւորին նորա ձեռքէն կ'ընդու-  
նէր Ա. Ուստի թագը: Երիքի յաջորդն՝ Հակոն Հաւելի  
(երկայնասրուն) զարձուց եկեղեցւոյ բոլոր ինչքերը և  
նորէն հաստատեց արքեպիսկոպոսը իւր նոխոկին իրա-  
ւաց և իշխանութեան մէջ:

իւրաքանչիւր եկեղեցւոյ : Ամէն մէկ զիւղի  
մէջ միայն երկու եկեղեցականք պիտի լի-  
նէին , մէկ քահանայ և մէկ սարկաւագ .  
իսկ քահանայական ընտանեաց միւս անձինք  
ըսլորն այլ արքունի տանը մէջ պաշտօններ  
ընդունեցան : Ամուսնութեան մասին հաս-  
տառաւած եկեղեցական խիստ կանոնազրու-  
թիւնք վերցուեցան , և թոյլ տրուեցաւ նո-  
րէն՝ զէթ լուսթեամբ՝ որ երգուին մեռելոց  
վերայ եղած հեթանոս ողբերն և նորոգուին  
հեթանոս կոց պաշտամունք , հետեաբար ժո-  
ղովուրդն այլ զոհ եղաւ այս նոր կարգազրու-  
թեամբք :

Պիտցաւ Պատ ճարտարութեամբ ի նպաստ  
իրեն զործածել Ա . Ներսիսի ըրած մէկ  
վրիսլակը : Նորա սերա առնչութիւնն կեսա-  
րիոյ հետ և ընդհանրապէս յայտնի հակա-  
միառութիւնն առ յունական եկեղեցին՝ պէտք  
էր յուղել և զրգուել հայուն պէս ժողովուրդ  
մի , որ այնքան նախանձաւոր էր իւր ազգայ-  
նաւթեան : Պատ՝ առանց հարցնելու կեսա-  
րիոյ՝ ինքնազլուխ նոր կամոզիկոս մ'ընարեց ,  
զօնուսիկ՝ Ազրիանոսի տունէն , և այս կեր-  
պով՝ եկեղեցւոյ հալածիչն և քահանայից  
թշնամին՝ եզաւ հիմնազիրն Հայաստանի ե-  
կեղեցական անկախութեան : Բնականաբար

եկեղեցւոյ զօրաւոր իշխան մի , որպիսի էր  
Ա . Բարսեղ , որ նոյն ժամանակի կեսարիոյ մե-  
տրապոլիտն էր , առանց յուզուելու չընդունեցաւ  
այն հարուածը : Փաւստոս այս բանիս մասին  
հետեւալը կը զբէ<sup>1</sup> . « Բայց լոեց կեսարու  
արքեպիսկոպոսն , թէ սպանեցին մեծ հայ-  
րապետը Ներսէս , և անոր տեղը զրին զթու-  
սիկ՝ առանց իւր հաւանութեան . որովհետեւ  
չի տարին զնա , ինչպէս սովորութիւն էր ,  
առ հայրապետն կեսարու ձեռնազրուելու  
համար . այս բանիս վերայ հայրապետն շատ  
զարմացաւ և բարկացաւ : Առանց հայրապե-  
տին<sup>2</sup> կեսարու նահանգին սիւնհողոսի ե-  
պիսկոպոսներն ժաղով մի գումարեցին , և  
թուղթ մ'ուզարկեցին լի մեծաւ ցասմամբ<sup>3</sup> ,  
նոյնպէս ուրիշ թուղթ մ'այլ առ Պատլ թա-  
գաւորն : Ոչնչացուցին կաթողիկոսութեան իշ-  
խանութիւնը<sup>4</sup> (յատովկ վճռով) , թէ ո՛վ որ

1 . Փաւստ Ե . Խթ :

2 . Այն բացատրութիւնը « առանց հայրապետին »  
էմին կը թարգմանէ « հայրապետին նախագահու-  
թեամբ » (sous la présidence du patriarche) : Յայտ  
է՝ թէ այսուղ խօսքը կեսարու արքեպիսկոպոսին վերայ  
չէ , այլ անկանոն կերպով ընտրուած նայ կաթողիկոսին  
վերայ է : Համարուելով նա իբր բանաբարոդ հայրապե-  
տական գահուն , այն պատճառաւ ևս ո՛չ աթոռ և ոչ  
ձայն ունէր գաւառուկան սիւնհողոսին մէլ :

3 . Այսինքն է՝ առ եկեղեցին Հայոց :

4 . Խշոնութիւն կը նշանակէ՝ եպիսկոպոս ձեռնա-  
զրելու իրաւունքը :

Հայտաստանի կաթողիկոս լինի , միայն ար-  
քունի դրան հացը օրհնելու իշխանութիւն  
ունենայ , այլ ոչ բնաւ Հայոց եպիսկոպոս-  
ները ձեռնազրելու , ինչպէս որ սովորու-  
թիւն էր ի սկզբանեւ : Այն ժամանակէն սկը-  
սեալ վերցուեցաւ Հայոցնէ եպիսկոպոս ձեռ-  
նազրելու իշխանութիւնը : Բայց անսնը՝ որ  
Հայոց զաւաճներուն և կողմերուն եպիսկո-  
պոսը էին , միութիւնի որոնք որ այն ժա-  
մանակէն վերջը եպիսկոպոս կը լինէին Հա-  
յոց սահմաններուն մէջ , կեսարացւոց քա-  
ղաքը կ'երթային և այնտեղ եպիսկոպոս կը  
ձեռնազրուէին : Եւ որովհետեւ վերցուեցաւ  
Հայտաստանէն զերազոյն իշխանութիւնն , այ-  
նունեաւ եպիսկոպոս ձեռնազրելու իրաւունք  
չունէին Հայը . միայն թէ եպիսկոպոսաց մէջ  
տապազոյնն՝ ամենէն վերը կը նոտէր և թա-  
գաւորաց հացը կ'օրհնէր ու : Նոյնպէս հայ  
կաթողիկոսաց յոյն ցուցակն այլ կը յիշէ  
սոյն պատմութիւնը <sup>1</sup> . « Յուսիկ ... Զաւէն ...

4. Combefis. historia Monothelitarum cl. 288.  
'Ισαάκ... δὲ Ζαγένης... δὲ Ἀσπουρακίστης... εὗται  
οἱ τρεῖς τῆς Ἀχάρη χώρας ἐπίσκοποι ἦσαν, δύορι  
μόνον ἔχοντες καθολικόν. ἐπίσκοπον χειροτονεῖν σικ  
ἔτολμον, ἀπειδὴ διὰ τὸν θάνατον τοῦ ἀγίου Νορβίην  
ἐκκαλύψθησαν παρὰ τῶν ἀρχιεπισκόπων Καισαρείας αἱ  
χειροτονίαι τῶν ἐπισκόπων τῆς Μεγάλης Ἀρμενίας.  
εἴτα δὲ διγιος Ἰσαάκ ἵλαβεν ἔξουσίαν χειροτονεῖν εἰς  
Ἀρμενίαν ἐπισκόπους.

Ասպարակէս . . . սոքա երերք Հարք գտւա-  
սին եղիսկոպոսունք էին , լոկ կաթողիկոսի  
անունը ունենալով , չեին համարձակեր ե-  
պիսկոպոս ձեռնազրել . որովհետեւ Ո . Ներ-  
սիսի մահուան պատճառու : Կեսարու արք-  
եպիսկոպոսներէն արզիլուեցան ձեռնազրու-  
թիւնք եղիսկոպոսաց մեծին Հայոց . վերջը  
Ո . Առհակ իշխանութիւն առաւ Հայաստանի  
մէջ եղիսկոպոս ձեռնազրելու ։ :

Այն տեղեկութիւններս ստոյգ չեն . արդէն  
սիսալ է ինչ որ կը պատմէ յոյնն Ո . Առ-  
հակայ նկատմամբ : Ենթազրելով թէ Կեսա-  
րիոյ հետ եղած միութեան կազի խզուեցաւ  
միայն յետ զահընկեցութեան Ո . Առհակայ ,  
ո իշխանութիւն առաւ — ԷլաՅեն εξουσίαν ո  
բառերը պէտք է բնականաբար այն իմաս-  
տով մեկնել կամ հասկանալ՝ ինչ միտք որ  
ուզեր է տալ ինքը , այս է՝ ո արքեպիսկո-  
կոպոսէն Կեսարու , ոչոք տօն ձրչւուսունքու  
Կաւարեւած : այլ այս բանիս հակառակ  
կ'ելնեն իրական զէպիքերն : Զի ստոյգ է թէ  
Ո . Առհակ իւր պաշտաման մէջ լիուլի իշ-  
խանութեամբ զործեց և ամենուն կողմանէ  
համարուած էր օրինաւոր կաթողիկոս . սա-  
կայն նա բնաւ կեսարիայէն ինզրած չէ  
իւր իշխանութեան վաւերացումն : Փաւստոսի

սպասմածն այլ մուժը է . որովհետեւ անրօ-  
բոնելի է , թէ Հայք ինչո՞ւ տակառին այն-  
շափ իշխանութիւն կ'ընծայէ ին Կեսարիոյ մե-  
տրապոլտին , — վերջնականապէս խզուած լի-  
նելոց նորա հետ ո և է միութեան կազ , —  
որով կարող կը լինէր նա իրենց հայրապե-  
տը զրկել իշխանութենէ և ընել իբր լոկ  
արքունեաց եպիսկոպոս մի , և բանալ իրմէ  
ամենէն աւելի կարեոր իրաւոնքը՝ որ է  
ձեռնազրութիւնը :

Այլ ինքնին կը տրուի այս բանիս պա-  
տասխանը , երբ մօտէն քննենք այն նուազ  
իրաւանց տէր եղող կաթողիկոսները , որք  
են Յուսիկ , Զաւէն , Շահակ և Ասպուրա-  
կէս : Ասաւ երեքն կը պատկանին՝ տէրու-  
թեան կուսակից կաթողիկոսական Երկրորդ  
տանը , որ է՝ Ազբիանոսի ցեղին , այս պատ-  
ճառաւ ևս ուզգամիտ մասն շուղեց ճանշնալ  
զանմաք : Ազաւ ուրեմն ինչ որ կը պատմեն  
Փաւոսոս և յոյնն , Հայաստանի մէջ ընդ-  
հանրապէս ընդունուած կարծիքն չէ , այլ  
հայ կզերին հոգեոր իշխանութեան նպաստաւոր  
կողման մեկնութիւնն է : Զի սոյն կուսակցու-  
թիւնս միշտ յարեալ մնաց Գրիգորի տանը ,  
և Կեսարիոյ մէջ ձեռնազրուելուն պաշտպան  
հանդիսացաւ : Այն ամէնքը , որ առանց այս

կարեսոր պայմաններուն յանձն առին կաթու-  
ղիկոսութեան աստիճանը , յաշս բարեպաշ-  
տից իրր եկամուտք կամ իրաւանց յափշտակիչք  
համարուեցան : Բայց աստիշի հետեիր՝ թէ այն-  
պիսի կերպով ընտրուած կաթողիկոս մի ընաւ  
եպիսկոպոսաց ձեռնազրութիւններ չէր ըներ .  
այլ միայն թէ կղերական կուսակցութիւնն  
զանոնք իրր ոշինչ կը համարէր , անկանոն  
կերպով ձեռնազրուած հայրապետ մի ընելով  
զանոնք . այս պատճառաւ սոյն կուսակցու-  
թեան պատկանող եպիսկոպոսք ուղղակի ի կե-  
սարիա կ'երթային ձեռնազրուելու համար :  
Այս կերպով յառաջ եկան անտարակոյս աստ  
և անդ այն բոլոր այլեայլ եկեղեցական հեր-  
ձուածք և հակառակութիւնք , որով մի քանի  
թեմեր կրկին եպիսկոպոսներ ունէին , յորոց  
մին՝ արքունեաց նպաստող կուսակցութեան  
կը պատկանէր , և միւսը՝ յոյն կուսակցու-  
թեան :

Հայկական եկեղեցոյ հերձուածոյն այս  
ժամանակիս վերայ փոքր ինչ լոյս կը սփռեն  
նաև Ա . Բարսղի աւանդած տեղեկութիւններն ,  
որոնք սակայն նորանոր զժուարութիւններ յա-  
ռաջ կը բերեն : Խոր թղթոց մէջ յաճախ կը  
յիշատակէ նա Փաւստոս ոմն եպիսկոպոս ,  
որուն զլացաւ եպիսկոպոսական ձեռնազրու-

թիւն<sup>1</sup>. Առ անտարակոյս մեծ Հայոց եղիսակութանքներէն մին էր, թէ և բացայսյու կերպով չի յիշատակեր զայն<sup>2</sup>: Այլ ինչպէս կը զբէ նա առ Պայիմենիոս, Փատոսոս՝ իւր զարձին միջոց ի Եկեղեցիոյ Մատաղացւոց՝ եկեղեցական նահանգ եղող առաջին Հայոց արևելքան թեմէն կ'անցնի. ասքա որեմն հարկ էր որ իւր եպիսկոպոսական ամֆոռն զանուեր դեռ

4. Հմբաւ. Ա. Բարոզի թուղթ 58, առ Մելիսաս անտիբացի. « Պնտակուն ծէ թօնլօրաւ տին սնլախւան օս, ծտ ծ ձեւլփօք Անթրու Փանտու տօն սոնոնտ թի Ապաք էպիսկոպուն չեւրոտնոյս, մրգէ Փիքուն ծենամոնօց, ու կատաշաւրունոյսաւ տօն ալեսւրատէտու ձեւլփօք Կորէլլու ծուտ ստացաւն ձրուղրծուաւ տին Արմենին . . . նյօնմաւ յար ուլլօնէ լուպիսւն տին աւայլաւ տանտին. 195, առ Թէոդորոս Նիկոլովացի. « Պնտակուն ծէ ծտ Փանտու ցրամբաւ չշան նյա ործ իմէս պարէ տօն Ապաք ձեսւնուաւ անտօն յենէծմաւ էպիսկոպուն. էպէծի ծէ տիսաւուն նյաւէս բարտորիւն տին սնլախւաւ ու տան լուռուն էպիսկոպուն, կատաքրունոյսաւ իմն ործ Անթրու ջիշտու ու պար անտօն լաբան տին չեւրունիաւ շարօւն նմատէրաւ նուրանիւսաւ էպանիւս. 315, առ Պայիմենիոս աստաղացի. « Պանտու էպիշտիժուս ցրամբաւ պարէ ան Արմենիոն ծն էպանիւս ծիա օս, ու տին ալտիւն բաթուս ծն նյ օնք նժառաւ անտօն տին էպիստոլին. ու մն օն սիւն վրալին նաւակաւ իմն անտօնւ տին սույննամուն, ու ծն ձուքրնին էկանու ծուր օն սիւն անտօն, ալլա պար իմն ճկուս. ծ տա պանտաշնաւս Անթրու . . . չեւրունոյս տօն Փանտու ինչ անթենտիք ու ինչ չեւրի, սննենօց նման անշմենաւ փիքուն ու իմն կատաշելաւաւ ձերիթօլոցումնաւ ուր տուանտա. ռէլ.

5. Նա անխամբր Արմենիա կ'ըսէ Ա. Հայոց համար (Բա. 187), և Արմենիա մաքը Բ. Հայոց համար:

աւելի արևելեան կողմը, այն ինքն է՝ Անծ  
Հայոց մէջ։ Շատ լաւ կը յարմարին այս  
բանիս այն խօսքերն, յորս երկու անզամ  
կը յիշատակուի՝ թէ նա դրկուած էր Պա-  
պէն, և այս անունս շատ մութ և անհաս-  
կանալի երեցաւ մեկնիչներուն. մինչ բնա-  
կանապէս դա ուրիշ մէկը չէր՝ բայց ժամա-  
նակակից հայ թագաւորն։ Ա. Բարսղի մեզի  
հազորդած ծանօթութիւններէն կ'իմանանք,  
թէ նա ինքն՝ Անծին Հայոց մէջ եպիսկո-  
պոսներ ձեռնազրելու առթիւ՝ նոցա մասին  
տեղեկութիւններ ստացաւ Առաջին Հայոց ե-  
պիսկոպոսներէն, որ շատ բնական էր, իրա-  
րու մերձաւոր զրացիք լինելով և մի և նոյն  
լեզուն ունենալով<sup>1</sup>։ Դարձեալ, արքեպիսկո-  
պոսին թուղթերէն յայտնի է՝ թէ Ա. Ներ-  
սիսի մահուընէն յետոյ՝ թագաւորն իսկ և իսկ  
չի խզեց կեսարիոյ հետ եղած միութեան

1. Ա. Բարսեղ իւր 187 թղթոյն մէջ կ'ըսէ, որ նի-  
կոպոլոսյ թեմին մէջ արժանաւոր և յարմար անձինք  
դանեն Հայաստանի եպիսկոպոսանիստ աթոռներուն  
համար, «ծιά τὸν εἶναι ἐν τῇ παροικίᾳ αὐτοῦ καὶ  
εὐλαβεῖς καὶ συγετούς καὶ τῆς γλώττης ἐμπειρούς  
καὶ τὰ λοιπὰ ἴδιώματα τοῦ ἰθνους ἐπίσταμένους». Ար-  
քունի տան եպիսկոպոս Փաւստոս (Փաւստ. Ե. 9).  
որ մեր Փաւստոս պատմիչն չէ, յայտնապէս «ազգաւ  
հոսում» կ'ըսուի. և այս բանս կը ցուցընէ թէ այն  
միշտցները կրնային յոյն ազգաւ եպիսկոպոսներ և  
դանուիլ մեծ Հայոց մէջ։

զօդք : Փաւստոսի երթն առ Ա . Բարսեղ՝  
ձեռնապրուելու համար՝ կը նշանակէ , թէ ի  
սկզբան հայ արքունիքն հակամետ էր հազ-  
տակելու կեռարիոյ սիւնհոգոսին որոշմանց . առ-  
կայն հակառակ կոռակցութիւնն ի զերեւ հա-  
նեց ամենայն ինչ , կիւրեղ անունով մէկը  
ընտրած լինելով արզէն նոյն եպիսկոպոսա-  
կան աթոռոյն համար՝ զօր թագաւորն առհմա-  
ներ էր Փաւստոսի : Եպիսկոպոսութեան եր-  
կու թեկնածուաց խնդրոյն մէջ՝ Ա . Բարսեղ  
Փաւստոսի հակառակ վճիռ տուաւ . և այս  
բանիս հետեանքն այն եղաւ՝ որ Հայք զի-  
մեցին առ Անթիմոս , Պահանձարզն Բարտղի  
և մետրապոլիտն Բ Կապադովիլիոյ , որ ամե-  
նայն յօժարութեամբ եպիսկոպոս ձեռնապրեց  
զփաւուաս և պաշտօնանկ ըրաւ զեկուրեղ :  
Ինչպէս ապագային մէջ պատահած զէպքերն  
կը ցուցընեն , այս բանս աւելի ևս զայրացուց  
կեռարիոյ հետ եղած հակառակութիւնը , թէ  
և սաստիկ եկեղեցական կոռակցութիւնն տա-  
կաւին երկար ժամանակ հաստատուն պահեց  
միութեան հին կապք : Թէ որչափ ցաւ և  
միշտ պատճառեց կեռարիայէն անջատումն՝  
այն շրջաններուն մէջ , կը ցուցընէ Ղեղանզիսի  
զրած թուղթն առ Տրդատ թագաւոր . և Եւ  
հաստատեալ կայցէ մկայութիւն ի մէջ եր-

կուց կողմանցս , զի պարզեաբաշխութիւն նորոգեալ քահանայապետութեանդ ձերոյդ հահանդիդ , առ ի մէնջ կայցէ անշարժ՝ յեկեղեցւոյս կեռարու . ուստի և հանդերձեցաւ ձեզ պատրաստութիւն շինութեան ձեռնապատճեան<sup>1</sup> ։ Աակայն եկեղեցական զատոն զպացած այն տհաճութիւնն ոչ մի արդինք շունեցաւ : Ա . Բարսղի զործածած խիստ միջոցներն ընդունէմ հայկական եկեղեցւոյ՝ եկեղեցական քաղաքականութեան աղիտարեր վրիպակ մ'եղան : Թէ ո՞րչափ խոր թափանցեր էր Հայոց արեան և մարմնոյն մէջ՝ եկեղեցւոյ բացարձակ անկախութեան զաղափարն , կը ցուցընէ մեզ նոյն ինքն Փաւատոս , զործածելով անխափիր՝ նախկին կաթողիկոս անուան հետ միասին՝ նոր և նոյն ժամանակ միայն պատշաճեցուցած հայրապետ (πατριάρχης) կոչումը : Դարձեալ , կեռարիսյէն ունեցած կախումը և հոգատակութիւնը ջնջելու միջոց՝ կարելի էր ստուգիւ աւելի հնագոյն օրինակաց կամ զիսպաց վերայ հաստատուիլ :

Ա . Գրիգոր Լուսաւորչի ձեռնապատճեանի Պետղիսէ՝ կ'աւանդէ մեզ Ագսթանզեղոս , իսկ արդ ձեռնհաս հեղինակութեամբ հերքուած է

1 . Ադաթ . ձմք . — ամս . v. Gutschmid , Kl. Schr. III , S. 392.

այդ աւանդութիւնը<sup>1</sup> : Բայց եթէ տակաւին  
երկրայելի ևս մեայ այս իրը, այսափ ինչ  
ստոյգ է՝ թէ Ա. Գրիգորի որդին Արքասա-  
կէս իւր ձեռնազրութիւնը շընդունեցաւ ի  
կեսարիա, այլ նոյն իսկ Գրիգոր ձեռնազրեց  
զնա կաթողիկոս՝ ի խնդրոյ Տրդատ թագա-  
ւորին, երբ ինքն կ'ուզէր առանձնանալ (Ա-  
զաթ. ՀԻՒ.): « Զոր ձեռնազրեաց յեպիս-  
կողոսութիւն փոխանակ իւր, որովէս բառ  
զրեցելոյն ի զէս, թէ՝ փոխանակ հարց ե-  
զիցին որդիք կալ իշխան ի մերայ երկրի<sup>2</sup>  
(Ազ. ԽԻՒ., 47) : Ինչպէս յայտնի է՝ այս  
տեղ լոկ աթոռակցի կամ տեղապահի մերայ  
չէ խօսքն, այլ ստոյգ յաջորդի մի ընտրու-  
թեան մերայ է, և կամ ա աթոռակցի՝ հան-  
զերձ իրաւամբ յաջորդելոյ » (coadjutor  
cum jure succeedendi). Ոչ Արքասակիսի  
և ոչ Արքանիսի համար չի պատմուիր բնաւ  
թէ ի կեսարիա զնացած լինին ձեռնազրուե-  
լու համար . մինչդեռ Ա. Յուսիկէն մինչեւ  
ի Ներսէս՝ բոլոր կաթողիկոսը կեսարիա զր-  
նացին ընդունելու իրենց ձեռնազրութիւնը<sup>3</sup> :

1. v. Gutschmid, Kl. Schr. III, S. 418. առև  
Ա. Տ---Ե---ՀԸ, էլ 535.

2. Ա. Յուսիկսի միջոց տեղի ունեցաւ առջորութեան  
գործազրութիւնն, ինչպէս կըսէ Փաւառա (Գ., ԺԲ.) .

Պատլ թագաւորն և Աղբիանոսի տահմեն  
ընտրուած կաթողիկոսը, — զորս Փաւոսոս և  
եռանդուն նորիսապետը այնովէ ոստափիկ կեր-  
պով արհամարհեցին, — տէրութեան կուսակից  
մարդիկ էին և հետեարար եղան, որոնք ան-  
ջառեցին զՀայոստանի Ելեսարիոյ, և արու  
ձեռք բերին հայկական եկեղեցւոյ վերջնա-  
կան անկախութիւնը : Շատ հետաքրքրական  
են նոյն միջոցներու զբոյզը, որոնք՝ ժամա-  
նակին հանգամանքները ի նկատի առնըլով՝  
կը սկսին արդէն կողմանկցական ուրով լոել  
բոլորովին Ելեսարիոյ հետ եղած սերտ յա-  
րընչութեան վերայ : Յավակի կաթողիկոսն՝  
Հայոց եպիսկոպոսաց և մեծամեծաց հետ  
միարան՝ զրելով յամին 450 առ թէոզոս  
կայսորն, յետ յիշատակելու Տրդատայ հայ աշ-  
խարհին արհապետելու, կը յաւելու . և Այն-  
պէս և զհաւատոն որ ի Քրիստոս՝ բնկա-  
լեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հոռվմայ,  
լուսաւորեաց զիստարային կողմանու հիւսի-  
սոյ<sup>1</sup> ո : Տրդատ և իւր ժողովուրդն ուղղակի  
Հոռվմայ եպիսկոպոսապետէն ընդունած լի-

« Ըստ առվորութեան որինակին » . առաջ ուրեմն եղեք  
է նախորդ զէպք մի :

1. Եղիշէ, Պատմ. վասն Ամրդ . և Հայ . պատերազ-  
մին (Հրատ . Ահենեակ . 1895 . էջ +32) :

ներավ նոր հաւատքը, ինչպէս ըստած է յիշեալ վիայութեան մէջ, մի և նոյն ոգին կամ ձկոտմն կը ցուցուի նաև այս տեղ<sup>1</sup>, ինչ որ կը զիաւ նաև Գրիգորի տեսիլն յԱզաթանգեղոս :

Աւելայն վաղարշապատի զբայցն, որ տառին անդամ՝ սպատմուած է յիշեալ տեսլեան մէջ, ովէտք էր յաղթանակել՝ ինչպէս զիսրաւ կը նար զուշակուիլ. որովհետեւ նա մէկ կողմանէ կը փայփայէր ազգային անկախութեան զզացումը, և միւս կողմանէ իբր զօրաւոր թումբ մի կը կանգնէր ընդզէմ ամենայն սուկական փառասիրութեան և ընդզէմ պահանջմանց որ և է մետրապոլիտի, ուղղակի նոյն իսկ Քրիստոսի ընծայելով հայկական եկեղեցւոյ հաստատութիւնը. այլ սուզիւ ոչ հոռվմէական և ոչ ազգային զբոյցք կարող չեղան բոլորովին ջնջել ճշմարիտ աւանդութիւնը :

Թագաւորին եկեղեցական քաղաքականութիւնն թէ և յաղթանակեց, սակայն ի վերջոյ թագաւորութիւնն զիսրովին ընկնեցաւ, և Ա. Եկրսիսի յիշատակն նոր փայլով մի արծարծեցաւ վերասին : Մանուէլ Մամիկոնեան, որուն հօթնամեայ իշխանապետութիւնն (378-385) հայկական սպատմութեան մէջ վերջին

լուսաւոր կէտք կը կազմէ, իսբ եկեղեցական  
քաղաքականութեան մէջ ըստ ամենայնի մեծ  
հայրազետին սկզբանց հետեւցաւ, և նորա  
կրօնական պատութիւնները ընտրեց իրր առաջ-  
նորդ հայ ժողովրդեան<sup>1</sup>: Յետ իրեն մա-  
հուան, երբ Հայաստան բաժնուեցաւ Հռով-  
մայ և Պարսկաստանի մէջ, շատ վատնզա-  
ւոր հանգամանաց մէջ ինկաւ հայկական ե-  
կեղեցին: Եթէ նոյն իսկ մէկ կողմանէ Հա-  
յաստան եկեղեցական քաղաքականութեամբ  
այլ ևս անջառուեր էր հոգմէտական կայսե-  
րութենէն՝ շնորհիւ իրեն կաթողիկոսութեան  
անկախ ինքնավարութեամբը, այլ միւս կող-  
մանէ՝ պարսիկ պետութեան քաղաքականու-  
թիւնն՝ որ իրեն յատակ նայաստակ մ'ունէր  
և կը զիմէր առ այն, կը սպառնայր խզել  
յոյն մայր եկեղեցւոյ հետ ունեցած կրթու-  
թեան և զարգացման փոփոխակի առնչութիւ-  
նը: Ուրացող Արքուման արձրունին զրու-  
թեամբ և կանոնաւորապէս այրել տուեր էր  
Հայաստանի մէջ զանուած բոլոր յունարէն  
զրքերը, ինչպէս կը պատմէ կորիւն<sup>2</sup>. և նոյն  
ժամանակաց պարսիկ կառավարիչը արդիւ-  
ցին յոյն զրականութեան ուսումը, մինչ ընդ-

\* 1. Փաւառ. Եշ. Խ՛ի:

2. Սովերը հայկ. Հառ. Թ՛. Էջ 42.

Հակառակին թոյլ տուին միայն ասորի լեզուին ուսումնը : Եւ այսպէս հակառազիրն կը սպառնայր հայկական եկեղեցին զօսացնել և մեսցը նել նոյնագիսի կղզիացմամբ , ինչպէս պատահեցաւ Պարսկաստանի ասորական (մերջը նեստորական) եկեղեցւոյն : Այս բանին առաջն առին Ա . Սահմակ , Ներսէս պարթեի մեծանուն որդին , և իր բարեկամն Մերոր :

Սացա հետ հայկական եկեղեցւոյ պատմութեան նոր զլուխ մի կը սկսի . Ա . Սահմակ մարմնացեալ զազափարականն է մի այնպիսի կաթողիկոսի , որպիսի կ'երազէր յետազայ հայ եկեղեցին : Ցետ երկար միջոցի նաևեցաղ դարձեալ Ա . Թիազէսի աթոռոյն վերայ լուսաւորչի առնմէն կաթողիկոս մի , ուստի և կատարելապէս օրինաւոր և ընդունելի ամենայն կռւսակցութեանց ևս : Ժողվելով նա իր շուրջը վաճառուն աշակերտներ , ոգոնք խըստակրօն վարուք և ճգնաւթեամբը կ'ապրէին , նուիրասպետական և վանական կռւսակցութեան միակ և ամենասուիրելի անձն եղաւ . այլ զիսցաւ նա միանգամայն շահիլ ազգային կողման ուրբ և համակրութիւնը : Գրիզորի առնմէն ինըն եղաւ առաջին կաթողիկոսն , որ առանց վարանելու նաևցաւ և ընդունեցաւ զեռ այն ինչ նոր ձեռք բերուած եկե-

զեցական անկախ ինքնայտութիւնը<sup>1</sup>։ առաջի և հակամմատ չէր բնաւ կեսարիոյ եկեղեցոյն հետ նոր յարաբերութիւն մի հաստատելու ձկոտումին, որ տակաւին կենդանի էր առաւ անոց եկեղեցական յրջաններուն մէջ։ Այս իրեն սոսոյզ և մեծ արդիւնքն՝ ազգին բարոյն համար՝ եղաւ ազգային հայ զրականութեան հաստատութիւնն։ Ա. Մեսրոպյաց ձեռքով եղած զրոց զիւտն այնպիսի ուժ և մզում մի տուաւ ազգին, — որ մինչեւ այն ժամանակ զուրկ էր զրականութենէ, — որ իրեն համար թարգմանիչներու վարժարան մի հաստատեց, որոնք Ա. Մահակայ և Մեսրոպյաց առաջնորդութեամբ զարմանալի զործոնէութիւն մի ցուցուցին, և ազգային բնիկ զրականութիւն մի յառաջ բերին, որ ըստ առենայնի համաձայն էր եկեղեցական զառաւ ձկոտումներուն, և որ հետեւարար ի ոկլզ-

1. Այս ջին ժամանակաց հայ պատմիչներէն ումանք կ'առանդեն, իբր թէ՛ Արշակ թագաւորին նախագահութեամբ գումարուած նախարարաց ժողովի մի մէջ Ա. Ներսէս անկախ պատրիարք հրատարակուեր է։ (Յովհ. Լամբ. Հրատ. յԱրտասադէմ, 1845. էջ 52. Ստեփանոս Որբելեան, Պատմ. Սիւնեաց)։ Այս երկու պատմիչներս այլ հայկական եկեղեցւոյ առաքելական ժադանաւ վերայ հիմնուած են, որուն ի հաստատութիւն ցոյց կու տան առաքելոց գերեզմանները։ Յայտ է թէ՛ ի և Զ դարուց մէջ Յունաց ունեցած զազափարն է այս, որ առելի վերջը մուտ գտեր է նաև Հայաստանի մէջ։

բանէ յունական տիպ կամ կնիք մի ստացաւ : Ոչ մեկ բան այնշատի հակառակ և արգելք չէր պարսիկներու եկեղեցական - բազարական ծրագրի գործադրութեան , — որով կ'ուզէին նորա Հայոց առջեւ փակել յունական եկեղեցւոյ և կրթութեան ճանապարհը , — ինչպէս այս երկու անգուգական անձանց (Ա . Պահակայ և Մեսրոբայ) գիտական գործոնէութիւնն . որովհետեւ սորա եղան՝ որ գարձեալ միացուցին Հայերը Յունաց հետ՝ հազեար հաստատուն կապով մի : Այս պատճառու ևս պարսիկ կառավարութիւնն սկսաւ նեղել և շարաշար վարուիլ նոցա հետ , որով իրենք այլ սահմանեցան թուզով իրենց ընիկ երկիրը և երթալ յունական հազին վերայ յաջողութեամբ շարունակելու . իրենց թարգմանութիւնները : Ընդհակառակին յոյն կառավարութիւնն հասկանալով իսկոյն՝ թէ հայկական ազգային ձեռնարկին յաջողութիւնն կրնար իրեն նորաստաւոր և շահաւոր լինել . հրամայեց Անաստոլիոս զօրավարին՝ որ հայյունական բաժնին կառավարիչն էր՝ հոգալու հայ վարժարանաց պէտքերը տէրութեան ծախուք . և այս կերպով այն մեծ ձեռնարկին անքնիպհատ շարունակեց իւր ընթացքը : Կըրնանիք զուշակել պարսիկներուն զայրոյթը . Ո .

Առհակայ սակաւ մի յետոյ զահընկեցութեան  
պիտոր պատճառն եղաւ իւր առ յոյնս ցու-  
ցած շափազանց համակրութիւնն։ Երկու ե-  
կամունտ ասորիերու կաթողիկոսական զահուն  
վերայ բազմին՝ պարսիկ կառավարութեան  
ձեռքով, արդէն յայտնապես կը ցուցընէ  
թէ որդափ կ'աշխատէին պարսիկը՝ թէ և  
անօգուտ կերպով՝ խոնզարել և ոչնչացնել  
Առհակայ և իւր բարեկամաց ձեռնարկը։ Եւ  
յիրաւի՝ Ա. Առհակայ զերազանց անձնաւո-  
րութեան միջոցաւ՝ եկեղեցական բարձրագոյն  
աստիճաննն այնպիսի կարեռութիւն և հեղի-  
նակութիւն մի ստացաւ հայ ժողովրդեան  
մէջ, որպիսի բնաւ ունեցած շէր յառաջն։

Յետ բաժանման Հայաստանի և կործան-  
ման թագաւորութեան, կաթողիկոսն էր միակ  
իրական կազն ազգին միութեան։ Ինչպէս  
որ երբայեցոց մէջ՝ զերութենին վերջը՝ քա-  
հանչացապետն էր ազգին զլուխը, այսպէս այլ  
Հայոց մէջ կաթողիկոսն էր՝ յետ բաժանման

1. Մովս. Խոր. Գ., ԿՊ, և անանուննեան Coimbevis.  
hist. Monoth cl. 289. — Ազգային ամենահին ու-  
ղեկութիւնն, որ է Ա. Փարոպեցոյն, այս ժաման բնաւ  
յիշատակութիւն չի ընելը. ևս Ա. Առհակայ զահընկե-  
ցութեան միակ պատճառ կը զնէ՝ իրեն չի մասնակցին  
նախարարաց խորհրդին ըստէմ Աքառչիր թագաւորին։

2. v. Gutschmid. Kl. Schr. III, S. 383.

թագաւորութեան . և ինչպէս հրէից մէջ նա  
էր իշխան , և միանգամայն պատասխանառու  
և ներկայացուցիչ ազգին , ոյսպէս նաև Հայոց  
մէջ՝ կաթողիկոսն իբր թագաւորի փախանորդ  
կը համարուէր : Աշանտուր հանգամանք մի  
կայ , որ բայ արտարին երեւթին այնշափ  
նշանակոթիւն չունի , բայց Հայոց և ուրիշ  
ազնուազետական հասարակազետութեանց մէջ  
շատ կարևորութիւն կը արաւէր , որ է՝ կարգն  
տատիճանի և տեղուց նախարարութեանց կամ  
ազնուազան տուներուն : Պատմական ամե-  
նահին առանգութիւնն՝ թագաւորաց կ'ըն-  
ծայէ զայն , զոր Արշակ թագաւորն (337—367)  
վերջին անգամ հաստատեց հանգիստոր կեր-  
պով<sup>1</sup> : Բնդհակառակին , Ա . Ներսիսի վարուց  
պատմազիրն՝ կաթողիկոսին կ'ընծայէ Հայոց  
իշխաններուն պատուայ և առանձանի զառա-  
կարգութիւնը , զոր իւր զրբին մէջ զետեղեր  
է : Արշակէն վերջը՝ Ա . Ներսէս նորոգեց իշ-  
խանաց քահայրը , զոր հաստատեր էին հին թագաւորներն , և որոշեց նոցա իւրաքանչիւր  
կարգը թագաւորական սեղանին վերայ<sup>2</sup> : Ու-  
րիշ նմանօրինակ իշխանաց ցուցակ մի եւս  
կը գտնուի Ա . Ներսիսի վարուց պատմու-

1 . Փառական . Դ . Բ .

2 . Սովերը Հայկ . Զ . էջ 32 .

թեան ժամովթութեանց և մէջ, որուն հեղինակն Ա . Առհակ կը համարուի, իբր թէ պարսից թագաւորին հրամանաւ հաստատած լինի : Խնչպէս յայտնի է, յետազայ Հայոց քաղաքարին մէջ կաթողիկոսն՝ իբր եկեղեցական զլուխ՝ թագաւորին տեղազահն էր : Ո՞վ կարող է ուրանալ այն ամենամեծ տարրերովինը՝ որ կայր ընդ մէջ համեմատարար համեստ և շափաւոր զրութեան Ա . Պրիգօրի և Նախկին կաթողիկոսաց՝ և ընդ մէջ նոխ և շքեղ կացութեան անկախ հայրապետաց, որպիսի էր յիրաւի Ա . Առհակ : Առկայն յետազայ ժամանակաց պատմութիւնն զիտցաւ նարարութեամբ քօղարկել այս տարբերութիւնները, և Նախկին ժամանակաց զեպքերը՝ Ա . Առհակաց միջոցներուն նորանոր տեսութեանց համեմատ՝ տարբեր լուսոյ մի մէջ զրաւ, և մեծաւ մասամբ կերպարանափոխ ըրաւ զանոնի : Հետեարար մեծ բարերախտութիւն մի համարելու է այնպիսի պատմական զրութեան մի զայռութիւնը, որ թէ հին և թէ միանգամայն նոյն ժամանակի յատուկ

1 . Ա . Կերպախի վարուց պատմութեան հրամարակիցն (Հ . Պ . Ա . Առիշան) կու առ մեզ զայն իւր թանկարին ժամանակութեանց մէջ . (էջ 132-3) . անս նու Լանդուայի զիտողութիւնները (Collection II, p. 26).

ձկուումներէն ազատ եղած լինի : Այդ պատ-  
մական պրովինցիա Փառաստութիւնն է , որոն  
ուստած աեղեկութեանց շնորհիւ միայն կարող  
ենք վերցնել աւանդութեան և կեղծ պատ-  
մութեան քօղը , որ կը ծածկէ հայկական  
եկեղեցւոյ պատմութեան սկզբնաւորութիւնը ,  
և զանել զոնեա մասամբ իւիք սասոյդ իրո-  
ղութիւնները :

## Յ Ա Խ Ե Լ Ո Խ Ա Մ Ք

## Ա.

Պէտք է խոստովանիմ , թէ Ա . Գրիգորի  
ի կեսարիա ըրտած ուղեսրութեան պատմու-  
թեան վաւերականութեան հակառակ՝ Գուտ-  
շմիզի բերած փաստերն բոլորովին համազիշ  
շեն թուիր ինձ : Ամենէն աւելի ծանրակշիռ  
փաստն է ժամանակազրականն : Կեսարիոյ  
հայրապետն Պետրիս առաջին անգամ կը  
յիշառակարի յամին 344 և վերջին անգամ  
325ին : Ետ չէր կարող 304 տարիէն յա-  
ռաջ , ինչպէս ընդունուած է միայաբանու-  
թեան մէջ , իւր պաշտաման մէջ լինել : Տա-  
րակուսական է այն ենթազրութիւնն՝ որով  
երկար տարիներու հայրապետութիւն մի կ'ըն-

ծայռուի թէ Ղետնղիսսի և թէ Գրիգորի, թէ սլու բոլորային ևս հերքել զայն կարելի չէ : Դարձեալ, Հայաստանի դարձն և տռացին եպիսկոպոսական ձեռնազրութիւնն մի և նոյն ժամանակի մէջ տեղի չեն ունեցած . վասն զի յետ դարձին Հայաստանի, որ պատահեցաւ զրեթէ 280ին միջոցները, քրմաց բուռն և սաստիկ զիմազրութեամբ՝ կը սկսի յարձակումն ընդդմ կռոց և մեհենից Արտաշատու, Թորդանի, Անւոյ, Երեղ, Թիւ և Բազայտին աւաններուն, որ տեղ երկար ժամանակ : Ատոյդ է թէ շատ տարիներ անցան՝ մինչեւ որ այդ զեպքերը կատարուեցան, մինչ պատմիչն կը կցէ զանոնք իրարուետեւ : Բատ պատմութեան նոյն իսկ Ազաթանգեղեայ, առաջին յարձակմամբ կարելի չեղաւ ափեր և կործանել, օրինակ իմն, Արտաշատու և Երեղ աւանին ամուր մեհեանները, որոնք յամառ զիմազրութեամբ կռուեցան : Արդ այս զեպքերէս վերջը միայն տեղի ունեցաւ Ա . Գրիգորի ուղեօրութիւնն . ապա ուրեմն ամենէն ուշ պէտք է զնել զայն յամս 285—290 . հետեաբար Ղետնղիսս զրեթէ 30—40 տարի հայրապետ եղած կը լինի, որ շատ երկայն միջոց է : Բայց բոլորային ևս անկարելի չէ այն, եթէ յիշենք — հին եկեղեւ-

ցիէն միայն օրինակներ մէջ բերելով - Նար-  
կիսոսի՝ Երրուսաղեմոյ հայրապետին կամ Ա.  
Աթանասի և աստուածահանոյ և բազմաժա-  
մանակեայ քաղաքավարութիւնները կամ  
կեռանքերը<sup>1</sup> ։ Դարձեալ, ոչ չէ զրած Գուտ-  
շմիդ՝ թէ Լուսաւորչի ուղեորութեան պատ-  
մութիւնն, թէ և մանրամասնութեանց մէջ  
ընդհանրապէս մութ կամ նոյն խոկ զրուցա-  
խառն զրութիւն մ'է, սակայն զիխաւոր մա-  
սնոց մէջ վաւերական յիշատակարանոց վե-  
րայ հիմնուած է, ինչպէս է՝ Ա. Գրիգորի  
ուղեկից իշխաններուն և եպիսկոպոսաց ա-  
նուանց ցուցակն (Աղաթ. ձի՛). նոյնչափ  
արժէք ունի նաև Տրդատ թագաւորին ըն-  
կերակցող իշխանաց ցանկն (անդ. ձի՛)։  
Գուտշմիդ (Kl. Schr. III S. 391) հե-  
տեւեալ զիխոզութիւնը կ'ընէ այս մասին։  
և կրկին անզամ յիշատակելն ակրութեան  
մեծամեծները բատ իրենց կարգին, զոր ու-  
նելին Տրդատ թագաւորին արդանեաց մէջ,  
թուի թէ արիշ նպաստակ շունէր՝ բայց միայն  
շարժել ազնուականաց հետաքրքրութիւնը,  
որոնք պիտի կարգային զիխաւորապէս նոյն  
զիրքը, և միանգամայն կը ծառայէր - ոչ զբ-

1. Θεορεστοι καὶ πολυχρόνιοι πολιτεῖαι.

նելու է այս բանիս — տռաջին անգամ ուղղակի և երկրորդ անգամ անուղղակի կերպով՝ Ա. Գրիգորի փառքը մեծցրելու ու Արկայն անհիմն կարծիքը մ' է այս. վասն զի ոչ միայն զրադաշն զիւտ չէ այս՝ մի որ և է արքունի զրան երիցու, որուն նորատակն եղած լինի ազնուականութիւնը շաղումել, այլ ընդհակառակն թագաւորական զիւաններէն հանուած վաւերական տեղեկութիւնը են։ Այսու է նոյնպէս Լորգարդի կարծիքն (անգ. էջ 162), իբր թէ երկու ցուցակներն զանգան ժամանակաց զրութիւնը են։ Այն նահանգներն, որոց վերայ կը հակէին սահմանակալը, և հաւանականորար ո կորսուած կամ ձեռքէ ելած չէին զէոլ ի կեսարիա եղած ուղեորութեան միջոց։ այլ անշուշտ յարմար ժամանակի չէր նոցա՝ ընելու այն քաղաքական ուղեորութիւնը զէոլ ի Գամբաց աշխարհն, զի ճիշդ պատահեցաւ այնպիսի ժամանակի մէջ, յորում Հռովմայ և Պարսկաստանի մէջ եղած յարարերութիւնը լաւ վիճակի մէջ չէին. հետեւարար Ասորեստանեայց և Արքազետաց կողմերուն սահմանակալը կարող չէին թողուլ իրենց տեղերը։

Դարձեալ, թագաւորին զէոլ ի Հռովմ ըստ ուղեորութիւնը պէտք է աւելի կարեոր

շարժառիթ մ'ունեցած լինի, քան թէ լոկ  
ուրիշ աւելի հնագոյն Տրդատայ ուրումն ծա-  
նօթ այցելութեան « աղօտ յիշատակու-  
թիւնն » Ներսն կայսեր ժամանակը ; յամին  
66 յետ Քրիստոսի : Անստարակոյս վաւերա-  
կան է յիշատակարանն . և որովհետեւ հայ  
թագաւորին բնկերողաց մէջ՝ իւր ուղեարու-  
թեան ժամանակ յաշխարհն հոռվմէական  
նոյն հատուածին մէջ բաց ի Տրդատայ կը  
յիշատակութին նաև արքեպիսկոպոսն Գրիգոր  
( Լուսաւորիշ ), իւր որդին Արիստակէս և Աղ-  
րիանոս եպիսկոպոսն , հետեաբար սոյն զէպքս  
կամ պատմութիւնս միայն Տրդատայ ժամա-  
նակին կրնայ յարմարիլ ( 264—317 ) : Մաք-  
սիմինոս պատերազմեցաւ և յաղթուեցաւ  
Հայերէն , զօրս Եւսեբիոս « արս ի սկզբանէ  
բարեկամն և մարտակիցս կամ նիզակակիցս  
հոռվմայեցոց <sup>1</sup> » կ'անուանէ : Մաքսիմինոսի  
մահուամբ ( 313 ) և յետ կիրազեայ մօտ ե-  
ղած պատերազմին ( 314 ) , կոստանդիանոս ի-  
րօք տէր եղաւ աշխարհին , թէ և թօղոց  
զԱմկիանոս իրը իրեն երկրորդ կամ կայսե-  
րակից յարեելու . այն միջոց կոստանդիանոս  
սակաւ մի ժամանակ մնաց ի Լիւրիկէ , ի

1. Ἀνδρας ἐξ ἀρχαίου φύλους τε καὶ συμπάχους  
•Պօբաւան (Eusebius, Hist. Eccl. IX, 8, 2).

Որութիւն և ի Առրղիկել՝ տէրութեան զարծերը  
հարգաղրելու համար (Clinton. Fasti ro-  
mani I, 368).

Կոստանդիանոսի և Հայոց մէջ եղած զաշ-  
նակցութեան մասին ամենէն առելի հնագոյն  
և արժանահաւատ տեղեկութիւնն է փառ-  
տաբին։ Մէկ կողմանէ՝ Հռովմայ և Հա-  
յուսանի, և միւս կողմանէ՝ Պարսից Շասլուն  
Բ թագաւորին մէջ ձագած պատերազմին  
առնիւ (յամին 337) կը զրէ (Պ., 111).  
«Եւ օգնական և թիկունք լինէր (կայսրն)  
աշխարհին Հայոց մանաւանդ զի զոխան յի-  
շեալ զզաշանցն կոելոց զերզմանցն հաստա-  
տաթեան, մինարդութեամբ ի մէջ կայսերն  
կոստանդիանոսի և ի մէջ թագաւորին Տրր-  
գատայ եղեալ էր»։ Այսպիսի պարզ տե-  
ղեկութիւն մի, որ կատարեալ կերպով կը  
համաձայնի ուրիշ ամենայն պատմական հան-  
գամանաց, միայն քմահանոյ կամքն կարող է  
կամկածառը համարել՝ իրր ոչ պատմական։  
Ամենաբնական բան էր որ Հայերն, մինչ-  
զեռ անստոյդ զրութեան մէջ էին պարսիկ  
տէրութեան նկատմամբ, և զեռ թարմ էին  
իրենց մասց մէջ Մարտիսինոսի յարձակմանց  
յիշատակներն, մօտենային սերտիւ քաջ և  
ճարտար իշխանին և պաշտպանին քրիստոնե-

ից, որ այնպէս տկներեւ Աստուծմէ օգնութիւն  
զտեր Էր։ Զի նայելով Գուտշմիդի կարծեաց,  
Հայաստանի համար այդ Էր միակ ճշմարիտ  
և բանաւոր քաղաքականութիւնն։ Բայց թէ  
արդեօք խաղաղութեան պաշտօնական դաշ-  
նագիր մի կացը՝ երկու զաշնակից ազգերէն  
ևս հաստատուած, թէ լոկ մտերմական հա-  
մաձայնութիւն մ' Էր երկու դաշնագիր պե-  
տութեանց մէջ։ այնչափ զժուարին է որո-  
շել այդ բանը, որչափ որ սակաւ ժամանակ  
յառաջ Գաղղիոյ և Ռուսիոյ մէջ հաստա-  
տուած զաշնակցութեան խնդիրը։ Բայց թէ հայ  
թագաւորն, իրը նիզակակից հոռվմէական  
ժողովրդեան, քան զամեն արքունի նշանա-  
ւոր իշխանու աւելի բարձրագոյն տեղ և առ-  
տիճանն զբաւեց և կայսերական արենակից  
իշխանաց յատուկ բոլոր առանձնաշնորհու-  
թիւնները վայելեց, կը վեայէ մեզ հետեւալ  
հրավարակն (Cod. Theodos. XI Tit. I,  
de annona et tributis) 4. « Խնքնակալ  
կոստանդիանոս Ա. առ Պրոկլիանոս։ Բաց ի  
մերց սոսկականաց իրաց և յեկեղեցեաց կա-  
թողիկեայց և ի տանէ հոչակելոյն բարեյի-  
շատակ Եւսեբեայ՝ նախկին բղեշխի և հրա-  
մանատարի հեծելոց և հետեւակաց և Արշա-  
կայ արքային Հայոց, ոչ ոք ըստ հրամանի

մերում ի մեծամեծոն վայելեցէ ի հասոյթս  
ընտանեկան գոյից<sup>1</sup> » : Հրավարտակն զրուած  
է առ Դ. բզեշխութեամբքն Ա. կոստանդիա-  
նոսի և Լիկիանոսի (345 թուականին) . իսկ  
զրութեան տեղը նշանակուած է կոստանդնու-  
պոլիս , որ շատ կատածելի է յիրաւի , և  
կը պակսի հրավարտակին միւս օրինակին մէջ  
(Cod. Just. X, 16, 4) . Պարձեալ անհիմն  
է այն զժուարութիւնն , զոր կը գանէ Վա-  
լուա՝ Արշակ անուան մէջ : Խնչովէս որ միւս  
անուններն այլ՝ զորս Գաղփրուա և Վալուա  
կատածելի կը համարէին , որ են՝ Եւսեբիոս  
և Պատրիանոս , ստոյգ և պատմականք են՝  
բայց ցուցման Հէնելի (Hänel, Sp. 1042  
N. i) : Արդ , ինչովէս ամէն մարդ կը տես-  
նէ , յիշեալ Արշակն ուրիշ ոք չէ՝ բայց Տըր-  
դատ թագաւորն . այսու կ'ապացուցուի՝ թէ  
հայ արշակունի պահլաւք , իբր մէկ ճիւղն  
շորս պահլաւունի արքունի տանց , թէ ուլո-  
րութեանց և արքունի պերճութեան և ազ-

1. Imp. Constantinus A. ad Proclianum: Præter  
privatas res nostras et ecclesias catholicas et do-  
mum clarissimæ memorizæ Eusebii ex consule et  
ex magistro equitum et peditum et Arsacis re-  
gis Armeniorum, nemo ex nostra jussione præ-  
cipuis emolumentis familiaris iuvetur substanc-  
tiae.

նուականութեան աստիճաններուն մէջ , և  
թէ միանգամայն անուանակոչութեան մէջ ,  
ճշդիւ կը հետեւին իրենց նախահարց՝ հին  
պահառաւնի արքայից արքաներու օրինակին :  
ինչպէս որ զրամներուն վերայ Միհրզատ Ա  
( 171—138 )՝ կը կոչուի Արշակ Եղիփիան ,  
Միհրզատ Բ ( 123—88 )՝ Արշակ Թէկոս Ե-  
ւերզետէս Եղիփիան Փիլելլէն , և կամ Ո-  
րոզէս ( 57—37 )՝ Արշակ Փիլոսպատոր Դիկէսս  
Եղիփիան Փիլելլէն . այսպէս նաև շորտ հա-  
րիւր տարի վերջը իրենց յաջորդն Տրդատ ,  
ժառանգն հայկական երկրորդ ճիւղի աթո-  
ռոյն , հառվմէական պետութեան հետ ունե-  
ցած պաշտօնական յարաբերութեանց մէջ կա-  
րող էր կոչուիլ Արշակ ( հաւանականաբար՝ Ար-  
շակ Եւսեբիս Փիլորոմէսս , և կամ նման ինչ ) :

Տրդատայ ուղեորութեան մասին զէսի ի  
Հառվմայեցւոց աշխարհնը՝ հետեւալ կերպով  
կը զրէ հայերէն ։ Ազաթանգեղասն ( ձի՞ն . ) .  
« Բնդ ցամաք և ընդ ծով փռթացեալ ա-  
նազարէին , մինչ երթային հասանէին յաշ-  
խարհն Խոսայիսցւոց և յերկիրն Գաղմատաց-  
ւոց ի թագաւորական քաղաքն Հառվմայեց-  
ւոց » : Հայաստանի զարձին պատմութեան

բարեմիտ հեղինակին ունեցած գաղափարներն  
արևմտեան աշխարհազրութեան մասին, յի-  
րաւի վորք ինչ մութ և անորոշ են. սակայն  
բացարձակ հարկ չի կայ ո թագաւորական  
քաղաքն Հռովմայեցւոց ո բացատրութեամբ  
հասկանալ միայն Հռովմ քաղաքը և կամ  
Նոր-Հռովմը (որ տակաւին շինուած չէր այն  
դաշինքը դնելու միջոց)։ Յայտնի է թէ ո ի-  
տարիացւոց աշխարհին ո մեկնութիւն մ'է  
անմիջապէս մօտք կցած բացատրութիւնն  
ո յերկիրն Դադմատացւոց ո, զոր խերա-  
մըտուրեամբ (per synecdochen) կարելի է  
հասկանալ իր կոստակալութիւն Ախրիկէի  
ո præfectura per Illyricum ո (հմմա.  
Լանդուա, Հաւաք. Բ, 488)։ Հետեարար  
ո թագաւորական քաղաք ո կոչուածն պէտք  
է լինի պատահական և առժամանակեայ բր-  
նակութիւնն ի Սարդիկէ (Sardique Sophia).  
ապա ուրեմն սոյն քաղաքիս մէջ տեղի ու-  
նեցաւ մեծին կոստանդիանոսի և Ս. Տրր-  
դատայ տեսութիւնն ։ Յունարէն Ազաթան-  
գի դոսն հետեւալ կերպով կը պատմէ. ո Եւ  
զայոցիկ պատմեցաւ իսկոյն յարքունական  
պալատաննն ։ Զոր լուեալ կարի յոյժ աստուա-  
ծապաշտ արքայն և պատականազոյնն թա-  
գաւորաց կոստանդիանոս և արքեպիսկո-

սպոն , որ հանապազ մատներն (և կոյր) յա-  
պարանս նորա<sup>1</sup> , որում անուն էր Եւսե-  
րիս , մեծաւ պատռութ և սիրով ելին նոցա-  
քնդ տառջ , և անողն ի տիեզերական քաղա-  
քին պատրաստեցին իշխանական , զի հանգիցեն  
յերկարութենէ հանապարհին : Ապա զարմա-  
ցեալ աստուածառը կոյրին (երկու վերջին  
բառերը շատ խեղճ կերպով կը թարգմանէ  
յայնն , ծ թօօφիլէստաւ Կալսար ) կոստան-  
զիանոս՝ քաջալերեաց զթագաւորն Տրզատ ա-  
սելով . Ո՞րպէս առ քեզ պանչելիքն Աստո-  
ծոյ եղեն , եղբայր : Եւ նա պատմեաց զա-  
մենայն սոսոցութեամբ տառջի կոյրսերն , զ'առ  
ի յԱստուծոյ եղեալ մարգասիրութիւնն (և  
զպատուհոս լինելոյն ի կերպարանս անասնոց՝  
պատմեաց տառնց ամօթոյ , և զիլայիցն նա-  
հասակելոց զնամբերութիւն<sup>2</sup> ) և զամենայն

1. Այս տեղ գարձեալ յոյնն նոյնչափ կը կազայ իւր  
թարգմանութեան մէջ , որչափ որ Եմին Հ—+—Ե-յին  
մէջ՝ ընզարժակորէն թարգմանելով զՓաւաստու (Հմիմ .  
Ա. թ. 503): — «Եւ հայրապետն մեծ արքեպիսկոպոս  
ացնարհամուս զբանն » կը թարգմանէ յոյնն . «ու ծ  
նօրիւթուսկոոս մատուցուածուունուս էն ու այսօն ուլաւու  
ունտուն » .

2. Այս փակագծերու մէջ զբուածն հին առցյա աղ-  
բիրէ առնուած չէ . այլ անտարակոյս խմբագրին յա-  
ւելուածն է : Յետ նոյն ժամանակի արժանահաւատ պատ-  
մութիւնը խառնելու Ապարշապատի պանչերայոց զը-  
րցցին հետ , հարկ էր հետեւարար Հայուստանի մէջ ողա-

դործեալսն մի ըստ միոջէ քարողեալ պարագով, և զոր անդէն իսկ յանդիման կայսեր կացեալ զմեծն Գրիգոր ցուցեալ, “Այս այն այրէ, ասաց, յորոյ ի ձեռն ծանեաբ մեր զմարդասիրութիւնն Աստուծոյ, և վասն առնն ժումկալութեան և համբերութեան և նշանացն և զարմանալեաց նովաւ զործեցելոց, : Վասն որոյ զարմացեալ յոյժ աստուծայինն կոստանդիանոս կայսր և խոնարհեցուցեալ զանձն, անկաւ առ ստո սըրբոյն Գրիգորի, զի օրհնեացի ի նմանէ. և ըստ պատշաճի մեծարեալ զնա իրբեւ զիստափանող Քրիստոսի, և զՃրդատ արքայ ընկալաւ եղբայրական սիրով, և իրբեւ զեղբայր համաշունչ և հարազատ սիրեաց զնա, մանաւանդ տեսեալ զնա քրիստոսասէր՝ զաշինս ընդ նմա կռեաց, միջնորդ կալեալ զոր ի Տէր մեր Յիսուս Քրիստոս զհաւատսն, որպէս զի անխախտ (անթերի, ձուռածութած) կայցէ մնասցէ մինչ ի սպառ բարեկամութիւնն՝ ի մէջ թագաւորութեան նոցա. և հաստատեաց զարքայն Հայոց ևս քան զես ի խոստովանութեան սրբոյ Երրորդութեան ։ :

առանձ նշանաւոր իրողութեանց հետ յիշատակել նաև Գոյշիանեայ և Հոփիսիմեանց պանծալի նահատակութիւնը :

Քան զայս աւելի յստակ , որոշ և տրամաբան պատմութիւն չէ կարող լինել , յօրում չերեիր քնառ ոչ մի հետք այն սովորական խարդախութեանց , որոնք յատուկ են բարեպաշտ զբոյցներ յօրինողներուն : Ի բաց առեալ խմբագրողին վերոյիշեալ փոքր և անվեաս յաւելուածը , պատմութիւնն ըստ ամենայնի վաւերականութեան կնիքը կը կրէ վերան : Ով որ կը յիշէ , թէ ինչպիսի՛ շափազանց ազնուութեամբ և շքեղ մեծարանօք կ'ընդունուէին սովորաբար արեելեան հոռվմէական արքունեաց մէջ՝ կովկասու փոքրիկ վայրենի ազգաց քրիստոնեայ ծաղրական իշխաններն և կամ Պրիմու փոքրիկ թագաւորներն , իսկ կոյն կը պարզուի մտաց առջե , թէ Տրդատայ եղած վայելու՝ այլ ոչ քնառ տարօրինակ ընդունելութիւնն՝ ըստ ամենայնի իշխանական սովորութեան համաձայն էր : Այլ նոյն իսկ ոտից համբոյրն , որով կոստանդիիանոս պատուեց զլուսաւորիչ՝ իբր սուրբ խոստովանող մի , քնառ տարօրինակ բան չէր մի այնպիսի իշխանի համար , որ ի Նիկիա կայսերական սեղանին հրաւիրեց եպիսկոպոսները , և խոստովանող վկայից զատարկ ակնակապիճները համբորեց , և որ ի մեծ շինութիւն Նիկողայոսի Ալամաննեայ՝ քահանայապետական

αφαγωστών φρασμάτων· ήρρι θέτει σωνισμόντος έτη·  
· καὶ ὡς εἰ αὐτόπτης ἐπισκόπου γάμου ἀλλότριον  
διορύττοντος γένοιτο, συγκαλύψαι δὲ τῇ πορ-  
φυρῇ τὸ πορανόμιας γενόμενον ὡς δὲ μὴ βλά-  
ψῃ τοὺς θεωμένους τῶν δρωμένων ἢ δψις».

իսկ արքունի զրան եպիսկոպոսի մասին՝  
հայ Աղաթանգեղոսի ընթերցուածն « Սեղ-  
րեստրոս » , յայտնապես միջին դարու մէջ ե-  
ղած խանգարում մ' է , ինչպէս համոզիչ  
փաստերով ցուցուց Տէր Միքելեան<sup>1</sup> (Հայաս-  
տան . Եկեղեցին և Բիւզանդ . ժող . պարա-  
գայք) : Աղաթանգեղոսի պատմութեան ըն-  
տրելագոյն ձեռագիրն , որ կը զանուի Պա-  
րիսու աղղային զրատան մէջ , յունին պէս  
։ Եւսերիոս ունի : Բնականարար սա այլ  
որ չէ՝ բայց միայն Եւսերիոս նիկուիդացին ,  
կոստանդիիանոսի բարեկամն և աղղականն ,  
զոր յաճախ կը զանեմք նորա արքունեաց  
մէջ և որ մահուան անկողնին վերայ մկրտեց  
զինքը : Հարկ է ուշ զնել թագուորին խօս-  
քերուն . և Յաղագս առնն . . . նշանացն և  
սրանչելեաց ի ձեռն նորա եղելոց ։ Սո-  
զոմենաս , որ ինքն միայն բոլորովին անկախ

1. Արիոյն թէ պէտք չէր որ սատրան Զենոբայ գիտ-  
նականօրէն քնառ արժէր շունեցող պատմութիւնը գոր-  
ծածէր:

Ազաթանգեղուէ տեղեկոթիւն կու ասյ մեղ  
Հայաստանի զարձի մասին, կ'ըսէ (թ., թ.).  
և զՀայոց զարձեալ առայ նախ առաջին լեռլ  
քրիստոնեայս. զի ասի գՏրդատայ՝ զիշխանէ  
ազգին այնորիկ՝ ի ձեռն առաւածանչան  
սրբանչելեաց առ առն իւր՝ իսկ և իսկ հա-  
ւասացեալ ի Քրիստոս, և միով քարոզո-  
թեամբ պատուիրեալ ամենայն իշխեցելոց  
խրոց զնոյն և զմի հաւատու պաշտել<sup>1</sup> ։

Մինչև ցարդ ըստմներնուս իր եզրակացութիւն կարաղ ենք հաստատել, թէ բոլորովին պահբական է Տրդատայ և Գրիգորի յարրունիս Առաջանդիանոսի ըրած ուղևորութեան պատմութիւնն. և այսպէս նաև Հայութան յամին Յ 44, հաւանականաբար Սարդիկէի մէջ, խաղաղութեան և միաբանութեան զայն կոեր է Հռովիմայ հետ, որ անեւեց մինչեւ Յ 63 տարին :

Ι. Ἀρμενίους δὲ πάλιν πρότερον ἐποθόρην χριστιανίαν: λέγεται γὰρ Τηριδάτην τὸν ἡγούμενον τούτου τοῦ Εθνους εἰ τινος παραδόξου θεοσημείας συμβίσσης περὶ τὸν αὐτοῦ οίκον ἀμφά τε χριστιανὸν γενέσθαι καὶ πάντας τοὺς ἀρχομένους ὑφ' ἐνὶ κηρύγματι προστάξαι διοίως θρησκεύειν ».

## Բ

Մինչև այս տեղ ըրած ուսումնասիրութեանս մէջ զիտմամբ զանց ըրի յիշատակել հայկական երեղեցոյ ամենահին վկայութիւնը . որ է՝ Եւսեբիոսի երեղեցական պատմութեան այն բացատրութիւնը , յորում կ'ըսուի (Զ , Խ2) . և Նոյնպէս և առ Հայո զբեաց թուղթ վասն ապաշխարութեան , որոց եպիսկոպոս էր Մերուժան<sup>1</sup> : Այն թղթոյս զրոդն էր Ազգերասանորիոյ հայրապետն Դիտնեսիս (248—265) . ուր կը զանուէր ապա սորա ժամանակակից Մերուժանայ եպիսկոպոսական թեմի լը-կուիէն կը համարի զնա Մերաստիոյ մետրապոլիտ , հետեւել տիար պատճառաբանութեան վերայ հաստատուած . և Աւելի Փքուն՝ քան Մեծ Հայոց , ուստի և Մերաստիա մայրաբազարին եպիսկոպոս էր Մերուժան՝ երրորդ զարու կիսուն<sup>2</sup> : Մերաստիոյ , Մերաստոպոլսոյ , Նիկոպոլսոյ , Սատաղայի և Ա

1. Καὶ τοῖς κατὰ Ἀρμενίαν ὡςαύτως περὶ μετανοίας ἐπιστέλλει ὃν ἐπεσκόπευε Μερουζάնης .

2. Armeniæ utique minoris potius quam maioris, adeoque Sebastes metropolis sseculo tertio medio episcopus erat Meruzanes. (Le Quien, O. Chr. I, 419).

Հայոց ուրիշ եպիսկոպոսանիստ քաղաքաց եւ պիտիոպոսներու ցանկերը համեմատելով իրարու հետ՝ կը զանենք որ արդէն Գ, Դ և Ե գարուց մէջ, յիշեալ աեղեաց առաջնորդը՝ որչափ որ զիտենք՝ բոլորն այլ յոյն – հռովմէական կամ Աստուածաշնչի բնիկ անուններ կը կրեն. նոյնը կարող ենք ըսել նաև Մելիտինէի թեմին համար։ Ապա կը հետեւ աստի, թէ Մերուժանայ եպիսկոպոսանիստ քաղաքը պէաք է փնտոել մեծ Հայոց, մէջ, որովհետեւ « Մերուժան » անունն իսկ բնիկ ազգային է և հայկական։ Սոյն անունը կը կրէր նաև այն պարսկամոլ ուրացող արծրունի իշխանն, որուն համար կ'ըսէ Փաւատոս։ « մի ոմն ի նախարարաց մեծամեծացն Մերուժան անուն արծրունի » (Գ, ԻԳ)։ Զուր աեղ փնտոեցի ուրիշ Մերուժան մի հայկական հին զրականութեան և պատմութեան մէջ։

Յայտնի է թէ սոյն անունս յատուկ և յայտարար է այն հին նախարարական ցեղին, որ Աեներերիմէն սերեալ կը համարուի։ Արծրունիք կը բնակէին և կ'իշխէին ի բնէ մարական<sup>1</sup> Վասպուրականի մէջ, զոր միայն Տիղբան՝ արքայից արքայն կամ իւր նախորդ-

1. Որ կը պատկանէր Ասբովատեն–Ասբովատկանի։

ներէն՝ մին՝ միացուց տէրութեան հետ : Այս հարաւ—արևելեան նահանգը միշտ իրեն առանձին քոյութիւն մ'ունեցեր է բաղարականորէն : Շատ վերջը, ամիրապետներու ժամանակ, երբ Հայաստան ազատեցաւ արաբացոց իշխանութենէն և հաստատուեցան բազրատունի արքայից արքայք (Յաշուլէտէ Յասուլէտ), ի նմին ժամանակի կ'իշխէին նաև Արծրունիք Վասպուրականի մէջ՝ իրր անկախ փոքրիկ թագուորք (reguli), զոր յոյնք՝ իշխան Վասպուրականի<sup>4</sup> կը կոչէին : Անտարակոյս Արքուժան եպիսկոպոսն այլ Արծրունեաց ցեղին շառաւիդ մ'էր :

Դժբախտաբար Ազաթանկեղոսի Հայոց գարձի պատմութիւնն կը լուէ բոլորովին հարաւ—արևելեան կողմերու մասին : Հաւանականաբար այն գաւառներուն գարձն եղեր է Ասորուց կողմէն (Եղեսիա կամ Ածրին), շատ աւելի կանուխ քան աշխարհին միւս զլիաւոր մասն, և այսու միայն կարելի է բացատրել Աներուժան եպիսկոպոսին գոյութիւնը վաղ իսկ յամին 250.

Եպիսկոպոսաց ամենահին ցուցակն՝ զոր

4. Ἀρχων Βασπαρακαձ (Constant. Porph. III, 187, 15), և կամ, ἀρχων τοῦ Ἀσπουραկձն ἦγουν τοῦ Βασπαραկձν (Constant. Porph. I, 687,4).

ունինք ձեռքերնիս՝ և այն որ կը զանոի  
Եղիշէի վարդապետի զբաց մէջ (Պատմ. Վար-  
դանայ, հն, հրատ. ի Անհետիկ, 1893)՝  
յամին 450. Եղիշակոպոսաց թիւն բարձր-  
ցեր է 47ի (ի միտուին առած նաև կաթողի-  
կոսը), մինչ Աղաթանգեղոսի զբաց մէջ մի-  
այն 42 համ կը յիշուին։ Առապարական  
աշխարհին կը պատկանին շորս հետեւալըն։

Ա. Եղիշակոպոսն Մարդաստանի,

Բ. Եղիշակոպոսն Արծրունեաց,

Գ. Եղիշակոպոսն Աշտունեաց,

Դ. Եղիշակոպոսն Անձեւացեաց։

Տարակոյս շի կայ թէ Դ. Պարտն մէջ տա-  
կաբին զոյութիւն շունէր Աշտունեաց Եղիշա-  
կոպոսական թերին, որովհետեւ Ա. Յակովբայ  
մծբնացւոյ ժամանակ զեռ բոլորովին հեթա-  
նոս էին նոյն զատաբին քնակիչը. հաւանա-  
կանաբար յառաջն բովանդակ նահանգին մէջ  
մէկ Եղիշակոպոս միայն կայր, և առ էր միշտ  
Մերուժանն։

Առա կրնանք հետեւցունել՝ թէ այս 47  
Եղիշակոպոսներէն

1) 42 համբ հաստատեր է նոյն ինքն  
Ո. Գրիգոր,

2) 4 հատ Ալասդորականի եպիսկոպոսունքը էին,

3) իսկ մէկն այլ հեռաւոր գաւառի մի եպիսկոպոս էր (թերեւս Մոկաց) :

Սակայն աւելի մանրամասն քննութիւն մի կը ցուցընէ,թէ շատ սխալ է սոյնպիսի կազմութիւն մի : Աշխարհապօքէն 43 կայուն եպիսկոպոսունք այս կերպով կը բաժնուին .

Ա. ԱՅՐԱՐԱՏ

{ 1 Բաղրեանդ ,  
2 Բասեն ,  
3 Վանանդ ,  
4 Ամատունիք :

Բ. ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ

{ 5 Տարոն ,  
6 Մանազկերտ ,  
7 Բղնունիք ,  
8 Տուրուբերան ,  
9 Մարդ-Աղի ,  
10 Աղանունիք :

Գ. Եպիսկոպոսը  
ամբողջ նահանգաց .

{ 11 Տայք ,  
12 Սիւնիք ,  
13 Մոկք :

Ինչպէս կը տեսնուի , կատարեալ ցուցակ





